

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության  
և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև թիվ CAM 1024 01 Շ վարկային  
համաձայնագրի պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն**



ՁՅԳ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ CAM 1024 01 C

---

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ամսաթիվ՝ 2024 թվականի հունիսի 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

(Վարկառու)

ԵՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

(Վարկառու)

միջև

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ.....	8
1.1 Սահմանումները.....	8
1.2 Մեկնաբանումը .....	8
2.ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	8
2.1 Վարկային միջոցները .....	8
2.2 Նպատակը .....	8
2.3 Պատասխանատվությունից ազատումը .....	9
2.4 Նախապայմանները.....	9
3.Ֆինանսական միջոցների մասհանումը .....	10
3.1 Մասհանման գումարը.....	10
3.2 Մասհանման հայտը .....	10
3.3 Վճարման ավարտը .....	11
3.4 Վճարումներ կատարելու կարգը.....	11
3.5 Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետը .....	11
4. Տոկոսները .....	12
4.1 Տոկոսադրույքը .....	12
4.2. Տոկոսի հաշվարկը եւ վճարումը.....	15
4.3 Ժամկետանց վճարման եւ պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը.....	16
4.4 Տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկությունները փոխանցելը .....	17
4.5 Փաստացի համաշխարհային դրույքաչափը ( <i>Taux Effectif Global</i> ).....	17
5. Տոկոսների հաշվարկման փոփոխությունը .....	18
5.1 Շուկայի ապակայունացումը .....	18
5.2 Հրապարակված դրույքաչափի փոխարինում .....	19
6. ՎՃԱՐՆԵՐԸ.....	22
6.1. Կոմիսիոն վճարները.....	22
6.2 Գնահատման վճարը .....	23
7. Մարումը.....	23
8. Կանխավճարը եւ չեղարկումը.....	24
8.1 Կամավոր կանխավճարը .....	24
8.2 Պարտադիր կանխավճարը.....	25
8.3 Վարկառուի կողմից չեղարկումը .....	26
8.4 Վարկատուի կողմից չեղարկումը .....	26

8.5 Սահմանափակումները .....	27
9. Լրացուցիչ վճարումներ կատարելու պարտավորությունները .....	27
9.1 Ծախսերը եւ ծախքերը .....	28
9.2 Չեղարկման համար փոխհատուցումը .....	28
9.3. Կանխավճարի մասով փոխհատուցումը .....	29
9.4 Հարկերը եւ տուրքերը .....	29
9.5 Լրացուցիչ ծախսերը .....	30
9.6 Արժույթի մասով փոխհատուցումը .....	31
9.7 Վճարումների կատարման ամսաթվերը .....	31
10. Հայտարարությունները եւ Կ երաշխիքները .....	32
10.1 Լիազորությունները .....	32
10.2 Վավերությունն ու որպես ապացույց թույլատրելիությունը .....	32
10.3 Պարտավորությունները .....	33
10.4 Համաձայնագիրը չներկայացնելը կամ դրոշմատուրքերի բացակայությունը .....	33
10.5 Ֆինանսական միջոցների փոխանցումը .....	34
10.6 Այլ պարտավորությունների հետ հակասության բացակայությունը .....	34
10.7 Կարգավորող իրավունքը եւ կիրարկումը .....	34
10.8 Պարտավորությունների չկատարման բացառումը .....	35
10.9 Ապակողմնորոշիչ տեղեկությունների բացառումը .....	35
10.10. <i>Pari Passu</i> դասակարգումը .....	35
10.11 Ֆինանսական միջոցների օրինական ծագումը եւ Արգելված գործելակերպերը .....	35
10.12 Էական բացասական ազդեցության բացառումը .....	36
11. ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	36
11.1 Համապատասխանությունն օրենքներին, կանոնակարգերին եւ պարտավորություններին .....	36
11.2 Թույլտվությունները .....	37
11.3 Ծրագրի իրականացումը եւ պահպանումը .....	37
11.4 Բնապահպանական եւ սոցիալական պատասխանատվությունը .....	37
11.5 Լրացուցիչ ֆինանսավորումը .....	38
11.6 <i>Pari Passu</i> դասակարգումը .....	38
11.7 Ստուգումները .....	38
11.8 Ծրագրի գնահատումը .....	39
11.9 Ֆինանսական պատժամիջոցների ցանկերը եւ Էմբարգոն .....	39
11.10 Ֆինանսական միջոցների օրինական ծագումը, Արգելված գործելակերպերի բացառումը .....	40
11.11. Ուսումնասիրությունը .....	41
11.12. Տեսանելիությունը եւ հաղորդակցությունը .....	42
12. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	42

12.1 Ֆինանսական տեղեկությունները.....	42
12.2 Ծրագրի իրականացումը .....	42
12.3 Մշտադիտարկումը.....	42
12.4 Համաֆինանսավորումը.....	43
12.5 Լրացուցիչ տեղեկությունները.....	43
<b>13. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ.....</b>	<b>43</b>
13.1 Պարտավորությունների չկատարման դեպքերը.....	43
13.2 Վարկի անհապաղ մարումը.....	47
13.3 Պարտավորությունների չկատարման դեպքի մասին ծանուցումը.....	48
<b>14. ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ.....</b>	<b>48</b>
14.1 Վճարումները .....	48
14.2 Հաշվանցումը.....	48
14.3 Բանկային օրերը.....	49
14.4 Վճարման արժույթը.....	49
14.5 Տոկոսների հաշվարկման բազան .....	49
14.6 Վճարման վայրը.....	50
14.7 Վճարային համակարգերի խափանումը.....	51
<b>15. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....</b>	<b>52</b>
15.1 Լեզուն.....	52
15.2 Հավաստումներն ու որոշումները.....	52
15.3 Մասնակի անվավերությունը.....	53
15.4 Իրավունքից հրաժարվելու բացառումը .....	53
15.5. Զիջումը.....	53
15.6. Իրավաբանական ուժը .....	54
15.7. Ամբողջական համաձայնագիրը.....	54
15.8. Փոփոխությունները.....	54
15.9. Գաղտնիությունը. Տեղեկությունների բացահայտումը .....	54
15.10. Վաղեմության ժամկետը.....	55
15.11. Դժվարությունները .....	56
<b>16. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ .....</b>	<b>56</b>
16.1 Գրավոր ծանուցումները եւ հասցեները.....	56
16.2 Հանձնումը .....	57
16.3. Էլեկտրոնային հաղորդագրությունները.....	58
<b>17. ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԴՈՄԻՑԻԼԻ [ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵԻ] ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ .....</b>	<b>58</b>
17.1 Կարգավորող իրավունքը.....	58

17.2 Արբիտրաժը .....	58
17.3 Դատական փաստաթղթի հանձնումը .....	59
18.ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ.....	59
19.ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .....	59
ՀԱՎԵԼՎԱԾ 1Ա. Սահմանումները .....	63
ՀԱՎԵԼՎԱԾ 1Բ. Մեկնաբանման ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ .....	74
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Ծրագրի նկարագրությունը.....	76
ՀԱՎԵԼՎԱԾ 3Ա. Ֆինանսավորման պլանը.....	80
ՀԱՎԵԼՎԱԾ 3Բ. Քաղաքականության մատրիցան .....	82
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Նախապայմանները .....	100
ՀԱՎԵԼՎԱԾ 5Ա. ՄԱՍՀԱՆՄԱՆ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ .....	103
ՀԱՎԵԼՎԱԾ 5Բ. ՄԱՍՀԱՆՄԱՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՁԵՎ.....	106
ՀԱՎԵԼՎԱԾ 5Գ. ԴՐՈՒՅՔԱԶԱՓԻ ՓՈԽԱՐԿՄԱՆ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ.....	108
ՀԱՎԵԼՎԱԾ 5Դ. Դրույքաչափի փոխարկման հաստատման ձեւը.....	109
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՔՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՏՈՒԻ ԿԱՅՔՈՒՄ .....	111

## ՎԱՐԿ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### 1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ՝

ի դեմս պրն Վահե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ՝ որպես Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար, որը պատշաճ կերպով լիազորված է ստորագրելու սույն Համաձայնագիրը,

(Հայաստանի Հանրապետության կառավարություն կամ Վարկառու)

**ԵՎ**

2) **ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ՝** ֆրանսիական հանրային հաստատություն, որը գործում է Ֆրանսիայի իրավունքին համապատասխան, եւ որի իրավաբանական հասցեն է՝ Ֆրանսիա, 75598 Փարիզ Cedex 12, Ռոլան Բարթ 5՝ գրանցված Փարիզի առետրային եւ ընկերությունների ռեգիստրում 775 665 599 համարով՝ ի դեմս Մաթյո ՎԱՍՅԵՐԻ՝ որպես Զարգացման ֆրանսիական գործակալության՝ Հարավային Կովկասի Եվրասիայի տարածաշրջանային տնօրեն, որը պատշաճ կերպով լիազորված է ստորագրելու սույն Համաձայնագիրը,

(**ԶՖԳ** կամ Վարկատու)

**ՄԻՋԵՎ**

(այսուհետ միասին՝ **Կողմեր**, եւ յուրաքանչյուրն առանձին՝ **Կողմ**),

**ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ՝**

Ա) Վարկառուն նախատեսում է իրականացնել Հայաստանում հանրային ծառայությունների մատուցման արդյունավետությանն ու կայունությանը, ինչպես նաեւ ֆինանսական հատվածի զարգացման բարելավմանն ուղղված՝ վարկի տեսքով բյուջետային աջակցությամբ ծրագիր (**Ծրագիր**), ինչպես հետագայում նկարագրված է 2-րդ հավելվածում *Ծրագրի Նկարագրությունը* (Ծրագրի նկարագրությունը):

Բ) Վարկառուն դիմել է Վարկատուին՝ Ծրագրի ֆինանսավորմանը մասնակցելու նպատակով վարկային միջոցներ տրամադրելու համար:

Գ) Վարկատուն, որը Ֆրանսիայի պետության զարգացման աջակցության քաղաքականության իրականացմանը նպաստող հանրային կազմակերպություն է (համաձայն Ֆրանսիայի դրամավարկային եւ ֆինանսական օրենսգրքի L. 515-13 հոդվածի), իր շահագրգռվածությունն է հայտնել մասնակցելու Ծրագրի ֆինանսավորմանը:

Դ) ԶՖԳ-ի Կառավարման խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ C20231324 որոշման համաձայն՝ Վարկատուն համաձայնել է Վարկառուին տրամադրել վարկային միջոցներ՝ սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխան:

**ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵԿԱՆ  
ՀԵՏԵՎՅԱԼԻ ՇՈՒՐՋ.**

**1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ**

1.1 Սահմանումները

Սույն Համաձայնագրում մեծատառով օգտագործվող բառերը եւ արտահայտությունները (այդ թվում՝ վերոգրյալ ներածական դրույթներում եւ հավելվածներում բառերը եւ արտահայտությունները) կիրառվում են 1Ա հավելվածով (Սահմանումները) դրանց վերագրվող նշանակությամբ՝ բացառությամբ սույն Համաձայնագրով նախատեսված այլ դեպքերի:

1.2 Մեկնաբանումը

Սույն Համաձայնագրում օգտագործվող բառերը եւ արտահայտությունները մեկնաբանվում են 1Բ հավելվածի (*Մեկնաբանման սկզբունքները*) դրույթներին համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ:

**2. ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

2.1 Վարկային միջոցները

Սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխան՝ Վարկատուն Վարկառուին տրամադրում է յոթանասունհինգ միլիոն եվրո (75 000 000 եվրո) առավելագույն ընդհանուր գումարի չափով Վարկային միջոցներ:

2.2 Նպատակը

Վարկային միջոցների նպատակն է ֆինանսավորել Վարկառուի՝ Ծրագրի իրականացման համար նախատեսված բյուջեն, ինչպես նկարագրված է 2-րդ հավելվածում (*Ծրագրի նկարագրությունը*)՝ ՅԱ հավելվածում (*Ֆինանսավորման պլանը*) նկարագրված ֆինանսավորման պլանին եւ 3Բ հավելվածում

(Քաղաքականության մատրիցան) նկարագրված Հանրային քաղաքականության մատրիցային համապատասխան:

### 2.3 Պատասխանատվությունից ազատումը

Վարկատուն պատասխանատվություն չի կրում փոխառված որեւէ գումարի օգտագործման համար, որը հակասում է սույն Համաձայնագրի դրույթներին:

### 2.4 Նախապայմանները

ա) Վարկառուն Ստորագրման ամսաթվից ոչ ուշ Վարկատուին է տրամադրում 4-րդ հավելվածի (Նախապայմանները) I մասով սահմանված բոլոր փաստաթղթերը:

բ) Մասհանման հայտը կարող է ներկայացվել Վարկատուին, եթե՝

i) Վարկատուն ստացել է 4-րդ հավելվածի (Նախապայմանները) II մասում թվարկված բոլոր փաստաթղթերը եւ ծանուցել է Վարկառուին, որ այդ փաստաթղթերն ըստ ձեւի եւ բովանդակության ընդունելի են.

ii) Մասհանման հայտի ամսաթվի եւ համապատասխան Մասհանման նպատակով առաջարկված Մասհանման ամսաթվի դրությամբ տեղի չի ունեցել Վճարային համակարգերի խաթարման դեպք, եւ սույն Համաձայնագրով սահմանված պայմանները բավարարվել են, այդ թվում՝

1) Պարտավորությունների չկատարման որեւէ դեպք կամ պարտադիր կանխավճարի որեւէ դեպք չի շարունակվել կամ տեղի չի ունեցել առաջարկվող Մասհանման արդյունքում,

2) որեւէ Համաֆինանսավորող չի կասեցրել Ծրագրի հետ կապված իր վճարումները.

3) Վարկառուն տեղյակ է վճարման իր բոլոր պարտավորությունների, այդ թվում՝ Համաձայնագրով նախատեսված վճարների եւ միջնորդավճարների մասին.

4) Մասհանման հայտը ներկայացվել է 3.2 կետի (Մասհանման հայտը)

պայմաններին համապատասխան.

5) 10-րդ կետի (Հայտարարությունները եւ երաշխիքները) առնչությամբ Վարկառուի կողմից արված յուրաքանչյուր հայտարարություն ճիշտ է:

### **3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՀԱՆՈՒՄԸ**

#### 3.1 Մասհանման գումարը

Վարկային միջոցները Վարկառուին են տրամադրվում Վարկի տրամադրման ժամանակահատվածում՝ մեկ (1) Մասհանմամբ:

#### 3.2 Մասհանման հայտը

2.4 «բ» կետով (*Նախապայմանները*) սահմանված պայմանները բավարարելու դեպքում Վարկառուն կարող է ստանալ Վարկային միջոցներ՝ Վարկատուին ներկայացնելով պատշաճորեն լրացված Մասհանման հայտ: Մասհանման յուրաքանչյուր հայտ Վարկառուի կողմից ներկայացվում է 16.1 կետում (*Գրավոր ծանուցումները եւ հասցեները*) նշված հասցեում գտնվող ՋՖԳ-ի գրասենյակի տնօրենին:

Մասհանման յուրաքանչյուր հայտ անհետկանչելի է եւ համարվում է պատշաճորեն լրացված, եթե՝

ա) Մասհանման հայտը հիմնականում համապատասխանում է 5Ա հավելվածում (Մասհանման հայտի ձեւը) սահմանված ձեւին.

բ) Մասհանման հայտը Վարկատուն ստանում է ոչ ուշ, քան Ֆինանսական միջոցների Մասհանման վերջնաժամկետից տասնհինգ (15) Բանկային օր առաջ.

գ) Մասհանման առաջարկվող ամսաթիվը ներառում է Վարկի տրամադրման ժամանակահատվածում ընկած Բանկային օրը.

դ) Մասհանման գումարը համապատասխանում է 3.1 կետին (*Մասհանման գումարը*). եւ

ե) Մասհանման նպատակով 4-րդ հավելվածի (*Նախապայմանները*) II

մասում սահմանված բոլոր փաստաթղթերը կցվում են Մասհանման հայտին, համապատասխանում են վերոնշյալ հավելվածին եւ 3.4 կետի *(Վճարումներ կատարելու կարգը)* պահանջներին, ինչպես նաեւ ունեն Վարկատուի համար ընդունելի ձեւ եւ բովանդակություն:

### 3.3 Վճարման ավարտը

14.7 կետի (Վճարային համակարգերի խաթարում) համաձայն՝ եթե սույն Համաձայնագրի 2.4 «բ» կետով *(Նախապայմանները)* սահմանված բոլոր պայմանները բավարարվել են, ապա Վարկատուն պետք է պահանջվող Մասհանումը Վարկառուի համար հասանելի դարձնի Մասհանման ամսաթվից ոչ ուշ:

Վարկատուն պետք է Վարկառուին տրամադրի Մասհանումը հաստատող գրություն՝ 5Բ հավելվածում *(Մասհանման եւ դրույքաչափի հաստատման ձեւը)* սահմանված ձեւով:

### 3.4 Վճարումներ կատարելու կարգը

Մասհանման միջոցները պետք է փոխանցվեն Վարկառուի՝ Հայաստանի կենտրոնական բանկում վարվող հաշվին, որի մանրամասները Վարկառուն Վարկատուին պետք է պատշաճ ծանուցի Մասհանման հայտում:

### 3.5 Ֆինանսական միջոցների մասհանման վերջնաժամկետը

Վարկային միջոցների ամբողջական մասհանումը պետք է կատարվի ամենաուշը Ֆինանսական միջոցների Մասհանման վերջնաժամկետի օրը:

Եթե ամբողջական մասհանում չի կատարվում մինչեւ վերոնշյալ ամսաթիվը, ապա Վարկատուն կարող է չեղարկել Վարկային միջոցները՝ 8.4 կետին *(Վարկատուի կողմից չեղարկումը)* համապատասխան:

Ֆինանսական միջոցների Մասհանման վերջնաժամկետը չի կարող երկարաձգվել առանց Վարկատուի նախնական համաձայնության:

Մասհանման վերջնաժամկետի ցանկացած երկարաձգում i) կախված է

վճարներից եւ (կամ) նոր ֆինանսական պայմաններից, որոնք կիրառելի կլինեն Վարկային սահմանաչափի մնացորդի Մասհանումների նկատմամբ, եւ ii) գրավոր ձեւակերպում է Կողմերի միջեւ:

#### **4. ՏՈԿՈՍՆԵՐԸ**

##### 4.1 Տոկոսադրույքը

##### 4.1.1. Տոկոսադրույքի ընտրությունը

Մասհանման համար Վարկառուն կարող է ընտրել Ֆիքսված տոկոսադրույք կամ Լողացող տոկոսադրույք, որը կկիրառվի Մասհանման հայտում նշված գումարի նկատմամբ՝ ընտրված, այսինքն՝ Ֆիքսված կամ Լողացող տոկոսադրույքը նշելով 5Ա հավելվածում (*Մասհանման հայտի ձեւը*) սահմանված ձեով Վարկատուին տրամադրվող Մասհանման հայտում՝ հետեւյալ պայմաններով.

##### ա) Լողացող տոկոսադրույք

Վարկառուն կարող է ընտրել Լողացող տոկոսադրույք, որը կլինի տարեկան տոկոսադրույքի գումարը, որը հավասար է՝

- վեցամսյա ԵՎՐԻԲՈՐ-ի հանրագումարին կամ ըստ իրավիճակի՝ Փոխարինված բազային դրույքաչափին՝ գումարած Համաձայնագրի 5-րդ կետի (Տոկոսների հաշվարկման փոփոխությունը) դրույթներին համապատասխան սահմանված ցանկացած ճշգրտման թույլատրելի սահմանաչափ, եւ

##### - Թույլատրելի սահմանաչափին:

Չնայած վերոնշյալին՝ Մասհանման համար եւ այն դեպքում, երբ Տոկոսների հաշվարկման ժամանակահատվածը պակաս է հարյուր երեսունհինգ (135) օրվանից, կիրառվող ԵՎՐԻԲՈՐ-ը կազմում է՝

- մեկամսյա ԵՎՐԻԲՈՐ-ը կամ ըստ իրավիճակի՝ Փոխարինված բազային դրույքաչափը՝ գումարած Համաձայնագրի 5-րդ կետի (*Տոկոսների հաշվարկման փոփոխությունը*) դրույթներին համապատասխան սահմանված ցանկացած ճշգրտման թույլատրելի սահմանաչափ, եթե Տոկոսների հաշվարկման առաջին

ժամանակահատվածը պակաս է վաթսուն (60) օրվանից, կամ

- եռամսյա ԵՎՐԻԲՈՐ-ը կամ ըստ իրավիճակի՝ Փոխարինված բազային դրույքաչափը՝ գումարած Համաձայնագրի 5-րդ կետի (*Տոկոսների հաշվարկման փոփոխությունը*) դրույթներին համապատասխան սահմանված ցանկացած Ճշգրտման թույլատրելի սահմանաչափ, եթե Տոկոսների հաշվարկման առաջին ժամանակահատվածը տատանվում է վաթսունից (60) հարյուր երեսունհինգ (135) օրվա միջակայքում:

բ) Ֆիքսված տոկոսադրույք

Եթե հայցվող Մասհանման գումարը հավասար է երեք միլիոն եվրոյի (3,000,000 եվրո) կամ դրանից ավելի է, ապա Վարկառուն կարող է այդ հայցվող Մասհանման համար ընտրել Ֆիքսված տոկոսադրույք: Ֆիքսված տոկոսադրույքը Ֆիքսված կողմնորոշիչ դրույքաչափն է, որն Ինդեքսային դրույքաչափի ցանկացած տատանման հետեւանքով ավելացել կամ նվազել է Դրույքաչափի սահմանման ստորագրման ամսաթվից մինչեւ Մասհանման համապատասխան Դրույքաչափի սահմանման ամսաթիվը:

Վարկառուն կարող է Մասհանման հայտի մեջ նշել Ֆիքսված տոկոսադրույքի առավելագույն չափը: Եթե Դրույքաչափի սահմանման ամսաթվի դրությամբ հաշվարկված Ֆիքսված տոկոսադրույքը գերազանցում է համապատասխան Մասհանման հայտում նշված՝ Ֆիքսված տոկոսադրույքի առավելագույն չափը, ապա այդ Մասհանման հայտը չեղարկվում է, իսկ չեղարկված Մասհանման հայտում նշված Մասհանման տոկոսադրույքի չափը մուտքագրվում է Վարկային սահմանաչափի մնացորդին:

4.1.2. Նվազագույն Տոկոսադրույքը

4.1.1. կետին (*Տոկոսադրույքի ընտրությունը*) համապատասխան սահմանված Տոկոսադրույքը, անկախ ընտրման տարբերակից, չպետք է լինի տարեկան զրո ամբողջ քսանհինգ տոկոսից (0.25%) պակաս՝ չնայած Տոկոսադրույքի նվազեցումներին:

#### 4.1.3. Լողացող տոկոսադրույքի փոխարկումը Ֆիքսված տոկոսադրույքի

Մասհանման նկատմամբ կիրառվող Լողացող տոկոսադրույքը փոխարկվում է Ֆիքսված տոկոսադրույքի՝ ստորեւ շարադրված պայմաններով.

ա) Դրույքաչափի փոխարկում Վարկառուի պահանջով կամ Վարկատուի նախաձեռնությամբ՝ Վերակազմավորման դեպքում

Վարկառուն կարող է ցանկացած պահի պահանջել, որ Վարկատուն Մասհանման նկատմամբ կիրառվող Լողացող տոկոսադրույքը փոխարկի Ֆիքսված տոկոսադրույքի՝ պայմանով, որ այդ Մասհանման գումարը հավասար է երեք միլիոն եվրոյի (3,000,000 եվրո) կամ գերազանցում է երեք միլիոն եվրոն:

Այդ նպատակով Վարկառուն Վարկատուին է ուղարկում Դրույքաչափի փոխարկման հայտ՝ ըստ էության 59 հավելվածում (Փոխարկման հայտի ձեւը) սահմանված ձեւով: Վարկառուն Դրույքաչափի փոխարկման վերաբերյալ գրության մեջ կարող է նշել Ֆիքսված տոկոսադրույքի առավելագույն չափը: Եթե Դրույքաչափի սահմանման ամսաթվի դրությամբ հաշվարկված Ֆիքսված տոկոսադրույքը գերազանցում է Դրույքաչափի փոխարկման հայտում Վարկառուի կողմից նշված Ֆիքսված տոկոսադրույքի առավելագույն չափը, ապա Դրույքաչափի փոխարկման այդ հայտն ինքնաբերաբար չեղարկվում է:

Ֆիքսված տոկոսադրույքն ուժի մեջ է մտնում Դրույքաչափի սահմանման ամսաթվից երկու (2) Բանկային օր հետո:

Վարկառուի վրա բացասաբար անդրադարձող եւ Վարկային միջոցների վրա ազդեցություն ունենալու հավանականություն ունեցող Վերակազմավորման կամ Վերակազմավորման նախագծի դեպքում եւ Կողմերի շահերի վրա հիմնված Վերակազմավորման իրականացումը դյուրացնելու համար Վարկատուն կարող է Լողացող տոկոսադրույքը փոխարկել Մասհանման նկատմամբ կիրառվող Ֆիքսված տոկոսադրույքի: Վարկատուն Վարկառուին տեղեկացնում է ցանկացած այդպիսի փոխարկման մասին:

բ) Դրույքաչափի փոխարկման կարգը

Մասհանման նկատմամբ կիրառվող Ֆիքսված տոկոսադրույքը սահմանվում է վերոհիշյալ 4.1.1 (ii) կետին (*Ֆիքսված տոկոսադրույքը*) համապատասխան՝ վերոնշյալ (i) ենթապարբերության մեջ նշված Դրույքաչափի սահմանման ամսաթվով:

Վարկատուն Վարկառուին է ուղարկում Դրույքաչափի փոխակերպումը հաստատող գրություն՝ ըստ էության 5Դ հավելվածում (Դրույքաչափի փոխարկման հաստատման ձեւը) սահմանված ձեւով:

Դրույքաչափի փոխարկումը վերջնական է եւ անվճար:

#### 4.2. Տոկոսի հաշվարկը եւ վճարումը

Վարկառուն յուրաքանչյուր Վճարման ամսաթվին պետք է վճարի Մասհանման համար հաշվեգրված տոկոսագումարը:

Չհակասելով 14.3 կետին (Բանկային օրերը), եթե Վճարման ամսաթիվը Հայաստանի Հանրապետությունում բանկային օր չէ, Վարկառուն իրավունք է վերապահում վճարումը կատարելու Վճարման ամսաթվից մինչեւ երկու (2) բանկային օր առաջ: Կասկածից զերծ մնալու նպատակով դա չպետք է ազդի Տոկոսների հաշվարկման որեւէ ժամանակահատվածի վրա եւ չպետք է համարվի Վարկային միջոցների կամավոր կանխավճար:

Համապատասխան Վճարման ամսաթվին Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածի համար Վարկառուի կողմից վճարման ենթակա տոկոսի չափը հավասար է Վարկառուի կողմից Մասհանման համար Մայր գումարի չմարված մնացորդի մասով վճարման ենթակա տոկոսագումարին: Մասհանման համար Վարկառուի կողմից վճարման ենթակա տոկոսագումարը հաշվարկվում է՝ հաշվի առնելով՝

ա) համապատասխան Մասհանման համար Վարկառուի կողմից վճարման ենթակա Մայր գումարի չմարված մնացորդը՝ Վճարման ամսաթվին անմիջապես

նախորդող ամսաթվի դրությամբ, կամ Տոկոսների հաշվարկման առաջին ժամանակահատվածի դեպքում՝ Մասհանման համապատասխան ամսաթվի դրությամբ.

բ) այն օրերի ճշգրիտ քանակը, որոնք առաջացել են Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածում՝ հիմք ընդունելով տարեկան երեք հարյուր վաթսուներկու (360) հաշվարկը. եւ

գ) 4.1 կետի (Տոկոսադրույքը) դրույթներին համապատասխան որոշված կիրառելի Տոկոսադրույքը:

#### 4.3 Ժամկետանց վճարման եւ պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը

ա) Չվճարված բոլոր գումարների մասով (բացի տոկոսներից) ժամկետանց վճարման եւ պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը

Եթե Վարկառուն չի վճարում Վարկատուին վճարման ենթակա՝ սույն Համաձայնագրով նախատեսված որեւէ գումար (մայր գումարի մարում, Կանխավճարի փոխհատուցում, որեւէ տեսակի վճար կամ չնախատեսված ծախս՝ բացառությամբ չվճարված ժամկետանց տոկոսների) դրա վճարման ամսաթվին, ապա ժամկետանց գումարի մասով օրենսդրությամբ թույլատրված չափով հաշվեգրվում է տոկոս՝ մարման ամսաթվից մինչեւ փաստացի վճարման ամսաթիվը ներառող ժամանակահատվածի համար (ինչպես արբիտրաժային վճից առաջ, այնպես էլ հետո, եթե առկա է այդպիսի վճիո)՝ Տոկոսի հաշվարկման ընթացիկ ժամանակահատվածի (պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոս) նկատմամբ կիրառելի Տոկոսադրույքով, որին գումարվում է երեք ամբողջ հինգ տոկոսային կետ (3.5%) (ժամկետանց վճարման դեպքում հաշվարկվող տոկոս): Վարկատուի կողմից նախապես որեւէ պաշտոնական ծանուցման անհրաժեշտություն չի առաջանում:

բ) Չվճարված գումարների մասով ժամկետանց վճարման եւ պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը

Այն տոկոսագումարների նկատմամբ, որոնք չեն վճարվել սահմանված ժամկետում, օրենքով թույլատրված չափով հաշվարկվում են տոկոսներ՝ Տոկոսի հաշվարկման ընթացիկ ժամանակահատվածի (պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոս) նկատմամբ կիրառելի Տոկոսադրույքով, որին գումարվում է երեք ամբողջ հինգ տոկոսային կետ (3.5%) (ժամկետանց վճարման դեպքում հաշվարկվող տոկոս) այնքանով, որքանով այդ Տոկոսը ենթակա է եղել վճարման մեկ (1) տարվա ընթացքում: Վարկատուի կողմից նախապես որեւէ պաշտոնական ծանուցման անհրաժեշտություն չի առաջանում:

Վարկառուն վճարում է 4.3 կետով (4.3 ժամկետանց վճարման եւ պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոս*ժամկետանց վճարման եւ պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը*) սահմանված ցանկացած չմարված տոկոս Վարկատուի կողմից ներկայացված պահանջից անմիջապես հետո կամ չմարված գումարի վճարման ժամկետին հաջորդող յուրաքանչյուր վճարման ամսաթվին:

գ) ժամկետանց վճարման կամ պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսների որեւէ վճարում Վարկատուին չի ենթադրում Վարկառուին տրամադրվող՝ վճարման որեւէ ժամկետի երկարաձգում եւ Վարկատուի կողմից սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքներից հրաժարում չէ:

#### 4.4 Տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկությունները փոխանցելը

Տոկոսադրույք սահմանելիս Վարկատուն այդ մասին անհապաղ ծանուցում է Վարկառուին՝ սույն Համաձայնագրին համապատասխան:

#### 4.5 Փաստացի համաշխարհային դրույքաչափը (*Taux Effectif Global*)

Ֆրանսիայի սպառողների իրավունքների օրենսգրքի L.314-1-ից L.314-5 եւ հաջորդող հոդվածներով, ինչպես նաեւ Ֆրանսիայի դրամավարկային եւ ֆինանսական օրենսգրքի L.313-4 հոդվածով սահմանված պահանջները բավարարելու նպատակով Վարկատուն տեղեկացնում է Վարկառուին, իսկ

Վարկառուն ընդունում է, որ Վարկային միջոցների նկատմամբ կիրառելի փաստացի համաշխարհային դրույքաչափը (*taux effectif global*) կարող է սահմանվել երեք ամբողջ երեսունմեկ տոկոս (3.31%) տարեկան դրույքաչափով՝ տարեկան երեք հարյուր վաթսունհինգօրյա (365) հաշվարկի եւ Տոկոսների հաշվարկման վեցամսյա (6) ժամանակահատվածի հիման վրա՝ մեկ ամբողջ վաթսունչորս տոկոս (1,64%) ժամանակաշրջանի փոխարժեքով, հաշվի առնելով հետեւյալը՝

ա) վերոնշյալ դրույքաչափերը ներկայացված են միայն տեղեկատվական նպատակներով.

բ) վերոնշյալ դրույքաչափերը հաշվարկվում են հետեւյալ հիմքով՝

i) Վարկային միջոցների մասհանումն ամբողջությամբ կատարվում է Ֆիքսված դրույքաչափով՝ Ստորագրման ամսաթվին.

ii) Ֆիքսված դրույքաչափը վարկային միջոցների տրամադրման ժամանակահատվածի համար հավասար է տարեկան երեք ամբողջ քսաներեք տոկոսին (3.23%).

գ) վերոնշյալ դրույքաչափերի դեպքում հաշվի են առնվում սույն Համաձայնագրի համաձայն Վարկառուի կողմից վճարվող միջնորդավճարները եւ ծախսերը՝ ենթադրելով, որ այդ միջնորդավճարները եւ ծախսերը կմնան ֆիքսված եւ կկիրառվեն մինչեւ սույն Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտը:

## **5. ՏՈԿՈՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**

### **5.1. Շուկայի ապակայունացումը**

ա) Եթե Շուկայի ապակայունացման դեպքն ազդում է եվրագոտու միջբանկային շուկայի վրա, եւ հնարավոր չէ՝

i) Ֆիքսված տոկոսադրույքի դեպքում Մասհանման նկատմամբ կիրառելի Ֆիքսված տոկոսադրույքը որոշելը, կամ

ii) Լողացող տոկոսադրույքի դեպքում Տոկոսների հաշվարկման

համապատասխան ժամանակահատվածում կիրառելի ԵՎՐԻԲՈՐ-ը որոշելը,

ապա Վարկատուն այդ մասին տեղեկացնում է Վարկառուին:

բ) Վերոնշյալ «ա» պարբերության մեջ նկարագրված իրավիճակի դեպքում Մասհանման կամ Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածի համար, ըստ իրավիճակի, կիրառելի Տոկոսադրույքը կլինի՝

i) Թույլատրելի սահմանաչափի, եւ

ii) տարեկան տոկոսադրույքի գումարը, որը հավասար է Վարկատուի կողմից Մասհանումը ֆինանսավորելու հետ կապված ծախսերին՝ անկախ այն աղբյուրից, որն այն կարող է ողջամտորեն ընտրել: Դրույքաչափի մասին Վարկառուն ծանուցվում է հնարավորինս շուտ, սակայն ցանկացած դեպքում՝ նախքան (1) Ֆիքսված տոկոսադրույքի մասով այդ Մասհանման հետ կապված վճարման ենթակա տոկոսների առաջին Վճարման ամսաթիվը կամ (2) Լողացող տոկոսադրույքի մասով Տոկոսների հաշվարկման տվյալ ժամանակահատվածում վճարման ենթակա տոկոսների Վճարման ամսաթիվը:

## 5.2 Հրապարակված դրույքաչափի փոխարինում

### 5.2.1. Սահմանումները

**Առաջադրող համապատասխան մարմին** նշանակում է կենտրոնական բանկը, կարգավորող մարմինը, վերահսկող մարմինը կամ աշխատանքային խումբը կամ կոմիտե, որը հովանավորվում կամ ղեկավարվում կամ ստեղծվում է դրանցից որեւէ մեկի պահանջով:

**Հրապարակված դրույքաչափի փոխարինման դեպք** նշանակում է հետեւյալ իրադարձություններից մեկը կամ մի քանիսը՝

ա) էապես փոփոխվել է հրապարակված դրույքաչափի սահմանումը, դրա որոշման մեթոդաբանությունը, բանաձեւը կամ միջոցը.

բ) ուժի մեջ է մտել օրենք կամ կանոնակարգ, որով արգելվում է Հրապարակված դրույքաչափի օգտագործումը, եւ կասկածներից զերծ մնալու

նպատակով այսպիսի իրավիճակի ի հայտ գալը չպետք է դիտարկվի պարտադիր կանխավճարի դեպք.

գ) Հրապարակված դրույքաչափի կառավարիչը կամ վերահսկող մարմինը հրապարակայնորեն հայտարարում է, որ՝

i) այն ընդմիջտ կամ անորոշ ժամկետով դադարել է կամ կդադարի ապահովել Հրապարակված դրույքաչափի հանրայնացումը, եւ այդ ժամանակահատվածում որեւէ իրավահաջորդ կառավարիչ հրապարակայնորեն չի առաջադրվել այդ Հրապարակված դրույքաչափի հանրայնացման ապահովումը շարունակելու նպատակով.

ii) Հրապարակված դրույքաչափը դադարել է կամ կդադարի հրապարակվել ընդմիջտ կամ անորոշ ժամկետով. կամ

iii) Հրապարակված դրույքաչափը այլեւս չի կարող օգտագործվել (տվյալ պահին եւ ապագայում).

դ) հրապարակային հայտարարություն է տարածվել այդպիսի Հրապարակված դրույքաչափի կառավարչի սնանկության կամ դրա դեմ հարուցված սնանկության որեւէ այլ վարույթի մասին, եւ այդ ժամանակահատվածում որեւէ իրավահաջորդ կառավարիչ հրապարակայնորեն չի առաջադրվել Հրապարակված դրույքաչափի հանրայնացման ապահովումը շարունակելու համար. կամ

ե) Վարկատուի կարծիքով՝ Հրապարակված դրույքաչափը դադարել է օգտագործվել մի շարք համադրելի ֆինանսավորման գործարքներում:

**Հրապարակված դրույքաչափ** նշանակում է ԵՎՐԻԲՈՐ կամ Փոխարինված բազային դրույքաչափով այս դրույքաչափը փոխարինելուց հետո՝ Փոխարինված բազային դրույքաչափ:

**Հրապարակված դրույքաչափի փոխարինման ամսաթիվ** նշանակում է՝

- Հրապարակված դրույքաչափի փոխարինման դեպքի՝ վերոնշյալ

սահմանման «ա», «դ» եւ «ե» կետերում նշված իրադարձությունների մասով՝ այն ամսաթիվը, երբ Վարկատուն տեղեկացել է տվյալ դեպքի մասին, իսկ

- Հրապարակված դրույքաչափի փոխարինման դեպքի՝ վերոնշյալ սահմանման «բ» եւ «գ» կետերում նշված իրադարձությունների մասով՝ այն ամսաթիվը, որից հետո արգելվելու է Հրապարակված դրույքաչափի օգտագործումը, կամ այն ամսաթիվը, երբ Հրապարակված դրույքաչափի կառավարիչն ընդմիջտ կամ անորոշ ժամկետով դադարում է ապահովել Հրապարակված դրույքաչափի հանրայնացումը, կամ այն ամսաթիվը, որից հետո Հրապարակված դրույքաչափն այլեւս չի կարող օգտագործվել:

5.2.2 Կողմերից յուրաքանչյուրն ընդունում եւ համաձայնում է ի շահ մյուս Կողմի, որ եթե տեղի ունենա Հրապարակված դրույքաչափի փոխարինման դեպք, եւ Համաձայնագրի տնտեսական հավասարակշռությունը պահպանելու նպատակով Վարկատուն կարող է Հրապարակված դրույքաչափը փոխարինել մեկ այլ դրույքաչափով (**Փոխարինված բազային դրույքաչափ**), որը կարող է ներառել ճշգրտման թույլատրելի սահմանաչափը՝ Կողմերի միջեւ տնտեսական արժեքի փոխանցումից խուսափելու համար (առկայության դեպքում) (**Ճշգրտման թույլատրելի սահմանաչափ**), եւ Վարկատուն կորոշի այն ամսաթիվը, որից սկսած՝ Փոխարինված բազային դրույքաչափով եւ առկայության դեպքում՝ Ճշգրտման թույլատրելի սահմանով պետք է փոխարինվի Հրապարակված դրույքաչափը, ինչպես նաեւ որոշում կկայացնի Հրապարակված դրույքաչափը Փոխարինված բազային դրույքաչափով փոխարինելու արդյունքում Համաձայնագրի որեւէ այլ փոփոխության անհրաժեշտության վերաբերյալ:

5.2.3 Փոխարինված բազային դրույքաչափի սահմանումը եւ անհրաժեշտ փոփոխությունները կկատարվեն բարեխղճորեն եւ հաշվի առնելով i) Համապատասխան առաջադրող մարմնի առաջարկությունները, կամ ii) Հրապարակված դրույքաչափի կառավարչի առաջարկությունները, կամ iii) բանկային ոլորտի մասնագիտական ասոցիացիաների կողմից առաջարկվող ոլորտային լուծումը, կամ iv) փոխարինման ամսաթվի դրությամբ համադրելի

Ֆինանսավորման գործարքների ընթացքում շուկայում արձանագրված պրակտիկան:

5.2.4 Հրապարակված դրույքաչափի փոխարինման դեպքում Վարկատուն Վարկատունն անմիջապես պետք է ծանուցի Հրապարակված դրույքաչափը Փոխարինված բազային դրույքաչափով փոխարինելու պայմանների մասին, որոնք կիրառելի կլինեն Հրապարակված դրույքաչափի փոխարինման ամսաթվից առնվազն երկու Բանկային օր հետո սկսվող Տոկոսների հաշվարկման ժամանակահատվածի նկատմամբ:

5.2.5 5.2 կետի (*Հրապարակված դրույքաչափի փոխարինում*) դրույթները գերակայում են 5.1 կետի (*Շուկայի ապակայունացումը*) դրույթների նկատմամբ:

## **6. ՎՃԱՐՆԵՐԸ**

### **6.1. Կոմիսիոն վճարները**

Ստորագրման ամսաթվից սկսած՝ վեց (6) ամիսը լրանալուց հետո Վարկատուն պետք է Վարկատունին վճարի տարեկան զրո ամբողջ հինգ տոկոս (0.5 %) կոմիսիոն վճար:

Կոմիսիոն վճարը հաշվարկվում է վերոնշյալ դրույքաչափով՝ Վարկային սահմանաչափի մնացորդի գումարի նկատմամբ, որը համամասնորեն գնահատվում է օրերի փաստացի քանակի համար եւ ավելացվում է Վարկատուի կողմից տրամադրվող Մասհանման գումարի չափով՝ ակնկալվող Մասհանման հայտի համաձայն:

Առաջին կոմիսիոն վճարը հաշվարկվում է i) Ստորագրման ամսաթվից (ներառյալ) վեց (6) ամիս ժամանակահատվածը լրանալուն հաջորդող առաջին օրվանից սկսած մինչեւ Վճարման ամսաթվին անմիջապես հաջորդող օրն (հանած) ընկած ժամանակահատվածի համար: Հետագա կոմիսիոն վճարները հաշվարկվում են այն ժամանակահատվածների համար, որոնք սկսվում են

Վճարման ամսաթվին անմիջապես հաջորդող օրվանից (հանած) եւ ավարտվում հաջորդ Վճարման ամսաթվին (ներառյալ):

Հաշվեգրված կոմիսիոն վճարը ենթակա է վճարման (i) յուրաքանչյուր Վճարման ամսաթվին այնքան ժամանակ, քանի դեռ Վարկային միջոցների մնացորդը զրոյից բարձր է. ii) Մասհանման ժամանակահատվածի վերջին օրվան հաջորդող Վճարման ամսաթվին. եւ iii) Վարկային սահմանաչափի մնացորդն ամբողջությամբ չեղարկելու դեպքում՝ այդ չեղարկման փաստացի ամսաթվին հաջորդող Վճարման ամսաթվին:

## 6.2 Գնահատման վճարը

Ստորագրման ամսաթվից ոչ ուշ, քան չորս (4) ամիս հետո եւ մինչեւ առաջին Մասհանումը Վարկառուն պետք է Վարկատուին վճարի զրո ամբողջ հինգ տոկոս (0.5%) գնահատման վճար, որը հաշվարկվում է Վարկային միջոցների առավելագույն գումարի նկատմամբ:

## **7. ՄԱՐՈՒՄԸ**

Արտոնյալ ժամկետը լրանալուց հետո Վարկառուն պետք է Վարկատուին վճարի Վարկային միջոցների մայր գումարը երեսուն (30) կիսամյակային վճարումներով, որոնք պետք է կատարվեն յուրաքանչյուր Վճարման ամսաթվին:

Չհակասելով 14.3 կետին (Բանկային օրերը), եթե Վճարման ամսաթիվը Հայաստանի Հանրապետությունում բանկային օր չէ, Վարկառուն իրավունք է վերապահում վճարումը կատարելու Վճարման ամսաթվից մինչեւ երկու (2) բանկային օր առաջ: Կասկածից զերծ մնալու նպատակով դա չպետք է ազդի Տոկոսների հաշվարկման որեւէ ժամանակահատվածի վրա եւ չպետք է համարվի Վարկային միջոցների կամավոր կանխավճար:

Առաջին վճարումը պետք է կատարվի 2029 թվականի սեպտեմբերի 15-ին, իսկ վերջին վճարումը պետք է կատարվի 2044 թվականի մարտի 15-ին:

Մասհանման ժամանակահատվածի վերջում Վարկատուն Վարկառուին պետք է տրամադրի Վարկային միջոցներին առնչվող վարկի մարման ժամանակացույց՝

հաշվի առնելով առկայության դեպքում 8.3 կետի (Վարկառուի կողմից չեղարկումը) եւ (կամ) 8.4 կետի (Վարկատուի կողմից չեղարկումը) համաձայն Վարկային միջոցների ցանկացած հնարավոր չեղարկում:

## **8. ԿԱՆԽԱՎՃԱՐԸ ԵՎ ՉԵՂԱՐԿՈՒՄԸ**

### **8.1 Կամավոր կանխավճարը**

Մինչեւ Արտոնյալ ժամկետի ավարտը Վարկառուն իրավունք չունի կանխավճարի ձեռով կատարելու Վարկային միջոցների ամբողջական կամ դրա որեւէ մասի վճարում: Արտոնյալ ժամկետի ավարտին հաջորդող օրվանից Վարկառուն կարող է կանխավճարի ձեռով կատարել Վարկային միջոցների ամբողջական կամ դրա որեւէ մասի վճարում՝ հետեւյալ պայմաններով՝

ա) Վարկառուն պետք է գրավոր եւ անհետադարձելի ծանուցմամբ Վարկատուին ծանուցի կանխավճարի ձեռով վճարում կատարելու իր մտադրության մասին կանխավճարի նախատեսվող ամսաթվից ոչ պակաս, քան երեսուն (30) Բանկային օր առաջ:

բ) կանխավճարի ձեռով վճարման ենթակա գումարը պետք է հավասար լինի մայր գումարի մեկ կամ մի քանի մասերին:

գ) կանխավճարի նախատեսվող ամսաթիվը պետք է լինի Վճարման ամսաթիվը:

դ) բոլոր կանխավճարները պետք է կատարվեն հաշվեգրված տոկոսների, բոլոր վճարների, փոխհատուցումների եւ հարակից ծախսերի հետ միասին, որոնք առնչվում են սույն Համաձայնագրով նախատեսված կանխավճարի ձեռով վճարված գումարին:

ե) չկա որեւէ չմարված ժամկետանց պարտավորություն, եւ

զ) մասնակի կանխավճարի դեպքում Վարկառուն պետք է Վարկատուին բավարարող ապացույցներ ներկայացնի այն մասին, որ այն ունի բավարար չափով հասանելի ֆինանսավորում, որը տրամադրվում է Ծրագրի ֆինանսավորման

նպատակով, ինչպես սահմանված է Ֆինանսավորման պլանում:

Վճարման ամսաթվին, երբ կատարվում է կանխավճարը, Վարկառուն պետք է վճարի Կանխավճարի փոխհատուցման ամբողջ գումարը, որը ենթակա է վճարման 9.3 կետի (*Կանխավճարի մասով փոխհատուցումը*) համաձայն:

## 8.2 Պարտադիր կանխավճարը

Վարկառուն պետք է անմիջապես կանխավճարի ձեով վճարի Վարկային միջոցներն ամբողջությամբ կամ դրանց մի մասը Վարկատուից ծանուցում ստանալուց հետո, որով Վարկառուին տեղեկացվում է հետեյալ իրադարձություններից որեւէ մեկի մասին՝

ա) Անօրինականություն. համաձայն իր նկատմամբ կիրառելի իրավունքի՝ Վարկատուի համար անօրինական է դառնում սույն Համաձայնագրով նախատեսված իր որեւէ պարտավորության կատարումը կամ Վարկային միջոցների ֆինանսավորումը կամ դրա շարունակաբար իրականացումը.

բ) Ֆրանսիայի պետության որոշումներ եւ հրահանգներ. Ֆրանսիայի կառավարությունն իր մտադրությունն է հայտնել կամ որոշել է դադարեցնել, կասեցնել կամ ընդհատել Վարկառուի երկրի հետ դիվանագիտական իր բոլոր կապերը կամ կապերի մի մասը եւ (կամ) համագործակցությունը. կամ Վարկառուն դադարեցրել է կամ հայտարարել է, որ կդադարեցնի Ֆրանսիայի հետ դիվանագիտական իր բոլոր կապերը կամ կապերի մի մասը եւ (կամ) համագործակցությունը.

գ) Լրացուցիչ ծախսեր. 9.5 կետում (*Լրացուցիչ ծախսերը*) նշված որեւէ լրացուցիչ ծախս էական է, իսկ Վարկառուն հրաժարվել է այդ լրացուցիչ ծախսերը վճարելուց.

դ) Պարտավորությունների չկատարում. Վարկառուն հայտարարում է Պարտավորությունների չկատարման դեպքի մասին՝ 13 կետին (*Պարտավորությունների չկատարման դեպքերը*) համապատասխան.

ե) Կանխավճար Համաֆինանսավորողին. Վարկառուն կանխավճարի ձեռով ամբողջությամբ կամ մասամբ Համաֆինանսավորողին է վճարում վճարման ենթակա գումարը, որի դեպքում Վարկատուն իրավունք ունի պահանջելու, որ Վարկառուն, ըստ իրավիճակի, կանխավճարի ձեռով վճարի չմարված Վարկային միջոցները կամ գումարը՝ Համաֆինանսավորողին կանխավճարի ձեռով վճարված գումարին համարժեք չափով:

Վերոնշյալ «ա», «գ» եւ «դ» պարբերություններում նշված իրավիճակներից յուրաքանչյուրի դեպքում Վարկառուին գրավոր ծանուցելուց հետո Վարկատուն որպես պարտատեր կարող է օգտվել իր իրավունքներից՝ 13.2 կետով (Վարկի անհապաղ մարումը) սահմանված կարգով:

### 8.3 Վարկառուի կողմից չեղարկումը

Մինչեւ Մասհանման վերջնաժամկետը Վարկառուն կարող է չեղարկել Վարկային սահմանաչափի մնացորդի ամբողջ կամ որեւէ մաս՝ այդ մասին երեք (3) Բանկային օր առաջ ծանուցելով Վարկատուին:

Չեղարկման մասին ծանուցումն ստանալուց հետո Վարկատուն պետք է չեղարկի այն գումարը, որի հետ կապված՝ Վարկառուի կողմից ներկայացվել է ծանուցումը՝ պայմանով, որ Ֆինանսավորման պլանում նշված ծախքերը կատարվեն Վարկատուի համար ընդունելի ձեռով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Վարկառուն հրաժարվում է Ծրագրից:

### 8.4 Վարկատուի կողմից չեղարկումը

Վարկային սահմանաչափի մնացորդը պետք է անհապաղ չեղարկվի Վարկառուին ծանուցումը ներկայացնելուց հետո, որն անմիջապես ուժի մեջ է մտնում, եթե՝

ա) Մասհանման վերջնաժամկետին Վարկային սահմանաչափի մնացորդը հավասար չէ զրոյի. Կամ

բ) Մասհանումը չի կատարվել մասհանման վերջնաժամկետին, կամ

գ) տեղի է ունեցել եւ շարունակվում է Պարտավորությունների չկատարման դեպք, կամ

դ) տեղի է ունեցել 8.2 կետում (*Պարտադիր կանխավճարը*) նշված իրադարձությունը:

### 8.5 Սահմանափակումները

ա) Սույն 8-րդ կետի (*Կանխավճարը եւ չեղարկումը*) համաձայն Կողմի կողմից տրված կանխավճարի կամ չեղարկման մասին ցանկացած ծանուցում անհետկանչելի է, եւ եթե այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով, ցանկացած այդպիսի ծանուցման մեջ պետք է նշվի համապատասխան կանխավճարի կամ չեղարկման ամսաթիվը կամ ամսաթվերը, ինչպես նաեւ այդ կանխավճարի կամ չեղարկման գումարը:

բ) Վարկառուն չպետք է կանխավճարի ձեռով վճարի կամ չեղարկի Վարկային միջոցներն ամբողջությամբ կամ դրանց որեւէ մաս՝ բացառությամբ սույն Համաձայնագրով հստակորեն նախատեսված դեպքերի եւ կարգի:

գ) Սույն Համաձայնագրով նախատեսված ցանկացած կանխավճար կկատարվի i) կանխավճարի ձեռով վճարված գումարի նկատմամբ հաշվեգրված տոկոսների, ii) չմարված վճարների եւ iii) ներքետում նշված՝ 9.3 կետում (*Կանխավճարի մասով փոխհատուցումը*) նշված Կանխավճարի փոխհատուցման գումարի հետ միասին:

դ) Կանխավճարի գումարը կուղղվի այլ վճարումների՝ մարման ժամկետի հակադարձ կարգով:

ե) Վարկառուն չի կարող վերափոխառել այն Վարկային միջոցներն ամբողջությամբ կամ դրանց որեւէ մաս, որոնք մարվել են կանխավճարի ձեռով կամ չեղարկվել են:

## **9. ԼՐԱՑՈՒՑԻՉ**

## **ՎՃԱՐՈՒՄՆԵՐ**

## **ԿԱՏԱՐԵԼՈՒ**

## **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

## 9.1 Ծախսերը եւ ծախքերը

9.1.1 Եթե սույն Համաձայնագրում փոփոխություն անելու անհրաժեշտություն է առաջանում Վարկառուի պահանջի հիման վրա, ապա Վարկառուն պետք է Վարկատուին հատուցի բոլոր այն ծախսերը (ներառյալ՝ իրավաբանական ծառայությունների համար վճարները), որոնք ողջամտորեն առաջացել են այդպիսի անհրաժեշտությանն արձագանքելու, այն գնահատելու, դրա շուրջ բանակցելու կամ համապատասխանելու համար: Այս վճարներն ու ծախքերը կսահմանափակվեն մինչեւ տասնհինգ հազար եվրո (15,000 եվրո) գումարով՝ առանց Հայաստանի ԱԱՀ-ի:

9.1.2 Վարկառուն պետք է Վարկատուին հատուցի բոլոր այն ծախսերն ու ծախքերը (ներառյալ՝ իրավաբանական ծառայությունների համար վճարները), որոնք այն կրել է սույն Համաձայնագրով նախատեսված իր ցանկացած իրավունքի իրականացման կամ պահպանման համար:

9.1.3 Վարկառուն պետք է ուղղակիորեն վճարի կամ անհրաժեշտության դեպքում Վարկատուին հատուցի վերջինիս կողմից կատարված կանխավճարի հետ կապված բոլոր ծախսերի եւ ծախքերի (ներառյալ՝ իրավաբանական ծառայությունների համար վճարները) գումարը՝ կապված Փարիզից Վարկառուին կամ նրա հաշվին Վարկառուի հետ համաձայնեցված որեւէ վայր դրամական միջոցների փոխանցման, ինչպես նաեւ Վարկային միջոցների հաշվին վճարման ենթակա բոլոր գումարների մարման հետ կապված փոխանցման համար գանձվող միջնորդավճարների եւ ծախքի հետ:

## 9.2 Չեղարկման համար փոխհատուցումը

Եթե Վարկային միջոցներն ամբողջությամբ կամ մասամբ չեղարկվել են 8.3 կետի (*Վարկառուի կողմից չեղարկումը*) եւ (կամ) 8.4 (*Վարկատուի կողմից չեղարկումը*) «ա», «բ» եւ «գ» կետերի պայմաններին համապատասխան, ապա Վարկառուն պետք է վճարի չեղարկման համար փոխհատուցման գումարը, որը հաշվարկվում է չեղարկված Վարկային միջոցների գումարի մեկ ամբողջ հինգ

տոկոսի (1.5%) չափով:

Յուրաքանչյուր դեպքում չեղարկման համար փոխհատուցումը պետք է վճարվի Վարկային միջոցների ամբողջական կամ դրա մի մասի չեղարկմանն անմիջապես հաջորդող Վճարման ամսաթվին:

### 9.3. Կանխավճարի մասով փոխհատուցումը

Հաշվի առնելով 8.1 կետին (*Կամավոր կանխավճարը*) կամ 8.2 կետին (*Պարտադիր կանխավճարը*) համապատասխան Վարկային միջոցներն ամբողջությամբ կամ դրանց որեւէ մաս կանխավճարի ձեւով վճարելու հետեւանքով Վարկատուի կրած բոլոր կորուստները՝ Վարկառուն պետք է Վարկատուին վճարի փոխհատուցում, որը հավասար է՝

- Կանխավճարի փոխհատուցման, եւ
- այնպիսի ծախսերի ընդհանուր գումարին, որոնք առաջացել են Վարկատուի կողմից կանխավճարի ձեւով վճարված գումարի հետ կապված տոկոսի հեջավորման սվոփի գործարքների ընդհատման հետեւանքով:

### 9.4 Հարկերը եւ տուրքերը

#### 9.4.1 Գրանցման հետ կապված ծախսերը

Վարկառուն պետք է ուղղակիորեն վճարի կամ անհրաժեշտության դեպքում Վարկատուին հատուցի վերջինիս կողմից կատարված՝ կանխավճարի հետ կապված բոլոր ծախսերի եւ ծախքերի (ներառյալ՝ իրավաբանական ծառայությունների համար վճարները) գումարները, Համաձայնագրի եւ դրա ցանկացած հնարավոր փոփոխության հետ կապված բոլոր պետական տուրքերը, գրանցման եւ նմանատիպ այլ հարկերի ծախսերը:

#### 9.4.2 Պահվող հարկը

Վարկառուն պարտավորվում է, որ սույն Համաձայնագրի համաձայն Վարկատուին արվող բոլոր վճարումները զերծ կլինեն Պահվող հարկերից:

Եթե օրենքով պահանջվում է Պահվող հարկ, ապա Վարկառուն պարտավորվում է ցանկացած այդպիսի վճարման գումար վերահաշվարկել այնպիսի գումարի նկատմամբ, որի արդյունքում Վարկատուն կստանա վճարմանը համարժեք այն գումարը, որը կվճարվեր, եթե չպահանջվեր Պահվող որեւէ հարկ:

Վարկառուն պետք է իր հաշվին Վարկատուին հատուցի բոլոր այն ծախսերը եւ (կամ) Հարկերը, որոնք վճարվել են Վարկատուի կողմից (եթե կիրառելի է)՝ բացառությամբ Ֆրանսիայում վճարման ենթակա որեւէ Հարկի:

#### 9.5 Լրացուցիչ ծախսերը

Վարկառուն պետք է Վարկատուի կողմից պահանջ ներկայացնելուց հետո հինգ (5) Բանկային օրվա ընթացքում Վարկատուին վճարի Վարկատուի կողմից կատարված բոլոր այն լրացուցիչ ծախսերը, որոնք առաջացել են i) որեւէ նոր օրենք կամ կանոնակարգ ուժի մեջ մտնելու, որեւէ փոփոխության կամ որեւէ գործող օրենքի կամ կանոնակարգի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված որեւէ փոփոխության. կամ (ii) Ստորագրման ամսաթվից հետո ընդունված որեւէ օրենքին կամ կանոնակարգին համապատասխանություն ապահովելու անհրաժեշտության արդյունքում:

Սույն կետում **Լրացուցիչ ծախսեր** նշանակում է՝

ա) այն ծախսը, որն առաջացել է Ստորագրման ամսաթվից հետո սույն կետի առաջին պարբերության մեջ նշված իրադարձություններից մեկի արդյունքում եւ հաշվի չի առնվել Վարկատուի կողմից՝ Վարկային միջոցների ֆինանսական պայմանները հաշվարկելիս. կամ

բ) սույն Համաձայնագրով նախատեսված եւ վճարման ենթակա գումարի նվազեցումը,

որն արվել է Վարկատուի հաշվին կամ կրել է Վարկատուն՝ i) Վարկային միջոցները Վարկառուին տրամադրելու կամ ii) Համաձայնագրով նախատեսված իր պարտավորությունները ստանձնելու կամ դրանք կատարելու արդյունքում:

## 9.6 Արժույթի մասով փոխհատուցումը

Եթե Վարկառուի կողմից սույն Համաձայնագրով վճարման ենթակա որեւէ գումար կամ այդպիսի գումարի առնչությամբ կայացված կամ ընդունված որեւէ հրաման, վճիռ կամ որոշում, որի արդյունքում այդ գումարը պետք է վճարման ենթակա արժույթից փոխարկվի այլ արժույթի՝

ա) Վարկառուի դեմ պահանջ կամ նրա մասով ապացույց ներկայացնելու. կամ

բ) որեւէ դատական կամ արբիտրաժային վարույթի վերաբերյալ հրաման, վճիռ կամ որոշում ստանալու կամ կատարելու նպատակով,

ապա Վարկառուն պետք է փոխհատուցի Վարկատուին եւ Վարկատուի կողմից պահանջ ներկայացնելուց հետո երեք (3) Բանկային օրվա ընթացքում եւ ինչպես թույլատրվում է օրենքով, Վարկատուին վճարի փոխարկման արդյունքում կամ դրա հետեւանքով առաջացած ծախսի, կորստի կամ պարտավորության գումարը, այդ թվում՝ հետեւյալի միջեւ որեւէ անհամապատասխանության արդյունքում առաջացած գումարը՝ Ա) այն փոխարժեքի, որն օգտագործվել է համապատասխան գումարը առաջին արժույթից երկրորդ արժույթի փոխարկելու համար. եւ Բ) այն փոխարժեքի կամ փոխարժեքների միջեւ, որոնք Վարկատուին հասանելի են եղել այդ գումարը ստանալու պահին: Վարկատուին փոխհատուցելու այս պարտավորությունը պայմանավորված չէ սույն Համաձայնագրով նախատեսված՝ Վարկառուի որեւէ այլ պարտավորությամբ:

Վարկառուն հրաժարվում է որեւէ իրավագործության ներքո ունեցած այնպիսի իրավունքից, ըստ որի Վարկառուն կարող է սույն Համաձայնագրով նախատեսված որեւէ գումար վճարել այլ արժույթով կամ արժույթային միավորով, քան նախատեսված է վճարման ենթակա գումարի համար:

## 9.7 Վճարումների կատարման ամսաթվերը

Սույն 9-րդ կետի (*Լրացուցիչ վճարումներ կատարելու պարտավորությունները*) համաձայն՝ Վարկառուի կողմից Վարկատուին վճարվող որեւէ փոխհատուցում կամ

հատուցում ենթակա է վճարման համապատասխան փոխհատուցման կամ հատուցման անհրաժեշտություն առաջացնող հանգամանքներին անմիջապես հաջորդող վճարման ամսաթվին:

Չնայած վերոնշյալին՝ 9.3 կետին (*Կանխավճարի մասով փոխհատուցումը*) համապատասխան կանխավճարի մասով վճարման ենթակա որեւէ փոխհատուցում պետք է վճարվի համապատասխան կանխավճարի ամսաթվին:

## **10. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ**

Սույն 10-րդ կետով (*Հայտարարությունները եւ երաշխիքները*) սահմանված բոլոր հայտարարություններն ու երաշխիքները Վարկառուի կողմից հոգուտ Վարկատուի կատարվում եւ տրվում են Ստորագրման ամսաթվին: Սույն 10-րդ կետով (*Հայտարարությունները եւ երաշխիքները*) սահմանված բոլոր հայտարարություններն ու երաշխիքները նաեւ համարվում են Վարկառուի կողմից կատարված այն ամսաթվին, երբ բավարարվում են 4-րդ հավելվածի (Նախապայմանները) II մասում թվարկված բոլոր նախապայմանները, յուրաքանչյուր Մասհանման հայտի ամսաթվին, յուրաքանչյուր Մասհանման ամսաթվին եւ յուրաքանչյուր վճարման ամսաթվին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ 10.9 կետում (*Ապակողմնորոշիչ տեղեկությունների բացակայությունը*) սահմանված կրկնվող հայտարարությունները համարվում են Վարկառուի կողմից տրամադրված տեղեկությունների առնչությամբ կատարված՝ սկսած այն ամսաթվից, երբ վերջին անգամ կատարվել է հայտարարությունը:

### **10.1 Լիազորությունները**

Վարկառուն լիազորված է կնքել, իրականացնել եւ իրագործել սույն Համաձայնագիրը եւ կատարել դրանով նախատեսված բոլոր պարտավորությունները: Վարկառուն ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ապահովելու համար սույն Համաձայնագրի կնքումը, իրականացումն ու իրագործումը:

### **10.2 Վավերությունն ու որպես ապացույց թույլատրելիությունը**

Բոլոր պահանջվող Թույլտվությունները (բացառությամբ միայն Ստորագրման ամսաթվի դրությամբ Վավերացման), որոնք՝

ա) անհրաժեշտ են Վարկառուի կողմից օրենքին համապատասխան սույն Համաձայնագիրը կնքելու եւ դրանով նախատեսված նրա իրավունքներն իրականացնելու եւ պարտավորությունները կատարելու համար, եւ

բ) անհրաժեշտ են Վարկառուի երկրի դատարաններում կամ արբիտրաժային վարույթներում սույն Համաձայնագիրը թույլատրելի ապացույց համարելու համար, ինչպես սահմանված է 17-րդ կետով (*Կարգավորող իրավունքը, կատարման ապահովումը եւ դոմիցիլի ընտրությունը*),

ձեռք են բերվել, ուժի մեջ են մտել եւ գործում են, եւ չկան այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են հանգեցնել նրան, որ այդպիսի որեւէ Թույլտվություն ամբողջությամբ կամ դրա մի մասն ուժը կորցնի, չերկարաձգվի կամ փոփոխվի:

### 10.3 Պարտավորությունները

Սույն Համաձայնագրի համաձայն Վարկառուի կողմից ստանձնվող պարտավորությունները համապատասխանում են Վարկառուի երկրում իր նկատմամբ կիրառելի բոլոր օրենքներին ու կարգավորումներին եւ օրինական, վավեր, պարտադիր ու կատարման ենթակա պարտավորություններ են, որոնք ուժի մեջ են մտնում դրանց՝ գրավոր սահմանված պայմաններին համապատասխան:

### 10.4 Համաձայնագիրը \_\_\_\_\_ չներկայացնելը \_\_\_\_\_ կամ \_\_\_\_\_ դրոշմատուրքերի բացակայությունը

Համաձայն Վարկառուի իրավագրությունում կիրառվող օրենքների՝ սույն Համաձայնագիրը դատարանում կամ իրավասու այլ մարմնում գրանցելու, դրա վերաբերյալ գրառում անելու կամ այն կցելու անհրաժեշտություն չկա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է Վավերացումը ձեռք բերելու նպատակով, ինչպես նաեւ չկա դրոշմատուրք, գրանցման կամ համանման հարկեր ու վճարներ վճարելու անհրաժեշտություն՝ կապված սույն Համաձայնագրի կամ

դրանում սահմանված գործարքների հետ:

#### 10.5 Ֆինանսական միջոցների փոխանցումը

Սույն Համաձայնագրով Վարկառուի կողմից Վարկատուին վճարվող բոլոր գումարները՝ լինեն դրանք մայր գումարի կամ տոկոսների մասով արվող վճարումներ, ժամկետանց վճարման համար գանձվող տոկոսները, Չեղարկման համար փոխհատուցումը, Կանխավճարի մասով փոխհատուցումը, չնախատեսված ծախսերը եւ ծախքերը կամ ցանկացած այլ գումար, ազատ փոխարկելի եւ փոխանցելի են:

Սույն հայտարարությունն ուժի մեջ է մտնում եւ գործում է մինչեւ Վարկատուին վճարման ենթակա բոլոր գումարների ամբողջական մարումը: Եթե Վարկատուի կողմից Վարկի մարման ժամկետները երկարաձգվեն, ապա այս հայտարարության հետագա հաստատումն անհրաժեշտ չէ:

Վարկառուն ձեռք է բերում գումար՝ Եվրո, որն անհրաժեշտ է վճարման ժամկետում սույն հայտարարության հետ համապատասխանությունն ապահովելու համար:

#### 10.6 Այլ պարտավորությունների հետ հակասության բացակայությունը

Վարկառուի կողմից սույն Համաձայնագրի կնքումն ու կատարումը, ինչպես նաեւ դրանով նախատեսված գործարքները չեն հակասում որեւէ կիրառելի ներպետական կամ օտարերկրյա իրավունքի կամ կարգավորման կամ դրա սահմանադրական փաստաթղթերի (կամ համանման փաստաթղթերի) կամ Վարկառուի համար պարտադիր կամ նրա որեւէ ակտիվի վրա ազդեցություն ունեցող որեւէ համաձայնագրի կամ փաստաթղթի:

#### 10.7 Կարգավորող իրավունքը եւ կիրարկումը

ա) Ֆրանսիայի իրավունքի՝ որպես սույն Համաձայնագիրը կարգավորող օրենքի ընտրությունը կճանաչվի եւ կկիրարկվի Վարկառուի իրավասության ներքո գտնվող դատարանների եւ արբիտրաժային տրիբունալների կողմից:

բ) Սույն Համաձայնագրի առնչությամբ ֆրանսիական դատարանում կամ արբիտրաժային տրիբունալի կողմից կայացված ցանկացած վճիռ կճանաչվի եւ կկիրարկվի Վարկառուի իրավասության ներքո:

#### 10.8 Պարտավորությունների չկատարման բացառումը

Պարտավորությունների չկատարման որեւէ դեպք չի կարող շարունակվել կամ ամենայն հավանականությամբ, չի կարող տեղի ունենալ:

Վարկառուի կողմից իր համար պարտադիր ուժ ունեցող կամ իր ակտիվների վրա ազդեցություն ունեցող ցանկացած այլ համաձայնության առնչությամբ էական բացասական ազդեցություն ունեցող կամ ամենայն հավանականությամբ, էական բացասական ազդեցություն առաջացնող որեւէ խախտում չի կարող շարունակվել:

#### 10.9 Ապակողմնորոշիչ տեղեկությունների բացառումը

Վարկառուի կողմից Վարկատուին տրամադրվող բոլոր տեղեկությունները եւ փաստաթղթերը ճիշտ էին, ճշգրիտ եւ արդիական դրանք տրամադրելու օրվա դրությամբ կամ անհրաժեշտության դեպքում՝ այն օրվա դրությամբ, երբ հայտարարվել է, որ պետք է տրամադրվեն, ինչպես նաեւ դրանք չեն փոփոխվել, կասեցվել, չեղարկվել կամ թարմացվել՝ համաձայն վերանայված պայմանների, եւ բացթողման, նոր հանգամանքների երեւան գալու կամ ցանկացած տեղեկության բացահայտման կամ չբացահայտման արդյունքում որեւէ էական առումով չեն կրում ապակողմնորոշիչ բնույթ:

#### 10.10. Pari Passu դասակարգումը

Սույն Համաձայնագրի համաձայն՝ Վարկառուի կողմից վճարման պարտավորությունները դասակարգվում են առնվազն *pari passu* սկզբունքով՝ դրա չապահովված եւ ոչ առաջնահերթ մյուս բոլոր պարտատերերի պահանջների հետ միասին:

#### 10.11 Ֆինանսական միջոցների օրինական ծագումը եւ Արգելված գործելակերպերը

Վարկառուն հայտարարում եւ երաշխավորում է, որ՝

ա) Ծրագրի իրականացման համար ներդրված կամ ներդրվելիք բոլոր ֆինանսական միջոցները, եթե այդպիսիք կան, բացի Պետության կողմից տրամադրվող միջոցներից, չունեն Ապօրինի ծագում,

բ) Ծրագիրը չի առաջացրել Արգելված որեւէ գործելակերպ.

գ) ինքը չի կատարել որեւէ գործողություն կամ չի մասնակցել որեւէ գործողության, որը հակասում է Փողերի լվացման եւ Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գործող օրենքին:

#### 10.12 Էական բացասական ազդեցության բացառումը

Վարկառուն հայտարարում եւ երաշխավորում է, որ որեւէ դեպք կամ հանգամանք, որը կարող է Էական բացասական ազդեցություն ունենալ, տեղի չի ունեցել կամ չի կարող տեղի ունենալ:

### 11. ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն 11-րդ կետում (*Հանձնառությունները*) նշված հանձնառություններն ուժի մեջ են մտնում Ստորագրման ամսաթվին եւ ուժի մեջ են մնում ու գործում այնքան ժամանակ, քանի դեռ Համաձայնագրի շրջանակներում վճարման ենթակա բոլոր գումարները չեն վճարվել:

#### 11.1 Համապատասխանությունն օրենքներին, կանոնակարգերին եւ պարտավորություններին

Վարկառուն ապահովում է՝

ա) բոլոր հարցերում բոլոր օրենքների ու կանոնակարգերի կատարում, որոնք տարածվում են իր եւ(կամ) Ծրագրի վրա, մասնավորապես՝ գնումների, շրջակա միջավայրի պահպանության, անվտանգության մասին օրենքները, աշխատանքային կիրառելի օրենքները, Արգելված գործելակերպերի կանխարգելումը եւ պայքարը, եւ

բ) Համաձայնագրով նախատեսված իր բոլոր պարտավորությունների կատարումը:

### 11.2 Թույլտվությունները

Վարկառուն պետք է անհապաղ ձեռք բերի կիրառելի իրավունքով կամ կարգավորմամբ պահանջվող ցանկացած Թույլտվություն՝ ներառելով Վավերացումը, սակայն չսահմանափակվելով դրանով, ապահովի դրա հետ համապատասխանություն եւ ձեռնարկի բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ այն ուժի մեջ պահելու եւ դրա գործողության համար, որպեսզի կարողանա կատարել սույն Համաձայնագրով նախատեսված իր պարտավորությունները եւ ապահովել դրանց օրինականությունը, վավերականությունը, կատարումն ու ընդունելիությունը որպես ապացույց:

### 11.3 Ծրագրի իրականացումը եւ պահպանումը

Վարկառուն պետք է՝

i) իրականացնի Ծրագիրը՝ համաձայն լայնորեն ընդունված անվտանգության սկզբունքների եւ գործող տեխնիկական չափանիշների, եւ

ii) պահպանի Ծրագրի ակտիվները կիրառելի բոլոր օրենքներին եւ կանոնակարգերին համապատասխան, ինչպես նաեւ գործառնական եւ սպասարկման լավ պայմաններում, եւ օգտագործի այդպիսի ակտիվներն իրենց նպատակին եւ կիրառելի բոլոր օրենքներին ու կանոնակարգերին համապատասխան:

### 11.4 Բնապահպանական եւ սոցիալական պատասխանատվությունը

#### 11.4.1 Բնապահպանական եւ սոցիալական միջոցառումների իրականացումը

Կայուն զարգացումը խթանելու նպատակով Կողմերը համաձայնում են, որ անհրաժեշտ է ապահովել համապատասխանությունը միջազգայնորեն ճանաչված բնապահպանական եւ աշխատանքային չափանիշների հետ, այդ թվում՝ Վարկառուի իրավագրության սահմաններում կիրառելի Աշխատանքի

միջազգային կազմակերպության (ԱՄԿ) հիմնարար կոնվենցիաների եւ բնապահպանական միջազգային օրենքների ու կանոնակարգերի հետ:

#### 11.5 Լրացուցիչ ֆինանսավորումը

Վարկառուն չի կարող լրամշակել կամ փոփոխել Ֆինանսավորման պլանը՝ առանց Վարկատուի նախնական գրավոր համաձայնության, եւ ֆինանսավորում է Ֆինանսավորման պլանով չնախատեսված ցանկացած լրացուցիչ ծախս այն պայմաններով, որոնք կապահովեն Վարկի մարումը:

#### 11.6 Pari Passu դասակարգումը

Վարկառուն պարտավորվում է (i) ապահովել, որ սույն Համաձայնագրով նախատեսված իր վճարման պարտավորությունները մշտապես առնվազն ըստ *pari passu* սկզբունքի դասակարգվեն իր մյուս ներկա եւ ապագա չապահովված եւ ոչ առաջնահերթ վճարման պարտավորությունների հետ, (ii) որեւէ այլ վարկատուի չտրամադրել առաջնահերթություն կամ երաշխիքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նույն առաջնահերթությունը կամ երաշխիքները տրամադրվում են Վարկատուի կողմից հոգուտ Վարկատուի՝ վերջինիս կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու դեպքում:

#### 11.7 Ստուգումները

Վարկառուն սույնով լիազորում է Վարկատուին եւ նրա ներկայացուցիչներին տարեկան կտրվածքով ստուգումներ իրականացնել, որի նպատակն է Ծրագրի եւ Մշտադիտարկման աղյուսակի իրականացումն ըստ տեխնիկական եւ ինստիտուցիոնալ հայեցակետերի գնահատելը:

Այդպիսի ստուգումներ իրականացնելիս Վարկառուն համագործակցում է Վարկատուին եւ նրա ներկայացուցիչներին է տրամադրում ողջամիտ ամբողջական աջակցություն եւ տեղեկություններ. այդ ստուգումների ժամկետները եւ ձեւաչափը սահմանվում են Վարկատուի կողմից Վարկառուի հետ խորհրդակցելուց հետո:

Վարկառուն պահպանում է Վարկատուի կողմից ստուգման համար

հասանելի է դարձնում Ծրագրի վերաբերյալ բոլոր գործառնական, ֆինանսական եւ իրավական փաստաթղթերը հինգ (5) տարի ժամկետով՝ Վարկի շրջանակներում վերջին Մասհանման օրվանից սկսած:

#### 11.8 Ծրագրի գնահատումը

Վարկառուն ընդունում է, որ Վարկատուն կարող է իրականացնել կամ ապահովել, որ երրորդ կողմն իր անունից իրականացնի Ծրագրի գնահատում: Այս գնահատման արդյունքում ստացված տվյալներն օգտագործվելու են ամփոփ հաշվետվություն կազմելու համար, որը պարունակելու է Ծրագրի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես օրինակ՝ ֆինանսավորման ամբողջ գումարն ու տեւողությունը, Ծրագրի նպատակները, Ծրագրի ակնկալվող եւ ձեռք բերված քանակական արդյունքները, դրա արդիականության, արդյունավետության, ազդեցության եւ կենսունակության (կայունության) գնահատումը, հիմնական եզրակացությունները եւ առաջարկությունները:

Գնահատման հիմնական նպատակը կլինի արդիականության, իրականացման (արդյունավետության) եւ ազդեցությունների (արդյունավետություն, ազդեցություն եւ կայունություն) հետ կապված առանցքային հարցերի վերաբերյալ վստահելի եւ անկախ դատողության ձեւակերպումը:

Գնահատումների համար անհրաժեշտ է հավասարակշռված ձեւով հաշվի առնել տարբեր օրինական տեսակետներ, որոնք կարող են արտահայտվել, եւ որոնց միջոցով գնահատումը կարող է իրականացվել անաչառ ձեւով:

Վարկառուն հնարավորինս սերտորեն պետք է ներգրավված լինի գնահատման գործընթացում՝ սկսած Տեխնիկական առաջադրանքների մշակումից մինչեւ վերջնական զեկույցի ներկայացում:

Վարկառուն համաձայնում է սույն ամփոփագրի հրապարակմանը, մասնավորապես՝ Վարկատուի կայքում:

#### 11.9 Ֆինանսական պատժամիջոցների ցանկերը եւ Էմբարգոն

## Վարկառուն

ա) պետք է ապահովի, որ Ծրագրի որեւէ միջոց կամ տնտեսական ռեսուրս ուղղակի կամ անուղղակի կերպով հասանելի չդարձվի որեւէ անձի, խմբի կամ մարմինների կամ չօգտագործվի հօգուտ որեւէ անձի, խմբի կամ մարմինների շահերի, որոնք ներառված են Ֆինանսական պատժամիջոցների որեւէ ցանկում, եւ

բ) չպետք է ֆինանսավորի, ձեռք բերի կամ տրամադրի որեւէ այնպիսի մատակարարում կամ չպետք է միջամտի այնպիսի ոլորտում, որը ենթակա է Էմբարգոյի ՄԱԿ-ի, Եվրոպական միության կամ Ֆրանսիայի կողմից:

11.10 Ֆինանսական միջոցների օրինական ծագումը, Արգելված գործելակերպերի բացառումը

Վարկառուն պարտավորվում է՝

ա) Վարկի միջոցներն օգտագործել ԶՖԳ Խմբի՝ Արգելված գործելակերպերի կանխարգելմանն ու դրանց դեմ պայքարին ուղղված քաղաքականությանը համապատասխան, որը հասանելի է դրա կայքում,

բ) ապահովել, որ Ծրագրի իրականացման համար օգտագործվող ֆինանսական միջոցները՝ բացառությամբ պետական ծագման ֆինանսական միջոցների, չունենան ապօրինի ծագում,

գ) ապահովել, որ Ծրագիրը չառաջացնի Արգելված որեւէ գործելակերպ,

դ) ցանկացած Արգելված գործելակերպի մասին տեղեկանալու կամ կասկածելու դեպքում անհապաղ տեղեկացնել Վարկատուին,

ե) վերոնշյալ (դ) կետում նշված դեպքում կամ Վարկատուի խնդրանքով, եթե Վարկատուն կասկածում է, որ Արգելված որեւէ գործելակերպ է տեղի ունեցել, ձեռնարկել անհրաժեշտ բոլոր գործողությունները՝ ուսումնասիրելով ձեռնարկել ուղղիչ գործողություններ և կանխարգելիչ միջոցներ ապագայի համար՝ Վարկատուի համար ընդունելի ձեւով եւ Վարկատուի կողմից սահմանված ժամկետում իրավիճակը շտկելու համար, եւ

զ) Վարկատուին անհապաղ ծանուցել այնպիսի տեղեկություն ունենալու դեպքում, որը թույլ է տալիս նրան կասկածել Ծրագրի իրականացման համար օգտագործված ֆինանսական միջոցների Ապօրինի ծագման մասին:

#### 11.11. Ուսումնասիրությունը

Վարկառուն Վարկատուին կամ Վարկատուի կողմից լիազորված ցանկացած երրորդ անձի թույլ է տալիս ուսումնասիրություն իրականացնել Արգելված գործելակերպի վերաբերյալ ենթադրությունների դեպքում: Այդ նպատակով Վարկատուն կամ նրա կողմից լիազորված ցանկացած երրորդ կողմ իրավասու է Վարկառուին ողջամիտ ծանուցումից հետո իրականացնել բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են այդ ուսումնասիրությունների համար, ներառյալ՝

ա) հարցաքննության համար կապ հաստատել ցանկացած մեկի հետ, որը կարող է տեղեկություն ունենալ ենթադրյալ Արգելված գործելակերպի մասին.

բ) իրականացնել այնպիսի աուդիտներ եւ ստուգումներ, ինչպես փաստաթղթային, այնպես էլ տեղում իրականացվող, որոնք Վարկատուն կարող է նպատակահարմար համարել, այդ թվում՝ ապահովել հասանելիությունը հաշվապահական հաշվառման գրքերին եւ գրառումներին կամ Ծրագրին առնչվող որեւէ այլ փաստաթղթի, որը պահվում է Վարկառուի կամ Ծրագրի հետ առնչություն ունեցող որեւէ անձի կամ կազմակերպության կողմից.

գ) իրականացնել այցելություններ Ծրագրի հետ առնչություն ունեցող տեղանքներ, օբյեկտներ եւ տեղեկանալ այդտեղ կատարվող աշխատանքների մասին. եւ

Վարկառուն ապահովում է, որ Վարկի միջոցով ֆինանսավորվող մրցութային փաստաթղթերը, պայմանագրերն ու ենթակապալի պայմանագրերն ապահովեն սույն կետի իրականացումը:

Վարկառուի կողմից սույն կետին չհամապատասխանելը Վարկատուի հայեցողությամբ կարող է համարվել Ոչ համագործակցային գործելակերպ:

## 11.12. Տեսանելիությունը եւ հաղորդակցությունը

Վարկառուն իրականացնում է Ծրագրի իրականացման հետ կապված տեսանելիության եւ հաղորդակցության գործողությունները՝ համաձայն Տեսանելիության եւ հաղորդակցության ուղեցույցի պայմանների, եւ ընդունում է, որ ամբողջությամբ կարդացել եւ հասկացել է վերոնշյալ ուղեցույցը:

Տեսանելիության եւ հաղորդակցության ուղեցույցի համաձայն՝ Ծրագրի վրա տարածվում են հաղորդակցության եւ տեսանելիության 1-ին մակարդակի պարտավորությունները:

## **12. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սույն 12-րդ կետում (*Տեղեկատվության առնչությամբ հանձնառությունները*) նշված հանձնառություններն ուժի մեջ են մտնում Ստորագրման ամսաթվին եւ ուժի մեջ են մնում ու գործում այնքան ժամանակ, քանի դեռ Համաձայնագրի շրջանակներում վճարման ենթակա բոլոր գումարները չեն վճարվել:

### 12.1 Ֆինանսական տեղեկությունները

Վարկառուն Վարկատուին է տրամադրում այնպիսի տեղեկություն, որը Վարկատուն կարող է ողջամտության սահմաններում պահանջել՝ կապված Վարկառուի արտաքին եւ ներպետական պարտքերի, ինչպես նաեւ երաշխավորված վարկի կարգավիճակի հետ:

### 12.2 Ծրագրի իրականացումը

Վարկատուի խնդրանքով Վարկառուն անհապաղ նրան է տրամադրում Ծրագրի եւ Հանրային քաղաքականության մատրիցայի իրականացման հետ կապված ցանկացած տեղեկություն կամ լրացուցիչ փաստաթղթեր:

### 12.3 Մշտադիտարկումը

Վարկառուն Մասհանումից առաջ Վարկատուին է տրամադրում քաղաքականության մատրիցայի 2-րդ ենթածրագրի շրջանակներում իրականացված քաղաքականության գործողությունները բացատրող մշտադիտարկման գրություն՝ հղում կատարելով Վարկատուին եւ Համաֆինանսավորողին տրամադրված համապատասխան փաստաթղթային ապացույցներին՝ քաղաքականության գործողությունների վերջնականացումը հիմնավորելու նպատակով:

#### 12.4 Համաֆինանսավորումը

Վարկառուն անհապաղ տեղեկացնում է Վարկատուին Համաֆինանսավորման մասով չեղարկման (ամբողջությամբ կամ մասամբ) կամ կանխավճարի մասին:

#### 12.5 Լրացուցիչ տեղեկությունները

Վարկառուն Վարկատուին տրամադրում է՝

ա) այնպիսի իրադարձության կամ հանգամանքի մանրամասները, որը համարվում է կամ կարող է համարվել Պարտավորությունների չկատարման դեպք կամ կարող է ունենալ էական բացասական ազդեցություն, ինչպես նաեւ տեղեկություններ՝ այդ դեպքի բնույթի եւ այն կարգավորելու համար ձեռնարկված կամ ձեռնարկվելիք բոլոր գործողությունների վերաբերյալ (առկայության դեպքում)՝ դրանց մասին տեղեկանալուց անմիջապես հետո,

բ) այնպիսի որոշման կամ իրադարձության մասին անմիջապես փոխանցվող մանրամասներ, որոնք կարող են ազդել Ծրագրի կազմակերպման, ավարտի կամ գործողության վրա:

### **13. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ**

#### 13.1 Պարտավորությունների չկատարման դեպքերը

Սույն 13.1 կետով (13.1 Պարտավորությունների չկատարման դեպքերը Պարտավորությունների չկատարման դեպքերը) սահմանված

յուրաքանչյուր դեպք կամ հանգամանք համարվում է Պարտավորությունների չկատարման դեպք:

**ա) Վճարման պարտավորությունը չկատարելը**

Վարկառուն վճարման օրը չի վճարում իր կողմից սույն Համաձայնագրով նախատեսված սույն Համաձայնագրով սահմանված կարգով վճարման ենթակա գումարը: Այնուամենայնիվ, չհակասելով 4.3 կետին (*ժամկետանց վճարման եւ պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը*)՝ «ա» կետի համաձայն Պարտավորությունների չկատարման դեպք տեղի չի ունենա, եթե այդպիսի վճարումը ամբողջությամբ կատարվի Վարկառուի կողմից վճարման օրվանից հինգ (5) Բանկային օրվա ընթացքում:

**բ) Հանձնառությունները եւ պարտավորությունները**

Վարկառուն չի բավարարում Համաձայնագրի որեւէ պայման, այդ թվում՝ առանց սահմանափակումների 11-րդ կետով (*Հանձնառությունները*) եւ 12-րդ կետով (*Տեղեկատվության առնչությամբ հանձնառությունները*) ստանձնած որեւէ հանձնառություն:

Բացառությամբ 11.4 կետի (*Բնապահպանական եւ սոցիալական պարասիսանապոլությունը*), ինչպես նաեւ 11.9 (*Ֆինանսական պարտավորությունների ցանկը եւ էմբարգոն*) եւ 11.10 կետերի (*Ֆինանսական միջոցների օրինական ծագումը, Արգելված գործելակերպերի բացառումը*) համաձայն տրված հանձնառությունների, որոնց մասով արտոնյալ ժամկետ չի թույլատրվում, սույն կետի «բ» պարբերության համաձայն Պարտավորությունների չկատարման դեպք տեղի չի ունենա, եթե պարտավորությունները կարող են կատարվել եւ կատարվում են հինգ (5) Բանկային օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Ա) Վարկառուն Վարկառուին չկատարման մասին ծանուցում է ուղարկում, եւ Բ) Վարկառուն տեղեկանում է խախտման մասին, կամ Վարկատուի կողմից որոշված ժամկետներում՝ 11.10 «ե» կետում նշված դեպքում (*Ֆինանսական միջոցների օրինական ծագումը, Արգելված գործելակերպերի բացառումը*) :

**գ) Կեղծ հայտարարությունները**

Վարկառուի կողմից սույն Համաձայնագրում, այդ թվում՝ 10-րդ կետում (Հայտարարությունները եւ երաշխիքները), կամ Վարկառուի կողմից կամ անունից սույն Համաձայնագրի համաձայն կամ դրա առնչությամբ տրամադրված որեւէ փաստաթղթում կատարված հայտարարությունները կամ երաշխիքները կեղծ են կամ ապակողմնորոշող կատարման պահին կամ այն պահին, երբ համարվում են կատարված:

**դ) Պարտավորությունների խաչաձեւ չկատարում**

i) Համաձայն (ii) կետի՝ Վարկառուի Ֆինանսական պարտքը չի վճարվում վճարման օրը, կամ եթե կիրառելի է՝ արտոնյալ ժամկետում, որը տրամադրվում է համապատասխան փաստաթղթերի համաձայն:

ii) Համաձայն կետի (iii)՝ պարտատերը չեղյալ է հայտարարել կամ կասեցրել է Վարկառուի նկատմամբ իր պարտավորությունը Ֆինանսական պարտքի պատճառով, կամ նախքան Ֆինանսական պարտքի մարման նշված ժամկետը այն հայտարարել է վճարման ենթակա, կամ պահանջել է Ֆինանսական պարտքի մասով լրիվ ծավալով կանխավճար՝ յուրաքանչյուր դեպքում, համապատասխան փաստաթղթերի համաձայն, պարտավորությունների չկատարման կամ նմանատիպ ազդեցություն (ինչպես էլ նկարագրված լինի) ունեցող որեւէ դրույթի չկատարման արդյունքում:

iii) Սույն 13.1 «դ» կետի համաձայն Պարտավորությունների չկատարման որեւէ դեպք տեղի չի ունենա, եթե (i) եւ (ii) կետերի շրջանակներում Ֆինանսական պարտքի համապատասխան գումարը կամ Ֆինանսական պարտքի մասով պարտավորությունը չգերազանցի տասը միլիոն եվրոն (10 000 000 ԵՎՐՈ) (կամ որեւէ այլ արժույթով (արժույթներով) դրա համարժեք գումարը):

**ե) Անօրինականությունը**

Վարկառուի կողմից սույն Համաձայնագրով նախատեսված իր պարտավորությունները կատարելն անօրինական է կամ դառնում է անօրինական:

**զ) Էական բացասական փոփոխությունը**

Տեղի է ունենում կամ, ամենայն հավանականությամբ, տեղի կունենա որեւէ իրադարձություն (այդ թվում՝ Վարկառուի երկրում քաղաքական իրավիճակի փոփոխություն) կամ միջոցառում, որը, ըստ Վարկատուի, ամենայն հավանականությամբ, կունենա էական բացասական ազդեցություն:

**է) Ծրագրից դուրս գալը կամ Ծրագրի կասեցումը**

Տեղի է ունենում նշվածներից որեւէ մեկը՝

i) Վարկառուն դուրս է գալիս Ծրագրից,

ii) Ծրագրի իրականացումը կասեցվում կամ հետաձգվում է Վարկառուի կողմից ավելի քան վեց (6) ամիս ժամկետով, կամ

**ը) Թույլտվությունները**

Վարկառուին սույն Համաձայնագրով նախատեսված իր որեւէ պարտավորություն կամ դրանց հետ համապատասխանություն ապահովելու համար անհրաժեշտ կամ Ծրագրի բնականոն ընթացքում պահանջվող որեւէ Թույլտվություն՝ ներառելով Վավերացումը, սակայն չսահմանափակվելով դրանով, ձեռք չի բերվել սահմանված ժամկետում կամ չեղարկվել է կամ անվավեր է դարձել կամ այլ կերպ դադարել է լիարժեք ուժի կամ գործողության մեջ լինել:

**թ) Էական բացասական ազդեցություն ունեցող վճիռները, ակտերը կամ որոշումները**

Ընդունվում է կամ հնարավոր է՝ ընդունվի Վարկառուին վերաբերող որեւէ վճիռ կամ արբիտրաժային վճիռ կամ որեւէ դատական կամ վարչական որոշում, որն ըստ Վարկատուի, ամենայն հավանականությամբ, կարող է ունենալ էական բացասական ազդեցություն:

**ժ) Ազատ փոխարկելիության եւ ազատ փոխանցման կասեցումը**

Վտանգվում է Վարկառուի կողմից սույն Համաձայնագրով վճարման ենթակա

գումարների կամ Վարկատուի կողմից Վարկառուին կամ Վարկառուի իրավասության ներքո գտնվող այլ վարկառուի տրամադրվող որեւէ վարկային միջոցի ազատ փոխարկելիությունը եւ (կամ) ազատ փոխանցումը:

### 13.2 Վարկի անհապաղ մարումը

Պարտավորությունների չկատարման դեպք տեղի ունենալուց հետո եւ ցանկացած ժամանակ Վարկատուն կարող է, առանց որեւէ պաշտոնական պահանջ ներկայացնելու կամ որեւէ դատական կամ արտադատական վարույթ սկսելու, Վարկառուին գրավոր ծանուցելու միջոցով՝

ա) չեղարկել Վարկային սահմանաչափի մնացորդը, եւ (կամ)

բ) հայտարարել, որ վարկային միջոցներն ամբողջությամբ կամ դրանց մի մասը ցանկացած հաշվեգրված կամ վճարման ենթակա տոկոսի հետ միասին, ինչպես նաեւ սույն Համաձայնագրով վճարման ենթակա բոլոր մյուս գումարները ենթակա են անհապաղ վճարման:

Չհակասելով վերոշարադրյալին՝ այն դեպքում, երբ տեղի է ունենում 13.1 կետով սահմանված (13.1 Պարտավորությունների չկատարման \_\_\_\_\_ դեպքերը)՝ պարտավորությունների չկատարման որեւէ դեպք, Վարկատուն իրավունք է վերապահում Վարկառուին գրավոր ծանուցելու միջոցով՝ i) կասեցնելու կամ հետաձգելու Վարկային միջոցների շրջանակներում որեւէ Մասհանում, եւ (կամ) ii) կասեցնելու հնարավոր որեւէ այլ ֆինանսական առաջարկի հետ կապված ցանկացած համաձայնագրի վերջնականացումը, որի մասին Վարկատուն ծանուցել է Վարկառուին, եւ (կամ) կասեցնելու կամ հետաձգելու Վարկառուի եւ Վարկատուի միջեւ կնքված որեւէ վարկային համաձայնագրի ցանկացած մասհանում:

Եթե Համաֆինանսավորողի կողմից այդ Համաֆինանսավորողի եւ Վարկառուի մեջ համաձայնության հիման վրա հետաձգվել կամ կասեցվել է որեւէ մասհանում, ապա Վարկատուն իրավունք է վերապահում հետաձգելու կամ կասեցնելու Վարկային միջոցների շրջանակներում որեւէ Մասհանում՝ դրա մասին գրավոր ծանուցում ուղարկելով Վարկառուին:

### 13.3 Պարտավորությունների չկատարման դեպքի մասին ծանուցումը

Վարկառուն, տեղեկանալով որեւէ դեպքի մասին, որը Պարտավորությունների չկատարման դեպք է կամ կարող է լինել Պարտավորությունների չկատարման դեպք, 12.5-րդ կետին (*Լրացուցիչ տեղեկությունները*) համապատասխան անհապաղ ծանուցում է Վարկատուին եւ տեղեկացնում է այն բոլոր միջոցների մասին, որոնք Վարկառուն նախատեսել է այն կարգավորելու համար:

## **14. ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

### 14.1 Վճարումները

Սույն Համաձայնագրի շրջանակներում Վարկատուի կողմից ստացված բոլոր վճարումները կիրառվում են ծախսերի, վճարների, տոկոսների, մայր գումարների կամ սույն Համաձայնագրով նախատեսված՝ վճարման ենթակա ցանկացած այլ գումարի վճարման նկատմամբ՝ հետեւյալ հաջորդականությամբ.

- ա) չնախատեսված ծախսեր եւ ծախքեր,
- բ) վճարներ,
- գ) ժամկետանց վճարման տոկոս եւ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոս,
- դ) հաշվեգրված տոկոս,
- ե) մայր գումարի մարում:

Վարկառուի կողմից ստացված ցանկացած վճարում առաջին հերթին կիրառվում է Վարկային միջոցների շրջանակներում վճարման ենթակա գումարներում կամ դրանց նկատմամբ կամ Վարկատուի կողմից Վարկառուին տրամադրված այլ վարկերի շրջանակներում, եթե Վարկատուի շահերից բխում է այդ գումարները կիրառել այդպիսի այլ վարկերի նկատմամբ՝ վերոնշյալ հաջորդականությամբ:

### 14.2 Հաշվանցումը

Առանց Վարկառուի նախնական համաձայնության՝ Վարկատուն կարող է ցանկացած ժամանակ հաշվանցել Վարկառուի կողմից վճարման ենթակա պարտավորությունները Վարկառուի անունից Վարկատուի կողմից տիրապետվող գումարների դիմաց կամ Վարկատուի կողմից Վարկառուին վճարման ենթակա որեւէ պարտավորություն: Եթե պարտավորությունները տարբեր արժույթներով են, ապա հաշվանցման նպատակով Վարկատուն կարող է ցանկացած պարտավորություն փոխարկել գերիշխող արժույթի փոխարժեքով:

Սույն Համաձայնագրով Վարկառուի կողմից կատարված բոլոր վճարումները հաշվարկվում եւ կատարվում են առանց հաշվանցման: Վարկառուին արգելվում է որեւէ հաշվանցում կատարել:

#### 14.3 Բանկային օրերը

Չհակասելով Տոկոսների հաշվարկման ժամանակահատվածի հաշվարկին, որն անփոփոխ է մնում, այն դեպքում, երբ վճարումը պետք է կատարվի որեւէ ոչ Բանկային օր, այդ վճարման կատարման օր է համարվում հաջորդ Բանկային օրը, եթե հաջորդ Բանկային օրն օրացուցային նույն ամսվա օր է, կամ նախորդ Բանկային օրը, եթե հաջորդ Բանկային օրն օրացուցային նույն ամսվա օր չէ:

#### 14.4 Վճարման արժույթը

Սույն Համաձայնագրով վճարման ենթակա յուրաքանչյուր գումարի արժույթը Եվրոն է՝ բացառությամբ 14.6-րդ կետով (*Վճարման վայրը*) նախատեսված դեպքերի:

#### 14.5 Տոկոսների հաշվարկման բազան

Սույն Համաձայնագրով հաշվեգրված ցանկացած տոկոս, վճար կամ ծախս կհաշվարկվի անցած օրերի փաստացի թվի եւ տարին երեք հարյուր վաթսուն (360) օրվա հիման վրա՝ եվրոպական միջբանկային շուկայի գործելակերպին համապատասխան:

#### 14.6 Վճարման վայրը

ա) Վարկատուի կողմից Վարկային միջոցների շրջանակներում Վարկառուին փոխանցված ցանկացած ֆինանսական միջոց կվճարվի Վարկառուի կողմից հատուկ այդ նպատակով նշված բանկային հաշվին՝ պայմանով, որ Վարկատուն ընտրված բանկի մասով տվել է իր նախնական համաձայնությունը:

Վարկառուն կարող է պահանջել, որ դրամական միջոցները փոխանցվեն՝ i) եվրոյով՝ եվրոյով արտահայտված բանկային հաշվին. կամ ii) Վարկառուի իրավագործության սահմաններում օրինական վճարամիջոցով՝ Մասհանման համարժեք գումարի չափով՝ Մասհանման օրվա դրությամբ շուկայական փոխարժեքով եւ այդ արժույթով արտահայտված բանկային հաշվին՝ պայմանով, որ այդպիսի արժույթը փոխարկելի է եւ փոխանցելի. կամ iii) ցանկացած այլ փոխարկելի եւ փոխանցելի արժույթով՝ Մասհանման օրվա դրությամբ Մասհանման համարժեք գումարով եւ այդպիսի արժույթով արտահայտված բանկային հաշվին:

բ) Վարկառուի կողմից Վարկատուին կատարվող ցանկացած վճար վճարվում է վճարման ենթակա ամսաթվին՝ մինչեւ ժամը 11:00-ը (Փարիզի ժամանակով), հետեւյալ բանկային հաշվին՝

RIB կոդ՝ 30001 00064 00000040235 03

IBAN կոդ՝ FR76 3000 1000 6400 0000 4023 503

Ֆրանսիայի բանկ SWIFT կոդ (BIC)՝ BDFEFRPPCCT

որը բացվել է Վարկատուի կողմից Փարիզում՝ Ֆրանսիայի բանկում (գլխամասային գրասենյակ/հիմնական մասնաճյուղ), կամ Վարկատուի կողմից Վարկառուին ծանուցված ցանկացած այլ հաշվի:

գ) Վարկառուն Վարկատուին գումարների փոխանցման համար պատասխանատու բանկից պահանջում է դրամական փոխանցման վերաբերյալ ցանկացած հաղորդագրության մեջ համապարփակ ձեւով եւ ստորեւ սահմանված

կարգով (վերնագրի թվերը վկայակոչում են SWIFT MT 202 եւ 103 արձանագրությունները) տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

- Պրինցիպալը՝ անունը, հասցեն, բանկային հաշվեհամարը (դաշտ 50)
- Պրինցիպալի բանկը՝ անվանումը եւ հասցեն (դաշտ 52)
- Հղում՝ Վարկառուի անունը, Ծրագրի անվանումը, Համաձայնագրի ելքի համարը (դաշտ 70):

դ) Վարկառուի կողմից կատարված բոլոր վճարումները պետք է համապատասխանեն սույն 14.6-րդ կետին (*Վճարման վայրը*)՝ վճարման համապատասխան պարտավորությունն ամբողջությամբ կատարված համարելու համար:

#### 14.7 Վճարային համակարգերի խափանումը

Եթե Վարկատուն որոշի (իր հայեցողությամբ), որ տեղի է ունեցել Վճարային համակարգերի խափանման դեպք, կամ Վարկառուն ծանուցի Վարկատուին, որ տեղի է ունեցել Վճարային համակարգերի խափանում, ապա Վարկատուն՝

ա) կարող է, եւ Վարկառուի կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում, քննարկումներ կազմակերպել Վարկառուի հետ՝ նպատակ ունենալով համաձայնեցնել Վարկային միջոցների օգտագործման եւ տրամադրման առնչությամբ ցանկացած փոփոխություն, որը Վարկատուն կարող է անհրաժեշտ համարել տվյալ հանգամանքներում.

բ) պարտավոր չէ Վարկառուի հետ քննարկումներ կազմակերպել վերոնշյալ «ա» պարբերության մեջ նշված որեւէ փոփոխության առնչությամբ, եթե նրա կարծիքով դա գործնականում հնարավոր չէ կազմակերպել տվյալ հանգամանքներում, եւ ցանկացած դեպքում, եթե չունի այդպիսի փոփոխություններին համաձայնելու պարտավորություն, եւ

գ) պատասխանատվություն չի կրում որեւէ ծախսի, կորստի կամ պարտավորության համար, որն առաջանում է սույն 14.7-րդ կետի (*Վճարային*

համակարգերի խափանումը) համաձայն իր կողմից գործողությունների ձեռնարկման կամ չձեռնարկման հետեւանքով:

## 15. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### 15.1 Լեզուն

Սույն Համաձայնագրի լեզուն անգլերենն է: Եթե սույն Համաձայնագիրը թարգմանվում է մեկ այլ լեզվով, ապա հակասող մեկնաբանությունների կամ Կողմերի միջեւ վեճի դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

Սույն Համաձայնագրի համաձայն կամ դրա առնչությամբ կատարվող բոլոր ծանուցումները կամ տրամադրվող փաստաթղթերը պետք է լինեն անգլերեն:

Վարկատուն կարող է պահանջել, որ սույն Համաձայնագրի համաձայն կամ դրա առնչությամբ կատարվող ծանուցումը կամ տրամադրվող փաստաթուղթը, որն անգլերեն չէ, ուղեկցվի անգլերեն թարգմանությամբ, որի դեպքում գերակայում է անգլերեն թարգմանությունը, եթե այդ փաստաթուղթը որեւէ ընկերության կանոնադրական փաստաթուղթ, իրավական տեքստ կամ պաշտոնական այլ փաստաթուղթ չէ:

### 15.2 Հավաստումներն ու որոշումները

Սույն Համաձայնագրից բխող կամ դրա առնչությամբ որեւէ դատավարության ընթացքում կամ արբիտրաժային վարույթում Վարկատուի կողմից վարվող հաշիվներին արված մուտքերը դրանց առնչվող հարցերի *prima facie* (առերեսույթ) ապացույցն են:

Վարկատուի կողմից սույն Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի կամ գումարի մասին ցանկացած հավաստում կամ որոշում ակնհայտ սխալի

բացակայության դեպքում կլինի այն հարցերի առնչությամբ վերջնական ապացույցը, որին այն վերաբերում է:

### 15.3 Մասնակի անվավերությունը

Եթե ցանկացած ժամանակ սույն Համաձայնագրի որեւէ պայման անօրինական է, անվավեր կամ ենթակա չէ կատարման կամ դառնում է այդպիսին, ապա դա որեւէ ազդեցություն չի ունենա սույն Համաձայնագրի մյուս դրույթների վավերության, օրինականության կամ կատարման ենթակա լինելու վրա կամ չի խաթարի դրանք:

### 15.4 Իրավունքից հրաժարվելու բացառումը

Վարկատուի կողմից Համաձայնագրով նախատեսված ցանկացած իրավունք չիրականացնելը կամ դրա իրականացումն ուշացնելը չի համարվում այդ իրավունքից հրաժարում:

Իրավունքի մասնակի իրականացումը չի խոչընդոտում այդ իրավունքի հետագա իրականացումը կամ կիրառելի օրենքով նախատեսված ցանկացած այլ իրավունքի կամ իրավական պաշտպանության միջոցի իրականացումը:

Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Վարկատուի իրավունքներն ու իրավական պաշտպանության միջոցները կուտակային են եւ չեն բացառում կիրառելի օրենքով նախատեսված որեւէ այլ իրավունք կամ պաշտպանության միջոց:

### 15.5. Ձեռնարկ

Վարկառուն չի կարող որեւէ ձեռով զիջել կամ փոխանցել սույն Համաձայնագրով նախատեսված իր բոլոր իրավունքներն ու պարտավորությունները կամ դրանցից որեւէ մեկը՝ առանց Վարկատուի նախնական գրավոր համաձայնության:

Վարկառուն կարող է սույն Համաձայնագրով նախատեսված իր ցանկացած իրավունք կամ պարտավորություն զիջել կամ փոխանցել որեւէ այլ երրորդ կողմի եւ կարող է կնքել դրա հետ կապված ցանկացած ենթամասնակցության

համաձայնագիր:

15.6. Իրավաբանական ուժը

Կից ներկայացվող հավելվածները եւ ներածական դրույթները սույն Համաձայնագրի մաս են կազմում եւ ունեն նույն իրավաբանական ուժը:

15.7. Ամբողջական համաձայնագիրը

Ստորագրման ամսաթվի դրությամբ սույն Համաձայնագրով ներկայացվում է Կողմերի միջեւ ձեռք բերված ամբողջական համաձայնությունը դրանում ամրագրված հարցերի վերաբերյալ, եւ դրանով չեղյալ են ճանաչվում եւ փոխարինվում բոլոր նախկին փաստաթղթերը, համաձայնագրերը կամ մեկնաբանությունները, որոնք կարող են փոխանակված կամ փոխանցված լինել սույն Համաձայնագրի հետ կապված բանակցությունների շրջանակներում:

15.8. Փոփոխությունները

Սույն Համաձայնագրում որեւէ փոփոխություն չի կարող կատարվել, եթե Կողմերի միջեւ հստակ գրավոր համաձայնություն ձեռք չի բերվել:

Ցանկացած փոփոխություն, որը որեւէ էական փոփոխություն չի առաջացնի Կողմերի պարտավորությունների մեջ, կարող է կատարվել փոխադարձ գրավոր համաձայնությամբ եւ ուժի մեջ մտնել երկու Կողմերի կողմից ստորագրման օրվանից՝ առանց հետագա Վավերացում պահանջելու՝ պայմանով, որ i) հարգվեն Հայաստանի օրենքներն ու կանոնակարգերը, եւ ii) ապահովվեն սույն փոփոխության շրջանակներում Վարկառուի պարտավորությունների օրինականությունը, վավերականությունը, կիրառելիությունը եւ ընդունելիությունը:

15.9. Գաղտնիությունը. Տեղեկությունների բացահայտումը

ա) Յուրաքանչյուր Կողմ առանց մյուս Կողմի նախնական համաձայնության չի բացահայտում սույն Համաձայնագրի բովանդակությունը որեւէ երրորդ կողմի՝ բացառությամբ՝

i) իր աուդիտորների, փորձագետների, վարկանիշային

գործակալությունների, իրավական խորհրդատուների կամ վերահսկող մարմինների. եւ

ii) որեւէ անձի, որի առաջ բացահայտող այդ Կողմն ունի կիրառելի ցանկացած օրենքով, կանոնակարգով կամ դատական որոշմամբ սահմանված բացահայտման պարտավորություն:

բ) Բացի այդ՝ Վարկատուն Ծրագրին առնչվող ցանկացած տեղեկություն կամ փաստաթուղթ կարող է բացահայտել՝ i) որեւէ անձի կամ մարմնի, որին Վարկատուն կարող է զիջել կամ փոխանցել սույն Համաձայնագրով նախատեսված իր բոլոր իրավունքները կամ պարտավորությունները կամ դրանց մի մասը, ii) Ֆրանսիայի պետությանը եւ մասնավորապես՝ այն նախարարություններին, որոնց Վարկատուն հաշվետու է Վարկատուի գործունեության նպատակներով, iii) որեւէ անձի կամ մարմնի՝ պաշտպանության որեւէ միջոց ձեռնարկելու կամ Համաձայնագրով Վարկատուի իրավունքները պահպանելու նպատակով, եւ iv) Համաֆինանսավորողին:

գ) Ավելին, Վարկատուն սույնով հստակորեն լիազորում է Վարկատուին՝

i) փոխանակել Ֆրանսիայի Հանրապետության հետ՝ ֆրանսիական կառավարության կայքում հրապարակման համար՝ Միջազգային օժանդակության թափանցիկության նախաձեռնության ցանկացած պահանջով, եւ

ii) հրապարակել Վարկատուի կայքում՝

Ծրագրի եւ դրա ֆինանսավորման վերաբերյալ տեղեկություններ, ինչպես թվարկված է 6-րդ հավելվածում (Տեղեկություններ, որոնք կարող են հրապարակվել Ֆրանսիայի կառավարության կայքում եւ Վարկատուի կայքում):

#### 15.10. Վաղեմության ժամկետը

Սույն Համաձայնագրի շրջանակներում ցանկացած պահանջի վաղեմության ժամկետը տասը (10) տարի է՝ բացառությամբ սույն Համաձայնագրով վճարման ենթակա տոկոսների առնչությամբ ցանկացած պահանջի:

### 15.11. Դժվարությունները

Կողմերից յուրաքանչյուրը սույնով ընդունում է, որ Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 1195-րդ հոդվածի դրույթները չեն կիրառվում իր նկատմամբ՝ կապված Համաձայնագրով նախատեսված իր պարտավորությունների հետ, եւ նա իրավունք չունի որեւէ պահանջ ներկայացնելու Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 1195-րդ հոդվածի համաձայն:

## 16. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

### 16.1 Գրավոր ծանուցումները եւ հասցեները

Ցանկացած ծանուցում, հարցում կամ այլ հաղորդագրություն, որը պետք է տրվի կամ ուղարկվի սույն Համաձայնագրի համաձայն կամ դրա առնչությամբ, պետք է տրվի կամ ուղարկվի գրավոր, եթե այլ բան նախատեսված չէ, եւ կարող է տրվել կամ ուղարկվել ֆաքսով կամ նամակով, որը փոստային բաժանմունքն ուղարկել է համապատասխան Կողմի ստորեւ նշված հասցեին եւ համարին՝

Վարկառուի դեպքում՝

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հասցե՝ Երեւան, 0010, Մելիք-Ադամյան 1-ին փողոց

Հեռախոս՝ +374 11 800 333

Հասցեատեր՝ Միջազգային համագործակցության վարչության պետ

Պետական պարտքի կառավարման վարչության պետ

Վարկառուի դեպքում՝

**ԶՅԳ՝ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ**

Հասցե՝ 34 Լ. ՎՐԱՍՏԱՆ, Թբիլիսի, 8-0179, Ճավճավաձե փողոց՝ BC «Pixel» FI

Հասցեատեր՝ ՋՖԳ-ի Հարավային Կովկասի տարածաշրջանային ներկայացուցչական գրասենյակի տնօրեն

Պատճենը՝

### **ՋՖԳ՝ ՓԱՐԻՉԻ ԳԼԽԱՄԱՍԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ**

Հասցե՝ Ֆրանսիա, 75598 Փարիզ Cedex 12, Ռոլան Բարթ 5 փողոց

Հեռախոս՝ + 33 1 53 44 31 31

Ֆաքսիմիլ՝ + 33 1 44 87 39 65

Հասցեատեր՝ ՋՖԳ Արեւելյան Եվրոպայի, Միջին Արեւելքի եւ Ասիայի բաժնի տնօրեն

կամ նմանատիպ այլ հասցե, ֆաքսի համար, բաժին կամ պաշտոնատար անձ, որի մասին Կողմերից մեկը ծանուցում է մյուս Կողմին:

#### **16.2 Հանձնումը**

Ցանկացած ծանուցում, հարցում կամ հաղորդագրություն, որը մի Կողմի կողմից ուղարկվել է մյուս Կողմին սույն Համաձայնագրի առնչությամբ, ուժի մեջ է միայն՝

ա) եթե ստացվել է ընթերնելի ձեւով՝ ֆաքսի դեպքում, եւ

բ) եթե հանձնվել է ճիշտ հասցեով՝ փոստային բաժանմունքի միջոցով ուղարկված նամակի դեպքում,

եւ այն դեպքում, երբ կոնկրետ անձը կամ բաժինը նշված է որպես 16.1 կետով (Գրավոր ծանուցումները եւ հասցեները) նախատեսված հասցեի մանրամասների մաս, եթե այդպիսի ծանուցումը, հարցումը կամ հաղորդագրությունը հասցեագրվել է այդ անձին կամ բաժնին:

### 16.3. Էլեկտրոնային հաղորդագրությունները

ա) Սույն Համաձայնագրի համաձայն կամ դրա առնչությամբ մի անձի կողմից մյուսին ուղարկվող ցանկացած հաղորդագրություն կարող է կատարվել էլեկտրոնային փոստով կամ այլ էլեկտրոնային եղանակով, եթե Կողմերը՝

i) համաձայնում են, որ եթե եւ քանի դեռ այլ ծանուցում չի ստացվել, դա լինելու է հաղորդակցության ընդունված ձեւաչափ,

ii) միմյանց գրավոր ծանուցում են իրենց էլեկտրոնային փոստի հասցեների եւ (կամ) ցանկացած այլ տեղեկության մասին, որը պահանջվում է այդ եղանակով տեղեկություններ ուղարկելն ու ստանալը հնարավոր դարձնելու համար, եւ

iii) միմյանց ծանուցում են իրենց հասցեի կամ իրենց կողմից տրամադրված ցանկացած այլ տեղեկության որեւէ փոփոխության մասին:

բ) Կողմերի միջեւ ուղարկվող ցանկացած էլեկտրոնային հաղորդագրություն ուժի մեջ է միայն ընթեռնելի ձեւով այն փաստացիորեն ստանալու դեպքում:

## **17. ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԴՈՄԻՑԻԼԻ [ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵԻ] ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

### 17.1 Կարգավորող իրավունքը

Սույն Համաձայնագիրը կարգավորվում է Ֆրանսիայի իրավունքով:

### 17.2 Արբիտրաժը

Սույն Համաձայնագրից բխող կամ դրա հետ կապված ցանկացած վեճ քննարկվում եւ վերջնականապես լուծվում է արբիտրաժի միջոցով՝ արբիտրաժային վարույթի մեկնարկի օրվա դրությամբ կիրառելի՝ Առեւտրի միջազգային պալատի հաշտեցման եւ արբիտրաժային կանոնների համաձայն, այդ Կանոններին համապատասխան նշանակված մեկ կամ մի քանի արբիտրների կողմից:

Արբիտրաժի վայրը Փարիզն է, իսկ արբիտրաժի լեզուն՝ անգլերենը:

Սույն արբիտրաժային դրույթը լիարժեք ուժի եւ գործողության մեջ կմնա, եթե սույն Համաձայնագիրն ուժը կորցրած ճանաչվի կամ դադարեցվի կամ չեղարկվի,

ինչպես նաև սույն Համաձայնագրի գործողության ավարտից հետո: Կողմերի՝ սույն Համաձայնագրով նախատեսված պայմանագրային պարտավորությունները չեն կասեցվում, եթե Կողմերից մեկը դատական վարույթ է հարուցում մյուս Կողմի դեմ:

Կողմերը հստակորեն համաձայնում են, որ ստորագրելով սույն Համաձայնագիրը՝ Վարկառուն անդառնալիորեն հրաժարվում է անձեռնմխելիության բոլոր իրավունքներից՝ կապված իրավագրության կամ կատարման հետ, որոնց վրա նա այլ կերպ կարող էր հիմնվել:

### 17.3 Դատական փաստաթղթի հանձնումը

Չհակասելով որեւէ կիրառելի օրենքի՝ վերոնշյալ որեւէ գործողության կամ վարույթի հետ կապված դատական եւ արտադատական փաստաթղթերի հանձնման նպատակով Վարկառուն դատական փաստաթղթերի հանձնման համար անփոփոխելիորեն ընտրում է սույն Համաձայնագրի կնքման ամսաթվի դրությամբ իր՝ 16-րդ կետով (Ծանուցումները) սահմանված իրավաբանական հասցեն, իսկ Վարկատուն դատական փաստաթղթերի հանձնման համար ընտրում է 16-րդ կետով (Ծանուցումները) սահմանված «AFD SIEGE» հասցեն:

## 18. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ամսաթվին, երբ Գործակալությունը Վարկառուից ստանում է IV հավելվածի (Նախապայմանները) II մասի (բ) (iii) պարբերությունում նշված ծանուցումը եւ լիարժեք ուժի ու գործողության մեջ է մնում, մինչեւ Համաձայնագրով վճարման ենթակա բոլոր գումարները վճարվեն: Գործակալությունը Վարկառուին տեղեկացնում է սույն ծանուցումն ստանալու օրվա մասին:

Չհակասելով վերոշարադրյալին՝ 15.9-րդ կետով (*Բացահայտումը. Տեղեկությունների գաղտնիությունը*) նախատեսված պարտավորությունները գործում են եւ լիարժեք ուժի եւ գործողության մեջ են մնում վերջին Վճարման ամսաթվից հետո հինգ (5) տարի ժամկետով:

## 19. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այն դեպքում, երբ սույն Համաձայնագիրը կնքվում է էլեկտրոնային ստորագրության միջոցով՝

ա) Յուրաքանչյուր Կողմ ընդունում է գիտակցում է, որ «CEGEDIM France»-ի կողմից առաջարկվող էլեկտրոնային ստորագրության լուծման օգտագործումը, ինչպես նաև դրա հետ կապված գործընթացը, էլեկտրոնային ստորագրություն է Քաղաքացիական օրենսգրքի 1367-րդ հոդվածի դրույթների իմաստով

բ) Յուրաքանչյուր Կողմ գիտակցում է ընդունում է, որ «CEGEDIM France»-ի կողմից Համաձայնագրի էլ դրան առնչվող բոլոր այն տեղեկությունների պահպանումը, որոնք գրանցված է (կամ) ստորագրված են էլեկտրոնային եղանակով, Քաղաքացիական օրենսգրքի 1379-րդ հոդվածի դրույթների համաձայն համապատասխանում է ամբողջականության վերաբերյալ պահանջին.

գ) Յուրաքանչյուր Կողմ գիտակցում է ընդունում է, որ Համաձայնագրում դիտարկվող ամսաթիվը էլ ժամանակավոր նշումները, ինչպես նաև էլեկտրոնային ստորագրությունները պարտադիր են էլ գերակա ուժ ունեն Կողմերի միջև

դ) Յուրաքանչյուր Կողմ գիտակցում է ընդունում է, որ Համաձայնագրի՝ «CEGEDIM France-ի» կողմից առաջարկվող էլեկտրոնային ստորագրությունն ունի հուսալիության բավարար մակարդակ՝ նույնականացնելու համար դա ստորագրողին էլ երաշխավորելու համար նրա կապն այն Համաձայնագրի հետ, որի վրա դրված է նրա ստորագրությունը

ե) Հետեւաբար Կողմերը համաձայն են, որ «CEGEDIM France»-ի կողմից առաջարկվող էլեկտրոնային ստորագրության լուծումը կրում է հուսալիության կանխավարկած, քանի դեռ հակառակն ապացուցված չէ, ինչը համարժեք է Քաղաքացիական օրենսգրքի 1367-րդ հոդվածի 2-րդ կետում էլ «էլեկտրոնային ստորագրությունների մասին» 2017 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 2017-1416 հրամանագրի 1-ին հոդվածում նշված որակավորված էլեկտրոնային ստորագրությանը տրված հուսալիության կանխավարկածին, այնպես որ օգտագործված գործընթացի անարժանահավատության ապացուցման բեռը կրում է «CEGEDIM France»-ի կողմից առաջարկվող էլեկտրոնային ստորագրության

լուծման հուսալիությունը վիճարկող Կողմը: Այսպիսով, Կողմերից յուրաքանչյուրը գիտակցում է բացահայտորեն ընդունում է, որ «CEGEDIM France»-ի կողմից առաջարկվող էլեկտրոնային ստորագրության լուծումն օգտագործելու միջոցով ստորագրված Համաձայնագիրը՝

i) ունի ապացուցողական նույն արժեքը, ինչ ստորագրված է (կամ) թվագրված թղթային գրավոր փաստաթուղթը.

ii) վավեր է եւ պարտադիր ուժ ունի իր եւ մյուս Կողմերի համար. եւ

iii) ընդունելի է դատարանների եւ (կամ) որեւէ մարմնի համար՝ որպես դրանց գոյության եւ դրանց կից իրավական ակտի բովանդակության բառացի ապացույց:

ա) Սույն հոդվածը ապացուցողական համաձայնագիր է՝ համաձայն Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 1368-րդ հոդվածի:

Կատարված է երկու (2) բնօրինակից, Երեսնում 2024 թվականի հունիսի 26-ին:

**ՎԱՐԿԱՌՈՒ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ՝**

---

Ի դեմս

Պրն Վահե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար

**ՎԱՐԿԱՏՈՒ՝**

**ԶԱՐԳԱՅՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ՝**

---

Ի դեմս

**Պրն Մաթյո Վասյեր**

**ՁՖԳ Եվրասիա տարածաշրջանային տնօրեն**

Համատեղ ստորագրող անձ, Նորին գերազանցություն **պրն Օլիվիե**  
**ԴԸԿՈՏԻՆՅԻ՝ Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի**  
**Հանրապետության դեսպան**

## ՀԱՎԵԼՎԱԾ 1Ա. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

<p><b>Կոռուպցիոն բնույթի արարք</b></p>	<p>նշանակում է ստորեւ նշվածներից որեւէ մեկը՝</p> <p>ա) պետական պաշտոնյային կամ ցանկացած իրավասության շրջանակներում մասնավոր հատվածի կազմակերպություն ղեկավարող կամ այնտեղ աշխատող որեւէ այլ անձի ուղղակիորեն կամ անուղղակիորեն ցանկացած բնույթի ոչ պատշաճ առավելություն խոստանալու, առաջարկելու կամ տալու արարք՝ տվյալ անձի կամ մեկ այլ անձի կամ կազմակերպության համար, որպեսզի տվյալ անձը գործի կամ ձեռնպահ մնա գործելուց՝ ի խախտումն իր իրավական, պայմանագրային կամ մասնագիտական պարտավորությունների՝ նպատակ ունենալով ներգործություն ունենալ նրա սեփական կամ մեկ այլ անձի կամ կազմակերպության գործողությունների վրա, կամ</p> <p>բ) պետական պաշտոնյայի կամ ցանկացած իրավասության շրջանակներում մասնավոր հատվածի կազմակերպություն ղեկավարող կամ այնտեղ աշխատող որեւէ այլ անձի արարք, որով նա ուղղակիորեն կամ անուղղակիորեն միջնորդում կամ ընդունում է ցանկացած բնույթի ոչ պատշաճ առավելություն՝ տվյալ անձի կամ մեկ այլ անձի կամ կազմակերպության համար, որպեսզի տվյալ անձը գործի կամ ձեռնպահ մնա գործելուց՝ ի խախտումն իր իրավական, պայմանագրային կամ մասնագիտական պարտավորությունների՝ նպատակ ունենալով ներգործություն ունենալ նրա սեփական կամ մեկ այլ անձի կամ կազմակերպության գործողությունների վրա:</p>
<p><b>Համաձայնագիր</b></p>	<p>նշանակում է վարկ տրամադրելու մասին սույն Համաձայնագիրը, ներառյալ՝ դրա ներածական դրույթները, հավելվածները եւ կիրառելիության դեպքում դրանցում գրավոր կատարված ցանկացած փոփոխություն:</p>
<p><b>Հակամրցակցային գործելակերպեր</b></p>	<p>նշանակում է՝</p> <p>ա) ցանկացած համաձայնեցված կամ ենթադրվող գործողություն, որի նպատակը եւ (կամ) հետեւանքն է խոչընդոտել, սահմանափակել կամ խեղաթյուրել արդար մրցակցությունը շուկայում, այդ թվում՝ առանց սահմանափակման, երբ այն հակված է՝ i) շուկայի հասանելիությունը կամ այլ ընկերությունների կողմից մրցակցության ազատ իրականացումը սահմանափակելուն, ii) շուկաներում «ազատ խաղի» միջոցով գների սահմանումը կանխելուն՝ արհեստականորեն նպաստելով այդ գների աճին կամ նվազմանը, iii) ցանկացած արտադրություն, շուկա, ներդրում կամ տեխնիկական առաջընթաց սահմանափակելուն կամ վերահսկելուն, կամ iv) շուկաները կամ մատակարարման աղբյուրները բաժանելուն,</p> <p>բ) ընկերության կամ ընկերությունների խմբի կողմից գերիշխող դիրքի ցանկացած չարաշահում ներքին շուկայի շրջանակներում կամ դրա զգալի հատվածում, կամ</p>

	գ) ցանկացած գնային հայտ կամ նվազեցված գին, որի նպատակը եւ (կամ) հետեւանքն է վերացնել շուկայից որեւէ ընկերություն կամ դրա որեւէ արտադրանք կամ կանխել ընկերության կամ դրա որեւէ արտադրանքի մուտքը շուկա:
<b>Թույլտվություն (թույլտվություններ)</b>	նշանակում է Լիազոր մարմնից ձեռք բերված կամ դրա կողմից տրամադրված ցանկացած թույլտվություն, համաձայնություն, հաստատում, որոշում, գործունեության իրավունք, լիցենզիա, արտոնություն, փաստաթղթավորում, նոտարական վավերացում կամ գրանցում կամ դրանց առնչությամբ ցանկացած բացառում՝ անկախ այն հանգամանքից՝ արդյոք դրանք տրամադրվել են ակտի միջոցով կամ համարվում են տրամադրված՝ սահմանված ժամկետում պատասխան չստանալու հիմքով, ինչպես նաեւ Վարկառուի պարտատերերի կողմից տրված ցանկացած հաստատում եւ համաձայնություն:
<b>Լիազոր մարմին (լիազոր մարմիններ)</b>	նշանակում է ցանկացած պետական կամ օրենքով սահմանված մարմին, վարչություն կամ պետական լիազորություն իրականացնող հանձնաժողով կամ ցանկացած վարչակազմ, դատարան, գործակալություն կամ պետություն կամ ցանկացած պետական, վարչական, հարկային կամ դատական մարմին:
<b>Վարկի տրամադրման ժամանակահատված</b>	նշանակում է Ստորագրման ամսաթվից (ներառյալ) մինչեւ Մասհանման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածը:
<b>Վարկային սահմանաչափի մնացորդ</b>	նշանակում է տվյալ ժամանակ 2.1 կետում (Վարկային միջոցները) նշված առավելագույն մայր գումարը՝ հանած՝ i) Վարկառուի կողմից կատարված բոլոր Մասհանումների հանրագումարը. ii) ցանկացած ակնկալվող Մասհանման հայտով կատարման ենթակա ցանկացած Մասհանման գումար. եւ iii) Վարկային միջոցների՝ 8.3 կետի (Վարկառուի կողմից չեղարկումը) եւ (կամ) 8.4 կետի (Վարկատուի կողմից չեղարկումը) համաձայն չեղարկված ցանկացած մաս:
<b>Վարկառուի հաշիվ</b>	նշանակում է Վարկառուի հաշվեհամարը Հայաստանի կենտրոնական բանկում, որի վերաբերյալ մանրամասները Վարկառուի կողմից կնշվեն Մասհանման հայտում
<b>Բանկային օր</b>	նշանակում է այն օրը (բացի շաբաթ կամ կիրակի օրերից), երբ Ֆրանսիայում բանկերը բաց են սովորական գործառնություններ իրականացնելու համար, եւ որը համարվում է TARGET օր այն դեպքում, երբ այդ օրվա դրությամբ պետք է կատարվի Մասհանում:
<b>Հաստատված</b>	ցանկացած պատճենի, լուսապատճենի կամ բնօրինակ փաստաթղթի այլ կրկնօրինակի համար նշանակում է պատշաճորեն լիազորված ցանկացած անձի հաստատում՝ բնօրինակ փաստաթղթի հետ տվյալ պատճենի, լուսապատճենի կամ այլ կրկնօրինակի

	համապատասխանության վերաբերյալ:
<b>Համաֆինանսավորող (Համաֆինանսավորողներ)</b>	նշանակում է Ծրագրի հետեւյալ համաֆինանսավորողները. Ասիական զարգացման բանկ (ԱՀԲ)՝ նախատեսված յոթանասուն միլիոն դոլարի չափով (75,000,000 ԱՄՆ դոլար):
<b>Համաֆինանսավորում</b>	նշանակում է Ծրագրի համար Համաֆինանսավորողի կողմից տրամադրվող ֆինանսավորում:
<b>Ֆինանսական միջոցների Մասհանման վերջնաժամկետ</b>	նշանակում է 2025 թվականի հունիսի 26ը, որից հետո Մասհանում այլեւս չի կարող կատարվել:
<b>Մասհանում</b>	նշանակում է Վարկատուի կողմից Վարկառուին տրամադրված բոլոր Վարկային միջոցների կամ դրանց մի մասի մասհանում՝ 3-րդ կետով (Ֆինանսական միջոցների մասհանումը) սահմանված պայմանների համաձայն, կամ այդ Մասհանման չմարված մայր գումարը, որը ենթակա է վճարման տվյալ ժամանակ:
<b>Մասհանման ամսաթիվ</b>	նշանակում է ամսաթիվ, երբ Վարկատուի կողմից տրամադրվում է Մասհանումը:
<b>Մասհանման ժամանակահատված</b>	նշանակում է ժամանակահատված, որը մեկնարկում է Մասհանման ամսաթվից մինչեւ (ներառյալ) հետեւյալ ամսաթվերից առաջինը՝ i) ամսաթիվ, երբ Վարկային սահմանաչափի մնացորդը հավասար է զրոյի. ii) Մասհանման վերջնաժամկետ:
<b>Մասհանման հայտ</b>	նշանակում է ըստ էության 5Ա հավելվածում (Մասհանման հայտի ձեւը) սահմանված ձեւն ունեցող հայտ:
<b>Էմբարգո</b>	նշանակում է առեւտրային բնույթի ցանկացած սանկցիա, որի նպատակն է արգելել տվյալ ժամանակահատվածում երկիր մուտք գործող կամ այդ երկրից դուրս եկող այն մեկ կամ մի քանի ապրանքների, արտադրանքի կամ ծառայությունների ցանկացած ներմուծում եւ (կամ) ցանկացած արտահանում (մատակարարում, վաճառք կամ փոխանցում), որոնք հրապարակվում ու ժամանակ առ ժամանակ փոփոխության են ենթարկվում Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության կամ Ֆրանսիայի կողմից:
<b>ԵՎՐԻԲՈՐ</b>	նշանակում է Բրյուսելի ժամանակով ժամը 11:00-ին Տոկոսների հաշվարկման ժամանակահատվածի առաջին օրվանից երկու (2) Բանկային օր առաջ Փողի շուկաների Եվրոպական ինստիտուտի (ՓՇԵԻ) կամ որեւէ իրավահաջորդ կառավարչի կողմից սահմանված՝ տվյալ ժամանակահատվածին համապատասխան ժամանակահատվածում Եվրոյով արտահայտված ցանկացած ավանդի դեպքում Եվրոյի նկատմամբ կիրառվող միջբանկային դրույքաչափ:
<b>Եվրո կամ EUR</b>	նշանակում է Եվրոպական տնտեսական եւ արժույթային միության անդամ պետությունների, այդ թվում՝ Ֆրանսիայի

	միասնական արժույթ, որն օրինական վճարամիջոց է այդ անդամ պետություններում:
<b>Պարտավորությունների չկատարման դեպք</b>	նշանակում է 13.1 կետում (Պարտավորությունների չկատարման դեպքերը) սահմանված որեւէ դեպք կամ հանգամանք:
<b>Վարկային միջոցներ</b>	նշանակում է սույն Համաձայնագրին համապատասխան՝ Վարկատուի կողմից 2.1 կետում (Վարկային միջոցները) սահմանված առավելագույն մայր գումարի չափով Վարկառուին տրամադրված վարկային միջոցներ:
<b>Ֆինանսական պարտք</b>	<p>նշանակում է ցանկացած ֆինանսական պարտք հետեւյալի համար եւ մասով.</p> <p>ա) կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ փոխառված ցանկացած դրամական միջոց.</p> <p>բ) պարտատոմսերի, մուրհակների, չապահովված պարտատոմսերի, փոխառության արժեթղթերի կամ ցանկացած համանման գործիքների թողարկմամբ ստացված ցանկացած գումար.</p> <p>գ) փոխառության առետրային հետեւանքներ առաջ բերող ցանկացած այլ գործարքի (այդ թվում՝ կատարման տարաժամկետմամբ առուվաճառքի պայմանագրի) արդյունքում ստացված ցանկացած ֆինանսական միջոց.</p> <p>դ) երաշխիքից, պարտատոմսից կամ որեւէ այլ գործիքից բխող վճարման ցանկացած հնարավոր պարտավորություն:</p>
<b>Ֆինանսական պատժամիջոցների ցանկ</b>	<p>նշանակում է այն անձանց, խմբերի կամ մարմինների ցանկ (ցանկեր), որոնց նկատմամբ Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության եւ Ֆրանսիայի կողմից կիրառվում են ֆինանսական պատժամիջոցներ:</p> <p>Ելնելով միայն տեղեկատվական եւ Վարկառուի համար հարմարավետության նկատառումներից՝ տրամադրվում են հետեւյալ հղումները կամ կայքերի հասցեները.</p> <p><b>Այն ցանկերի համար, որոնք վարում են Միավորված ազգերի կազմակերպությունը, Եվրոպական միությունը եւ Ֆրանսիան</b>, կարելի է այցելել հետեւյալ կայքը.</p> <p><a href="https://gels-avoires.dgtresor.gouv.fr/List">https://gels-avoires.dgtresor.gouv.fr/List</a></p>
<b>Ֆինանսավորման պլան</b>	նշանակում է որպես 3-րդ հավելված (Ֆինանսավորման պլանը) կցված՝ Ծրագրի ֆինանսական պլանը:
<b>Ֆիքսված կողմնորոշիչ դրույքաչափ</b>	նշանակում է տարեկան երեք ամբողջ քսաներեք տոկոս (3.23%):
<b>Խարդախություն</b>	նշանակում է ցանկացած անազնիվ գործելակերպ (գործողություն կամ անգործություն), որը միտումնավոր կերպով նախատեսված է մյուսներին մոլորության մեջ գցելու, դրա հետեւանքով դիտավորյալ կերպով համապատասխան տարրեր թաքցնելու, իր համաձայնությանն անհավատարիմ մնալու կամ այն անվավեր դարձնելու, ցանկացած իրավական կամ

	<p>նորմատիվ պահանջ շրջանցելու եւ (կամ) Վարկառուի կամ երրորդ կողմի ներքին կանոններն ու ընթացակարգերը խախտելու համար՝ անօրինական օգուտ ստանալու նպատակով:</p>
<p><b>Եվրոպական համայնքի ֆինանսական շահերի դեմ ուղղված խարդախություն</b></p>	<p>նշանակում է ցանկացած դիտավորյալ գործողություն կամ անգործություն, որի նպատակն է վնաս հասցնել Եվրոպական միության բյուջեին, եւ ներառում է հետեւյալը. i) կեղծ, ոչ ճշգրիտ կամ թերի հաշվետվություններ կամ փաստաթղթեր օգտագործելը կամ ներկայացնելը, ինչը հանգեցնում է ֆինանսական միջոցների յուրացման կամ անօրինական պահման կամ Եվրոպական միության ընդհանուր բյուջեի միջոցների ցանկացած այլ անօրինական նվազեցման, ii) տեղեկություններ չբացահայտելը՝ նույն հետեւանքների առաջացմամբ, եւ iii) այդ ֆինանսական միջոցները դրանք սկզբնապես տրամադրելու նպատակներից տարբեր այլ նպատակներով յուրացնելը:</p>
<p><b>Արտոնյալ ժամանակահատված</b></p>	<p>նշանակում է Ստորագրման ամսաթվից մինչեւ այդ ամսաթվից հետո վաթսուն [60] ամիս անց ընկած ամսաթիվը ներառող ժամանակահատված, որի ընթացքում Վարկային միջոցներով նախատեսված որեւէ հիմնական գումար մարման ենթակա չէ:</p>
<p><b>Ապօրինի ծագում</b></p>	<p>նշանակում է դրամական միջոցներ, որոնք ձեռք են բերվել՝</p> <p>ա) ՖԱԹՖ 40 հանձնարարականների բառարանում «<i>Իրավախախտումների սահմանված կարեգորհաններ</i>»-ի ներքո նախատեսված որեւէ հիմնական իրավախախտում կատարելու միջոցով (<a href="https://www.fatf-gafi.org/media/fatf/documents/recommendations/pdfs/FATF%20Recommendations%202012.pdf">https://www.fatf-gafi.org/media/fatf/documents/recommendations/pdfs/FATF%20Recommendations%202012.pdf</a>),</p> <p>բ) ցանկացած կոռուպցիոն բնույթի արարքի միջոցով, կամ</p> <p>գ) Եվրոպական համայնքի ֆինանսական շահերի դեմ ուղղված խարդախության միջոցով, եթե կամ երբ դա կիրառելի է:</p>
<p><b>Ինդեքսային դրույքաչափ</b></p>	<p>նշանակում է TEC 10 օրական ինդեքս՝ տասնամյա անփոփոխ մարման դրույքաչափ, որը ցուցադրվում է յուրաքանչյուր օր Տեղեկատու ֆինանսական հաստատության գնանշման համապատասխան էջում, կամ ցանկացած այլ ինդեքս, որը կարող է փոխարինել TEC 10 օրական ինդեքսին:</p> <p>Ստորագրման ամսաթվին Ինդեքսային դրույքաչափը տարեկան երեք ամբողջ տասնհինգ տոկոս (3.15 %) է:</p>
<p><b>Տոկոսների հաշվարկման ժամանակահատված (ժամանակահատվածներ)</b></p>	<p>նշանակում է Վճարման ամսաթվից (ներառյալ) մինչեւ հաջորդ Վճարման ամսաթիվը (բացառությամբ) ընկած յուրաքանչյուր ժամանակահատված: Վարկային միջոցներով իրականացվող յուրաքանչյուր Մասհանման դեպքում տոկոսների հաշվարկման առաջին ժամանակահատվածի մեկնարկը Մասհանման ամսաթիվն (ներառյալ) է, իսկ ավարտը՝ հաջորդ հերթական Վճարման ամսաթիվը (բացառությամբ):</p>
<p><b>Տոկոսադրույք</b></p>	<p>նշանակում է տոկոսադրույք, որն արտահայտված է</p>

	տոկոսային հարաբերակցության ձեռով եւ սահմանվում է 4.1 կետին (Տոկոսադրույքը) համապատասխան:
<b>Թույլատրելի սահմանաչափ</b>	նշանակում է տարեկան զրո ամբողջ հիսուն տոկոս (0.50%):
<b>Շուկայի ապակայունացման դեպք</b>	<p>նշանակում է հետեւյալ դեպքերից որեւէ մեկը.</p> <p>ա) Բրյուսելի ժամանակով ժամը 11:00-ին Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածի առաջին օրվանից երկու (2) Բանկային օր առաջ կամ Դրույքաչափի սահմանման ամսաթվի դրությամբ Փողի շուկաների եվրոպական ինստիտուտի (ՓՇԵԻ) կամ որեւէ իրավահաջորդ կառավարչի կողմից չի սահմանվել ԵՎՐԻԲՈՐ-ը. կամ</p> <p>բ) Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածի առաջին օրվանից երկու (2) Բանկային օր առաջ կամ Դրույքաչափի սահմանման ամսաթվի դրությամբ, մինչեւ Եվրոպական միջբանկային շուկայի աշխատանքային օրվա ավարտը, Վարկառուն Վարկատուից ստանում է ծանուցում առ այն, որ՝ i) համապատասխան միջբանկային շուկայում համարժեք միջոցների ձեռքբերման՝ Վարկատուին վճարման ենթակա արժեքը Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածում կգերազանցի ԵՎՐԻԲՈՐ-ը. կամ ii) համապատասխան միջբանկային շուկայում գործունեության բնականոն ընթացքում այն չի կարող կամ չի կարողանալու ձեռք բերել համարժեք միջոցներ՝ համապատասխան ժամանակահատվածում համապատասխան Մասհանման ֆինանսավորումն ապահովելու համար:</p>
<b>Էական բացասական ազդեցություն</b>	<p>նշանակում է էական բացասական ազդեցություն՝</p> <p>ա) Ծրագրի վրա՝ այնքանով, որքանով այն կվտանգի սույն Համաձայնագրին համապատասխան Ծրագրի իրականացումը եւ կառավարումը.</p> <p>բ) Վարկառուի ձեռնարկատիրական գործունեության, ակտիվների, ֆինանսական դրության կամ սույն Համաձայնագրով նախատեսված իր պարտավորությունները կատարելու կարողության վրա.</p> <p>գ) սույն Համաձայնագրի վավերության կամ կատարման ենթակա լինելու վրա.</p> <p>դ) Վարկատուի՝ սույն Համաձայնագրով նախատեսված ցանկացած իրավունքի կամ իրավական պաշտպանության միջոցի իրականացման վրա:</p>
<b>ԶՏԳ ֆինանսական միջոցների կամ ակտիվների ոչ նպատակային օգտագործում</b>	նշանակում է Վարկատուին պատկանող ռեսուրսների, գույքի կամ ակտիվների ոչ համապատասխան, ոչ պատշաճ օգտագործում եւ (կամ) չարաշահում, որը կատարվել է գիտակցաբար, անխոհեմաբար կամ անզգուշությամբ:
<b>Փողերի լվացում</b>	<p>նշանակում է՝</p> <p>ա) այնպիսի հանցագործություն կամ զանցանք կատարած անձի ակտիվների կամ եկամուտների ծագման կեղծ</p>

	<p>հիմնավորմանը ցանկացած միջոցով նպաստելու արարք, որը նրան ուղղակի կամ անուղղակի օգուտ է բերել. կամ</p> <p>բ) հանցագործությունից կամ զանցանքից ստացված ուղղակի կամ անուղղակի եկամուտներում ներդրումներ կատարելուն աջակցելու, դրանք թաքցնելու կամ փոխակերպելու գործողություն:</p>
<p><b>Ոչ համագործակցային գործելակերպեր</b></p>	<p>նշանակում է՝</p> <p>ա) քննությանն էականորեն խոչընդոտելու համար ապացույցներ կամ այլ տեղեկություններ, փաստաթղթեր կամ գրառումներ ոչնչացնելու, կեղծելու, փոփոխելու, թաքցնելու կամ անհիմն կերպով պահելու գործողություն, որը պետք է բացահայտվի Արգելված գործելակերպերի վերաբերյալ ենթադրության հետ կապված Վարկատուի կողմից իրականացվող քննության առնչությամբ, կամ սուտ ցուցմունքներ տալու գործողություն՝ Արգելված գործելակերպերի վերաբերյալ ենթադրության քննությանն էականորեն խոչընդոտելու համար. կամ</p> <p>բ) որեւէ կողմին սպառնալու, նրա նկատմամբ ոտնձգություն կատարելու կամ նրան վախեցնելու գործողությունը՝ թույլ չտալու համար Վարկատուի կողմից իրականացվող քննության վերաբերյալ տեղեկությունների բացահայտումը կամ քննության շարունակումը. կամ</p> <p>գ) ցանկացած գործողություն, որն իրականացվում է՝ նպատակ ունենալով էականորեն խոչընդոտել Արգելված գործելակերպերի վերաբերյալ ենթադրության վրա հիմնված քննության համատեքստում աուդիտ, տեսչական ստուգումներ անցկացնելու կամ տեղեկությունների հասանելիության ունենալու Վարկատուի պայմանագրային իրավունքները վերջինիս կողմից իրականացնելուն:</p>
<p><b>Քաղաքականության մատրիցա</b></p>	<p>նշանակում է</p> <ul style="list-style-type: none"> <li>- նախքան Համաֆինանսավորողի Խորհրդի հաստատումը՝ հանրային քաղաքականության մատրիցա, որը կցված է որպես ՅԲ հավելված, եւ որում նշվում են քաղաքականության գործողությունները, որոնց շուրջ համաձայնություն է ձեռք բերվել Կողմերի միջև՝ Ծրագրի իրականացման նպատակով:</li> <li>- Համաֆինանսավորողի Խորհրդի հաստատումից հետո՝ հանրային քաղաքականության մատրիցա, որը հաստատվել է Համաֆինանսավորողի Խորհրդի կողմից և որն ընդգրկում է Կողմերի միջև համաձայնեցված քաղաքականության գործողությունները Ծրագրի իրականացման համար:</li> </ul>
<p><b>Մայր գումարի չմարված մնացորդ</b></p>	<p>նշանակում է ցանկացած Մասհանման առնչությամբ այդ Մասհանման նկատմամբ վճարման ենթակա մայր գումար, որը համապատասխանում է Վարկատուի կողմից</p>

	Վարկառուին վճարված Մասհանման գումարին՝ հանած այդ Մասհանման մասով Վարկառուի կողմից Վարկատուին վճարված մայր գումարի մասնակի վճարների հանրագումարը:
<b>Վճարման ամսաթվեր</b>	նշանակում է յուրաքանչյուր տարվա մարտի 15-ը եւ սեպտեմբերի 15-ը:
<b>Վճարային համակարգերի խափանման դեպք</b>	<p>նշանակում է ստորեւ նշվածներից որեւէ մեկը կամ երկուսն էլ.</p> <p>ա) վճարային կամ հաղորդակցական համակարգերի կամ ֆինանսական շուկաների գործունեության էական խափանում, որոնցից յուրաքանչյուրը պետք է գործի Վարկային միջոցների մասով վճարումները կատարելու համար (կամ էլ սույն Համաձայնագրով նախատեսված գործարքներն իրականացնելու համար)՝ պայմանով, որ խափանումը չի պատճառվել Կողմերից որեւէ մեկի կողմից, կամ այն տեղի է ունեցել Կողմերի կամքից անկախ. կամ</p> <p>բ) որեւէ այլ դեպք, որի հետեւանքով տեղի է ունենում Կողմի գանձապետական կամ վճարային գործառնությունների իրականացման խափանում (տեխնիկական կամ համակարգային բնույթի), ինչը թույլ չի տալիս, որ այդ Կողմը կամ որեւէ այլ Կողմ՝</p> <p>i) կատարի սույն Համաձայնագրով նախատեսված իր վճարման պարտավորությունները. կամ</p> <p>ii) հաղորդակցվի մյուս Կողմերի հետ սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխան.</p> <p>iii) եւ որը չի պատճառվել Կողմերից որեւէ մեկի կողմից եւ եղել է նրանց կամքից անկախ:</p>
<b>Կանխավճարի փոխհատուցում</b>	<p>նշանակում է փոխհատուցում, որը հաշվարկվում է՝ վաղաժամկետ մարվող Վարկային միջոցների գումարին ավելացնելով ստորեւ նշված տոկոսները՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- եթե մարումը կատարվում է Ստորագրման ամսաթվի եւ Ստորագրման ամսաթվից 10-րդ տարվա (բացառությամբ) միջեւ ընկած ժամանակահատվածում՝ երեք տոկոս (3%).</li> <li>- եթե մարումը կատարվում է Ստորագրման ամսաթվից 10-րդ տարվա (ներառյալ) եւ 15-րդ տարվա (բացառությամբ) միջեւ ընկած ժամանակահատվածում՝ երկու ամբողջ երկու տոկոս (2.2%).</li> <li>- եթե մարումը կատարվում է Ստորագրման ամսաթվից 15-րդ տարվա (ներառյալ) եւ 20-րդ տարվա (բացառությամբ) միջեւ ընկած ժամանակահատվածում՝ մեկ տոկոս (1%).</li> <li>- եթե մարումը կատարվում է Ստորագրման ամսաթվի 20-րդ տարին (ներառյալ) լրանալուց հետո՝ զրո ամբողջ հիսուն տոկոս (0.5%):</li> </ul>
<b>Ծրագիր</b>	նշանակում է 2-րդ հավելվածում (Ծրագրի նկարագրությունը) նկարագրված Ծրագիրը:
<b>Ծրագրի ավարտի ամսաթիվ</b>	նշանակում է Ծրագրի՝ տեխնիկական առումով ավարտի

	ամսաթիվը, որը ենթադրաբար կլինի 2025 թվականի հունիսի 30-ը:
<b>Արգելված գործելակերպ (գործելակերպեր)</b>	Նշանակում է Հակամրցակցային գործելակերպեր, Կոռուպցիոն բնույթի արարքներ, Խարդախություն, Եվրոպական միության ֆինանսական շահերի դեմ ուղղված խարդախություն, Ոչ համագործակցային գործելակերպեր, ՁՖԳ ֆինանսական միջոցների կամ ակտիվների ոչ նպատակային օգտագործում, ինչպես նաև Փողերի վաճառման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենքի ցանկացած խախտում:
<b>Պետական պաշտոնյա</b>	Նշանակում է՝ i) օրենսդիր, գործադիր, վարչական կամ դատական պաշտոն զբաղեցնող ցանկացած անձ՝ նշանակված կամ ընտրված, որը գործում է մշտական կամ ժամանակավոր հիմունքներով կամ այլ կերպ, եւ վարձատրվում է կամ չի վարձատրվում՝ անկախ կոչումից, կամ ii) ցանկացած այլ անձ, որը սահմանված է որպես պետական պաշտոնյա՝ Վարկառուի երկրի ներպետական իրավունքի համաձայն, եւ iii) պետական գործառույթ իրականացնող ցանկացած այլ անձ՝ ի թիվս այլնի, պետական գործակալության կամ կազմակերպության համար, կամ պետական ծառայություն մատուցող ցանկացած այլ անձ:
<b>Դրույքաչափի սահմանման ամսաթիվ</b>	<p>Նշանակում է՝</p> <p>I. Տոկոսների հաշվարկման ցանկացած ժամանակահատվածի մասով, որի համար պետք է սահմանվի Տոկոսադրույք՝</p> <p>i) Վարկատուի կողմից Մասհանման հայտ ստանալու ամսաթվին հաջորդող առաջին չորեքշաբթին (կամ եթե այդ ամսաթիվը Բանկային օր չէ, ապա անմիջապես հաջորդող Բանկային օրը)՝ պայմանով, որ այդ ամսաթիվը հիշյալ չորեքշաբթիից առնվազն երկու (2) լրիվ Բանկային օր առաջ է.</p> <p>ii) Վարկատուի կողմից Մասհանման հայտ ստանալու ամսաթվին հաջորդող երկրորդ չորեքշաբթին (կամ եթե այս ամսաթիվը Բանկային օր չէ, ապա անմիջապես հաջորդող Բանկային օրը), եթե այդ ամսաթիվը վերելում՝ «ա» պարբերության մեջ նշված առաջին չորեքշաբթիից առնվազն երկու (2) լրիվ Բանկային օր առաջ է.</p> <p>II. Դրույքաչափի փոխարկման դեպքում՝</p> <p>i) Վարկատուի կողմից Դրույքաչափի փոխարկման հայտ ստանալու ամսաթվին հաջորդող առաջին չորեքշաբթին (կամ եթե այդ ամսաթիվը Բանկային օր չէ, ապա անմիջապես հաջորդող Բանկային օրը)՝ պայմանով, որ այդ ամսաթիվն առաջին չորեքշաբթիից առնվազն երկու (2) լրիվ Բանկային օր առաջ է.</p> <p>ii) Վարկատուի կողմից Դրույքաչափի փոխարկման հայտ ստանալու ամսաթվին հաջորդող երկրորդ չորեքշաբթին</p>

	(կամ եթե այդ ամսաթիվը Բանկային օր չէ, ապա անմիջապես հաջորդող Բանկային օրը), եթե այդ ամսաթիվն առաջին չորեքշաբթիից առնվազն երկու (2) լրիվ Բանկային օր առաջ է:
<b>Վավերացում</b>	նշանակում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) կողմից ընդունված՝ «Համաձայնագիրը որպես Հայաստանի Հանրապետության համար պարտադիր վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:
<b>Տեղեկատու ֆինանսական հաստատություն</b>	նշանակում է ֆինանսական հաստատություն, որը Վարկատուի կողմից ընտրվել է որպես համապատասխան տեղեկատու ֆինանսական հաստատություն, եւ որը պարբերաբար հրապարակում է ֆինանսական գործիքների գնանշումներ ֆինանսական տեղեկատվության միջազգային ցանցերից որեւէ մեկում՝ բանկային ոլորտում ճանաչված գործելակերպերին համապատասխան:
<b>Վերակազմավորում</b>	նշանակում է պարտքի ցանկացած վերակազմավորում եւ ընդհանուր առմամբ պարտքի կարգավորման ցանկացած գործողություն, որը նախաձեռնվել է (կամ) կազմակերպվել, ընդունվել է այնպիսի պաշտոնական կամ ոչ պաշտոնական շրջանակում, ինչպիսին Փարիզի ակումբն է:
<b>Հավելված (հավելվածներ)</b>	նշանակում է սույն Համաձայնագրի որեւէ հավելված կամ հավելվածները:
<b>Ստորագրման ամսաթիվ</b>	նշանակում է բոլոր Կողմերի կողմից սույն Համաձայնագիրը կնքելու ամսաթիվը:
<b>Դրույքաչափի սահմանման ստորագրման ամսաթիվ</b>	նշանակում է 2024 թվականի հունիսի 14
<b>TARGET օր</b>	նշանակում է օր, որի դրությամբ Իրական ժամանակում համախառն հաշվարկների արագ փոխանցման անդրեվրոպական ավտոմատացված համակարգը 2 (TARGET2) կամ դրա ցանկացած իրավահաջորդ հասանելի է Եվրոյով վճարումների հաշվարկման համար:
<b>Հարկ (հարկեր)</b>	նշանակում է ցանկացած հարկ, գանձում, հավաքագրում, տուրք կամ ցանկացած այլ վճարում կամ համանման պահում (այդ թվում՝ վճարման ենթակա ցանկացած տուգանք կամ տոկոս՝ չվճարելու կամ ցանկացած այդպիսի գումարի վճարումը որեւէ կերպ ուշացնելու կապակցությամբ):
<b>Ահաբեկչության ֆինանսավորում</b>	նշանակում է ուղղակիորեն կամ անուղղակիորեն միջոցների տրամադրում կամ հավաքագրում կամ կառավարում այն մտադրությամբ, որ դրանք պետք է օգտագործվեն, կամ գիտենալով, որ դրանք պետք է օգտագործվեն Ահաբեկչական գործողություն կատարելու նպատակով:
<b>Տեսանելիության եւ հաղորդակցության ուղեցույց</b>	նշանակում է Վարկատուի համար պարտադիր իրավաբանական ուժ ունեցող բոլոր պայմանագրային դրույթները, որոնք վերաբերում են ՀՖԳ-ի կողմից

	<p>Ֆինանսավորվող ծրագրերի առնչությամբ հաղորդակցությանը եւ դրանց տեսանելիությանը եւ ներառված են համապատասխանաբար «ԶՖԳ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրերի տեսանելիության ուղեցույց. Մակարդակ 1» կամ «ԶՖԳ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրերի համար նախատեսված հաղորդակցության ուղեցույց. Մակարդակ 2» վերտառությամբ փաստաթղթերում, որի օրինակը տրվել է Վարկառուին մինչեւ ստորագրումը:</p>
<b>Կայք</b>	<p>նշանակում է ԶՖԳ-ի կայքը (<a href="http://www.afd.fr/">http://www.afd.fr/</a>) կամ դրա փոխարեն ցանկացած այլ կայք:</p>
<b>Պահվող հարկ</b>	<p>նշանակում է սույն Համաձայնագրին համապատասխան կամ դրա հետ կապված ցանկացած վճարման նկատմամբ հաշվարկվող Հարկի մասով ցանկացած նվազեցում կամ պահում:</p>

## ՀԱՎԵԼՎԱԾ 1Բ. ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ա) «**ակտիվներ**»-ը ներառում են ցանկացած տեսակի ներկա եւ ապագա գույք, եկամուտ եւ իրավունք.

բ) «**Վարկառու**»-ին, «**Կողմ**»-ին կամ «**Վարկատու**»-ին կատարվող ցանկացած հղում ներառում է նրա իրավահաջորդներին, այն անձանց, որոնց մասով թույլատրվել է իրավունքների ու պարտավորությունների զիջումն ու փոխանցումը.

գ) Համաձայնագրին կամ այլ փաստաթղթի կատարվող ցանկացած հղում համարվում է սույն Համաձայնագրին կամ այդպիսի այլ փաստաթղթի կատարվող հղում՝ փոփոխված, վերահաստատված կամ լրացված, եւ կիրառելիության դեպքում ներառում է ցանկացած փաստաթուղթ, որը կարող է փոխարինել դրան պարտավորությունների փոխանցման միջոցով՝ Համաձայնագրին համապատասխան.

դ) «**Երաշխիք**»-ը ներառում է ցանկացած ապահովման միջոց կամ ցանկացած երաշխիք, որը պայմանավորված չէ այն պարտքով, որին այն վերաբերում է.

ե) «**պարտք**» նշանակում է ցանկացած անձի ցանկացած պարտավորություն (անկախ այն հանգամանքից, թե այդ պարտավորությունը կրում է որպես պրինցիպալ, թե՛ երաշխավորություն)՝ կապված գումարի վճարման կամ մարման հետ՝ ներկա, ապագա, փաստացի կամ պայմանական.

զ) «**անձ**»-ը ներառում է ցանկացած անձ, ընկերություն, կորպորացիա, ընկերակցություն, հավատարմագրային կառավարիչ, կառավարություն, պետություն կամ պետական գործակալություն կամ ցանկացած միավորում կամ վերոնշյալ երկու կամ ավելի սուբյեկտներից կազմված խումբ (անկախ առանձին իրավասուբյեկտություն ունենալու կամ չունենալու հանգամանքից).

է) «**կարգավորում**»-ը ներառում է ցանկացած պետական, միջպետական կամ վերագգային մարմնի, վերահսկողության մարմնի, կարգավորող մարմնի, անկախ վարչական մարմնի, գործակալության, ցանկացած այլ մարմնի կամ

կազմակերպության վարչության կամ որեւէ բաժնի ցանկացած օրենսդրություն, կարգավորում, կանոն, հրաման, պաշտոնական հրահանգ, հանձնարարություն, պահանջով դիմում, խորհուրդ, առաջարկություն, որոշում կամ ուղենիշ (անկախ օրենքի ուժ ունենալու կամ չունենալու հանգամանքից) (այդ թվում՝ արդյունաբերական կամ առետրային հանրային մարմնի կողմից ընդունված ցանկացած կարգավորում), որը սույն Համաձայնագրի կամ Կողմի իրավունքների եւ պարտավորությունների վրա ունի ազդեցություն.

ը) օրենքի որեւէ դրույթի արված հղումը դրա փոփոխված տարբերակին հղումն է.

թ) այլ բան նախատեսված չլինելու դեպքում օրվա ժամի համար պետք է հաշվի առնել Փարիզի ժամը.

ժ) բաժնի, կետի եւ հավելվածի վերնագրերը նախատեսված են միայն որոնման հարմարավետության համար եւ որեւէ ազդեցություն չունեն սույն Համաձայնագրի մեկնաբանման վրա.

ժա) այլ բան նախատեսված չլինելու դեպքում սույն Համաձայնագրին առնչվող ցանկացած այլ փաստաթղթում կամ սույն Համաձայնագրի առնչությամբ տրված ցանկացած ծանուցման մեջ օգտագործված բառերն ու արտահայտություններն այդ փաստաթղթում կամ ծանուցման մեջ ունեն միեւնույն նշանակությունը, ինչ նախատեսված է սույն Համաձայնագրով.

ժբ) Պարտավորությունների չկատարման դեպքը համարվում է «շարունակական», եթե այն չի վերացվել, կամ եթե Վարկատուն չի հրաժարվել դրա հետ կապված իր որեւէ իրավունքից.

ժգ) կետին կամ հավելվածին կատարվող հղումը համարվում է սույն Համաձայնագրի կետին կամ հավելվածին կատարվող հղում. եւ

ժդ) հոգնակի թիվ ունեցող բառերը պետք է նաեւ ներառեն եզակի թիվը եւ հակառակը:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### Հանրային քաղաքականության համար բյուջետային վարկ՝ Հայաստանում հանրային ծառայությունների մատուցման արդյունավետությունը եւ կայունությունը ու ֆինանսական ոլորտի զարգացումը բարելավելու նպատակով. Փուլ 2

#### 1. Ծրագրի նպատակները եւ բովանդակությունը

Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի կառավարությանը դրա հանրային ծառայությունների արդյունավետությունն ու կայունությունը եւ մասնավոր ներդրումների զարգացումը բարելավելու հարցում՝ կայուն եւ ներառական զարգացում ու բնակչության համար կյանքի առավել բարձր որակ ապահովելու համար: Այս բյուջետային ֆինանսավորման երկու հիմնական նպատակներն են՝ 1) ամրապնդել հանրային ֆինանսների կառավարման արդյունավետությունը եւ փողի ու կապիտալի շուկաների զարգացումը. 2) մշակել կանաչ տնտեսության անցման ռազմավարական շրջանակ եւ ներդնել հանրային ու մասնավոր ֆինանսավորման խթանմանն ուղղված գործիքներ՝ կլիմայական փոփոխությունների մեղմացման եւ հարմարեցման նպատակներն իրագործելու համար:

Սույն բյուջետային ֆինանսավորումը կկազմի բազմամյա ծրագրի մաս եւ կլինի Ասիական զարգացման բանկի բյուջետային աջակցությանը զուգահեռ ֆինանսավորում: Այն համալրվում է տեխնիկական աջակցությամբ՝ Ֆինանսների, Էկոնոմիկայի, Շրջակա միջավայրի նախարարություններում, Կենտրոնական բանկում եւ Պետական եկամուտների կոմիտեում նպատակային բարեփոխումների իրականացմանն աջակցելու համար:

Ծրագիրն ունի միջամտության երեք հիմնական թեմատիկ բաղադրիչ՝ i) հանրային ֆինանսների կառավարման համակարգի բարելավում՝ հանրային ծառայությունների արդյունավետ ու կայուն տրամադրման եւ ենթակառուցվածքի ապահովման համար. ii) պետական արժեթղթերի թողարկման եւ կառավարման շրջանակի ու փողի շուկաների ենթակառուցվածքի ամրապնդում. եւ iii)

ձեռնարկատիրական գործունեության ֆինանսավորման նոր գործիքների մշակում եւ առավել թափանցիկ կառավարման ապահովում:

Այս բաղադրիչները բաղկացած են հանրային քաղաքականության մատրիցայում (Հավելված 3Բ. Քաղաքականության մատրիցան) սահմանված հանրային քաղաքականության 18 նպատակից, որոնք պետք է իրագործվեն երեք փուլից / ենթածրագրից բաղկացած ծրագրային մոտեցման հիման վրա: Առաջին փուլն (ենթածրագիր 1) իրագործվել է 2022 թվականի սեպտեմբերին: Երկրորդ փուլը (ենթածրագիր 2), որն ապահովվում է սույն բյուջետային աջակցության վարկի միջոցներով, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի առաջին եռամսյակում: Երրորդ փուլը (ենթածրագիր 3) քննարկվում է 2024/2025 թվականների ժամանակահատվածի համար եւ կարող է ապահովվել հետագա բյուջետային աջակցության վարկի միջոցներով:

Հանրային քաղաքականության մատրիցայի յուրաքանչյուր նպատակի համար սահմանվում են հանրային քաղաքականության մի քանի գործողություններ եւ ներկայացված են երեք ենթածրագրերի շրջանակներում՝ շարունակականության տրամաբանությամբ:

## II. Հիմնական դերակատարները եւ իրականացման սխեման

Ֆինանսների նախարարությունը՝ որպես Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ, սույն ծրագրի կառավարիչն է: Այն կապահովի ծրագրի հանրային քաղաքականության մատրիցայի գործողությունների իրագործման նկատմամբ վերահսկողությունը Փոխվարչապետների գրասենյակների (ՓԳ), Էկոնոմիկայի նախարարության (ԷՆ), Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ), Արդարադատության նախարարության (ԱՆ), Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) եւ Հայաստանի կենտրոնական բանկի (ՀԿԲ) հետ ուղղակի համաձայնեցմամբ, որոնք առնչություն ունեն մատրիցայում նշված բարեփոխումների հետ: ԶՖԳ-ն գործում է ԱԶԲ-ին զուգահեռ՝ հիմք ընդունելով

հանրային քաղաքականության միասնական մատրիցան: Ֆինանսական միջոցների հատկացումը պայմանավորված է 2-րդ փուլի համար հանրային քաղաքականության մատրիցայում սահմանված բոլոր ցուցանիշների ապահովմամբ: Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված եւ ՋՖԳ-ի աջակցությամբ իրականացվող բարեփոխումները միջնաժամկետ բարեփոխումներ են: Այս բազմամյա եւ ծրագրային տրամաբանությունը հաստատվել է 2022 թվականին ՋՖԳ-ի, ԱԶԲ-ի եւ ՀՀ ՖՆ-ի միջեւ եռակողմ Փոխըմբռնման հուշագրով (ՓՀ): 2024 թվականին կկնքվի նոր ՓՀ՝ 2-րդ և 3-րդ ենթածրագրերը ներառելու համար:

Հանրային քաղաքականության մատրիցայում նշված բարեփոխումներին օժանդակելու նպատակով տրամադրվող Տեխնիկական աջակցությունը կշարունակվի իրականացվել ՋՖԳ-ի ծրագրի ուղղակի կառավարմամբ:

### III. Ծրագրի մշտադիտարկումը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ՋՖԳ-ին տրամադրում է մշտադիտարկման գրություն, որտեղ բացատրվում են քաղաքականության գործողությունները, որոնք իրականացվել են քաղաքականության մատրիցայի 2-րդ ենթածրագրով՝ հղում կատարելով ՋՖԳ-ին եւ ԱԶԲ-ին տրամադրվող համապատասխան փաստաթղթային ապացույցներին: Քաղաքականության գործողությունները, որոնք սահմանված են հանրային քաղաքականության մատրիցայով, եւ պլանավորված է, որ պետք է իրականացվեն Կառավարության կողմից 2024 թվականին (ենթածրագիր 2), այնուհետեւ 2024/2025 թվականների ընթացքում (ենթածրագիր 3), էական քայլեր են, որոնք նպաստում են արդյունքների մի քանի ցուցանիշների հասնելուն: Արդյունքների այն ցուցանիշները, որոնց պետք է նպաստեն քաղաքականության գործողությունները, մանրամասն ներկայացված են քաղաքականության մատրիցայում: Հատուկ ուշադրություն է դարձվում կլիմայական փոփոխության մեղմացմանը կամ

հարմարվողականությանն առնչվող քաղաքականության գործողություններին:

Ծրագրի գնահատմամբ (ենթածրագիր 1 եւ 2), որը 2024 թվականին կիրականացնի ՀՖԳ-ն, հատկապես կվերլուծվի քաղաքականության գործողությունների հաջող իրականացումը, Ծրագրի առանցքային նպատակներին նպաստելը, ինչպես նաեւ Ծրագրի ակնկալվող եւ ձեռք բերված քանակական արդյունքները:

## ՀԱՎԵԼՎԱԾ ՅԱ. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ

Ծրագրի նախանշված ֆինանսավորման պլանը ներկայացված է ստորել.

<b>Ֆինանսավորման պլան (նախանշված)</b>	<b>Գումարի չափը</b>
<b>ՁՖԳ</b> ՁՖԳ-ի կողմից տրամադրվող վարկ. Փուլ 2 (2023-24 թվական)	<b>75,000,000 ԵՎՐՈ</b>
<b>ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ</b> ԱԶԲ-ի կողմից տրամադրվող վարկ. Փուլ 2 (2023-24 թվական)	<b>75,000,000 ԱՄՆ ԴՈԼԱՐ</b>

## ՀԱՎԵԼՎԱԾ ՅԲ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՏՐԻՑԱ

Առաջարկվող փոփոխություններ ենթածրագիր 2-ում.

Քաղաքականության միջոցառումներ

(2022 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի հունիսի կեսը)

2.1. Միջնաժամկետ հարկաբյուջետային պլանավորման եւ բյուջետային հատկացումների բաշխման վերաբերյալ որոշումները եւ ազգային ռազմավարական եւ ոլորտային պլանավորման ուղղությունները (եւ բացահայտ բարձր մակարդակի տնտեսական եւ սոցիալական նպատակները/թիրախները) կապելու, միեւնույն ժամանակ բյուջետային գործընթացների եւ պետական ծախսերի արդյունավետությունը/ազդեցությունը բարձրացնելու, ինչպես նաեւ ազգային ռեսուրսները մոբիլիզացնելու (ԱՌՄ) համար Կառավարությունը՝

i) միջգերատեսչական ուսումնասիրության համար շրջանառության մեջ է դրել՝

ա) ռեսուրսների միջնաժամկետ հատկացման ազգային ռազմավարության պլանավորման ինստիտուցիոնալ համակարգ (այդ թվում, ի թիվս այլնի, կլիմայի փոփոխության, թվային, սոցիալական եւ գենդերային քաղաքականության նկատառումների հստակ պահանջները) ստեղծելու/գործարկելու վերաբերյալ նոր որոշման ռազմավարական հայեցակարգն ու լուծումները եւ դրանք բերել վերջնական տեսքի՝

բ) եւ վերջնական տեսքի բերել բարձր մակարդակի (առաջնահերթ) հիմնական բնութագրերի ցուցիչների (KPIs) (հետագա) միասնական գրանցամատյանում ամբողջ ծրագրային բյուջետավորման գործընթացի արդյունքամետությունն ուղղակիորեն ամրագրելու ռազմավարական հայեցակարգը՝ պահանջելով ազգային ռազմավարությունների միասնական նախագիծ՝ ցանկացած նոր ոլորտային ռազմավարության մեջ արդյունքամետության այս նոր չափանիշը հետագայում հստակ կիրառելու համար:

ii) 2024 թվականի պետական բյուջեի հաստատված փաթեթի միջոցով (որը ներկայացվել է Խորհրդարան եւ հաստատվել վերջինիս կողմից) արդեն իսկ հստակ կապեր է հաստատել բյուջետային ծրագրերի եւ Կառավարության ծրագրի հաստատված թիրախների միջեւ:

iii) Ֆինանսների նախարարության կողմից շրջանառվող օրենսդրական փոփոխությունների միջոցով փոփոխություններ է առաջարկել՝ բարելավելու ՄԺԾԾ-ի հավաստիությունը՝ միջնաժամկետ հարկաբյուջետային պլանավորման համար, եւ ճշգրտությունը՝ ընդհանուր տարեկան բյուջետային հատկացումների, այդ թվում՝ միջնաժամկետ (ճյուղային նախարարությունների մակարդակով) բյուջետային նախահաշվի, կապիտալ ծախսերի (CAPEX) տեղափոխման լուծումների եւ ՄԺԾԾ թարմացման շրջափուլի (բյուջետային գործընթացի շրջափուլի) համար:

iv) Ֆինանսների նախարարության բյուջեի մասով տրված հրահանգների

Առաջարկվող փոփոխություններ ենթածրագիր 2-ում.

Քաղաքականության միջոցառումներ

(2022 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի հունիսի կեսը)

միջոցով օրենքով սահմանված կարգով գենդերազգայուն բյուջետային պահանջները ներդրել է բոլոր նախարարություններում, միաժամանակ նաեւ՝

ա) միջգերատեսչական ուղղորդման համար շրջանառելով առաջարկներ՝ հետագա ֆինանսական տարիներին այս բարեփոխումն ավելի արդյունավետ դարձնելու համար (այդ թվում՝ Գենդերազգայուն բյուջետավորման վերաբերյալ ձեռնարկում կատարված շտկումները՝ դրա ընկալելիությունը բարձրացնելու համար)՝ համաձայնեցնելով Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության հետ,

բ) ընդլայնելով առաջարկվող բյուջետային ծրագրերի մասին պետական մարմինների հանրային խորհրդակցությունների ուղեցույցը (Բաց/Քաղաքացու բյուջեի նախաձեռնություններ)՝ գենդերային ասպեկտների ներառման եւ ԲՀԿ-ների իրազեկվածությունն ու գենդերազգայուն բյուջետավորման պահանջներին համապատասխանությունը մանրամասն ուսումնասիրելու կարողության բարձրացման համար.

գ) փորձարկելով մասնակցային բյուջետավորումը 4 համայնքներում:

v) Ֆինանսների նախարարության միջոցով ավարտել է առաջին ԿՀՆ բյուջեի նշագրման աշխատանքները 2024 թվականի «ուղիղ կապի» մակարդակով եւ հրապարակել այն 2024 թվականի պետական բյուջեի փաթեթի հետ: Բացի այդ, բյուջեի նշագրման առանձին համապարփակ աշխատանքը՝ ներառելու «անուղղակի կապի» մակարդակները (օրինակ՝ ԿՀՆ 13 ԿՓ գործողությունների վերաբերյալ) պատրաստվել եւ տարածվել է ճյուղային նախարարություններում՝ նախապատրաստվելով հաջորդ բյուջետային շրջափուլին՝ ԿՀՆ բյուջեի նշագրման ամբողջական ծրագրի հետ միասին (այդ թվում՝ ԿՀՆ 13 ԿՓ գործողությունների վերաբերյալ), որը պաշտոնապես տարածվել է (բոլորը հաջորդ բյուջետային շրջափուլի նախապատրաստման շրջանակներում):

vi) Խորհրդարանի կողմից Հարկային օրենսգրքում միկրոձեռնարկային հարկային ռեժիմների ընդգրկույթը լավարկելու եւ նորմատիվ իրավական բազայի փոփոխման արբիտրաժային ռիսկերը նվազեցնելու, ինչպես նաեւ հարկային արտոնությունների կիրառության շրջանակը կրճատելու համար կատարված անհրաժեշտ փոփոխությունների հաստատմամբ Ֆինանսների նախարարությունը կիրառել է կորսված մուտքի վերլուծության շրջանակը՝ ԱԱՀ հարկային արտոնությունների լավարկման տարբերակները բացահայտելու համար (որը հիմնված է կորսված մուտքի, տարածման հետեւանքների վերլուծության եւ այլընտրանքային քաղաքականությունների առկայության վրա): Մասնավորապես Ֆինանսների նախարարությունը՝

1) ստեղծել եւ ինստիտուցիոնալացրել է համակարգային եւ ստանդարտացված շրջանակ՝ ԱԱՀ արտոնությունների ծախս-օգուտ

Առաջարկվող փոփոխություններ ենթածրագիր 2-ում.

Քաղաքականության միջոցառումներ

(2022 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի հունիսի կեսը)

հարաբերակցությունը վերլուծելու և գնահատելու, ինչպես նաև կորսված մուտքը հաշվարկելու և հաշվետվությամբ ներկայացնելու համար,

2) մշակել՝ է հարկման պայմանագրի քաղաքականության շրջանակ և կրկնակի հարկման տիպային պայմանագիր (ԿՀՊ)<sup>1</sup> միջսահմանային գործարքներում կամ ներդրումներում կրկնակի հարկումը վերացնելու<sup>2</sup>, հարկերից խուսափելու (և դրանք շրջանցելու) դեպքերը նվազեցնելու համար, և այն կիրառում է առնվազն մեկ միջազգային պայմանագրային գործընկերոջ հետ բանակցությունների նկատմամբ,

3) Կառավարության անունից և օտարերկրյա ուղղակի ներդրումները խթանելու նպատակով, միաժամանակ պահպանելով ներքին հարկման բազան, իրականացրել է ՏՀՀԿ/Գ20-ի բազայի քայքայման և շահույթի տեղափոխման (ԲՔՇՏ) համապարփակ շրջանակը<sup>3</sup> և Ազատ տնտեսական գոտու և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում նախագծային ռեժիմների վնասակար հարկային միջոցները վերացնելու<sup>4</sup> և բ) Բազայի քայքայման և շահույթի տեղափոխման կանխարգելման համար միջոցների հետ կապված հարկային համաձայնագրերի իրականացման բազմակողմ կոնվենցիան իրականացնելու (MLI) միջոցով:

vii) Խորհրդարան է ներկայացրել Հարկային օրենսգրքի փոփոխությունները՝ Միասնական հաշվետվողական ստանդարտի (ՄՀՍ) ձեռնմուշի միջոցով ֆինանսական հաշվի Տեղեկատվության ավտոմատ փոխանակման (ՏԱՓ) ներդրման նպատակով: Բացի այդ, Պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ)<sup>5</sup> և միջգերատեսչական վերանայման համար շրջանառության մեջ է դրել հարկային օրենսգրքում օրենսդրական փոփոխություններ կատարելու

<sup>1</sup> Այն քաղաքականության տարբերակների վերաբերյալ ուղեցույց է ՖՆ պաշտոնյաների համար՝ ԿՀՊ բանակցությունների ընթացքում առաջնորդվելու նպատակով, բայց քանի որ վերջիններս իրականացվում են Արտաքին գործերի նախարարության կողմից, ՖՆ-ն չի կարող այն պաշտոնականացնել:

<sup>2</sup> Ծանոթագրություն. ԿՀՊ-ն ոչ միայն նպատակ ունի պայքարելու չարաշահման տարրեր պարունակող գործարքների դեմ, այլև նպատակ ունի խթանելու զուտ օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) և ներքին ռեսուրսների մոբիլիզացումը՝ i) կրկնակի հարկումը վերացնելու, ii) հարկային թափանցիկությունը բարելավելու (ՏՓ) և iii) վեճերի լուծման մեխանիզմների միջոցով: Ֆինանսների նախարարությունը մշակել է Հայաստանի հարկման տիպային պայմանագիրը և պայմանագրի քաղաքականությունը՝ «Կրկնակի հարկումը բացառելու մասին» ՏՀՀԿ-ի վերջին տիպային կոնվենցիային համապատասխան:

<sup>3</sup> Գոյություն ունեցող արտոնյալ հարկման ռեժիմների ինքնագնահատումն ավարտելուց և կրկնակի հարկման պայմանագրերում հայտնաբերված բացերը ՀԲՇՏ ստանդարտին համապատասխան գնահատելուց հետո:

<sup>4</sup> Խորհրդարանում հաստատման փուլում գտնվող ՀՏԳ (ԱՏԳ) վերաբերյալ օրենքներում օրենսդրական փոփոխություններ:

Առաջարկվող փոփոխություններ ենթածրագիր 2-ում.

Քաղաքականության միջոցառումներ

(2022 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի հունիսի կեսը)

առաջարկներ՝ ուղղված հարկման պլանավորման չարաշահմանը (օրինակ՝ փոխկապակցված անձանց եւ գործունեության այլ տեսակների), եւ բ) Կառավարությանը ներկայացրել է Ռազմավարական ծրագիր, որը ներառում է արդյունավետ գործիքի (այդ թվում՝ «Chatbot») ներդրումը, որը համակցված է արհեստական բանականության տարրերի հետ՝ հարկ վճարողի համար արագ տեղեկություններ ստանալու համար (հարկ վճարողների սպասարկման թվային գործունեություն):

viii) Խորհրդարանի կողմից օրենսդրական փոփոխությունները հաստատվելուց հետո, որոնք ապահովում են, որ մոլախաղերի հետ կապված գործունեությունը դառնում է ամբողջությամբ եւ խիստ անկանխիկ, Խորհրդարան է ներկայացրել օրենսդրական առաջարկներ՝ բարձր մակարդակի աուդիտներ պահանջելու համար (աուդիտորին փոխելու համար 3 տարի ժամկետով), եւ կառավարության որոշման նախագիծ, որը թույլ է տալիս ՖՆ-ին արգելափակել ապօրինի մոլախաղերի կայքերը եւ դրամապանակները: Մոլախաղերի ոլորտում խարդախության եւ փողերի լվացման դեմ պայքարի եւ հարկման բազայի ներդրումը մեծացնելու բարեփոխումների շրջանակներում Կառավարությունը (ՊԵԿ-ի նախաձեռնությամբ) պաշտոնապես կներկայացնի նաեւ օրենսդրական առաջարկներ՝ մոլախաղերի հետ կապված եւ այդ ոլորտում գործունեություն իրականացնողների գործունեությունը հավաստելու համար կարգավորող օպերատոր ստեղծելու նպատակով:

ix) Ֆինանսների<sup>ii</sup> նախարարությանը հանձնարարել է կատարել իր քարտուղարության դերը՝ ամբողջությամբ գործարկելու Բյուջեի հարցերով բարձր մակարդակի հանձնաժողովը՝ պետական բյուջեի եռամսյակային կատարումը վերահսկելու նպատակով:

x) բարեփոխումներ է իրականացրել հատկացումների բաշխման արդյունավետությունը բարձրացնելու եւ բյուջեի փաստահեն կառավարման ճկունությունը խթանելու համար, ի թիվս այլնի՝

ա) Խորհրդարանի կողմից բյուջետային համակարգերի մասին օրենքում առաջարկվող փոփոխությունների հաստատմամբ, որոնք խթանում են գնահատման գործառույթի արդյունավետությունը (օրինակ՝ իր հանձնարարագրի կատարումը)՝ ՖՆ-ին վերապահելով միջգերատեսչական վերանայման համար կատարման որոշումը շրջանառության մեջ դնելը, եւ

բ) Խորհրդարանի կողմից Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին օրենքում փոփոխությունների հաստատմամբ՝ ընդունելով Կառավարության որոշում եւ իրականացնելով կարգավորումներ՝ ապահովելով, որ ռազմավարական բոլոր փաստաթղթերը

Առաջարկվող փոփոխություններ ենթածրագիր 2-ում.

Քաղաքականության միջոցառումներ

(2022 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի հունիսի կեսը)

համապատասխանում են շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման պահանջներին:

2.2. Տարեկան եւ միջնաժամկետ բյուջեի պլանավորման եւ կլիմայական եւ գենդերային քաղաքականության թիրախների եւ արդյունքների միջեւ կապն ապահովելու համար՝

- i) Հայաստանի՝ Ազգային մակարդակով սահմանված ներդրումների (NDC) համար Ֆինանսավորման ռազմավարության եւ Ներդրումային պլանի առաջարկը շրջանառության մեջ է դրվել միջգերատեսչական վերանայման համար՝ Հայաստանում ԿՓ-ին հարմարվողականության եւ մեղմման ուղղությամբ պետական եւ մասնավոր մակարդակներում ջանքեր գործադրելով ԿՓ-ի ֆինանսավորման համաշխարհային աղբյուրների համակարգված մոբիլիզացման եւ թիրախավորման հարցում համապատասխան գերատեսչությունների շահագրգիռ անձանց լայն ներգրավվածությունը խթանելու նպատակով,
- ii) Կառավարությունը՝ ա) միջգերատեսչական վերանայման համար շրջանառության մեջ է դրել Աղետների ռիսկի կառավարման ազգային նոր օրենք եւ բ) հաստատել Աղետների ռիսկի կառավարման ազգային նոր ռազմավարություն եւ գործողությունների ծրագիր՝ հակասությունները վերացնելու եւ դրանք Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի գործողությունների ծրագրին համապատասխանեցնելու համար (այսինքն՝ ապահովել Հայաստանի պլանավորման՝ Փարիզի համաձայնագրի եւ Սենդայի գործողությունների ծրագրի նպատակների հետ համաձայնեցվածությունը եւ համապատասխանությունը),
- iii) Կառավարությունը սկսել է ԱՌՆ-ի եւ ԿՓ-ին հարմարվողականության եւ դրա մեղմմանն առնչվող բյուջետային ծրագրերի բաղադրիչների իրականացումը (առաջատար գերատեսչությունները՝ Ներքին գործերի նախարարություն եւ Շրջակա միջավայրի նախարարություն): Հաստատվել են նաև առնվազն երեք ոլորտներում (Զրային, Գյուղատնտեսություն, Առողջապահություն) ԿՓ-ին հարմարվողականության մանրամասն գործողությունների ծրագրերը եւ վերջնական տեսքի են բերվել եւս 2-ը (Զբոսաշրջություն, Էներգետիկա):
- iv) Լայնածավալ խորհրդակցություններից հետո Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը Կառավարության հաստատմանն է ներկայացրել 2024-2028 թվականների գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարական ծրագիրը՝ վեց հիմնական քաղաքականության առաջնահերթությունները գենդերային հավասարության քաղաքականությունների ապահովմանն ուղղված ջանքերում (կառավարման եւ որոշումների կայացման մակարդակների,

Առաջարկվող փոփոխություններ ենթածրագիր 2-ում.

Քաղաքականության միջոցառումներ

(2022 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի հունիսի կեսը)

սոցիալ-տնտեսական և աշխատանքային, կրթության և գիտության, առողջապահության, գենդերային հիմքով բռնության, կանանց/աղքիկների և ընտանեկան բռնության կանխարգելման և կլիմայի ոլորտներում) գործարկելու համար<sup>5</sup>:

2.3. Կառավարությունը՝

i) հաստատել և իրականացրել է՝

ա) Կառավարության՝ ՊՆԿ-ի մասին նոր որոշումը՝ իր պարտադիր պահանջների իրավական հիմքերն ամրապնդելու համար,

բ) մի շարք նոր թարմացված ՊՆԿ հրահանգներ՝ ԷՆ-ի միջոցով՝ գնահատման չափանիշների (Կլիմայի փոփոխության ոլորտում) ու քաղված դասերի ամբողջությունը հաշվի առնելու համար.

ii) Ֆինանսների նախարարության կողմից թողարկված բյուջետային շրջաբերականների միջոցով հրահանգել է ճյուղային բոլոր նախարարություններին (այդ թվում՝ զարգացման հարցերով գործընկերոջ կողմից ֆինանսավորվող ներդրումների մասով), որ այն (նոր) նախագծերը, որոնք գերազանցում են նվազագույն շեմը, պետք է անցնեն ՊՆԿ գործընթաց՝ հավանության արժանանալու, առաջնահերթությունների որոշման/գնահատման, ինչպես նաև Լերդրումային կոմիտեի կողմից հաստատման համար՝ նախքան ՄԺԾԾ-ում ներառվելը.

iii) քաղաքականության հետ կապված որոշում է կայացրել և հստակեցրել է ՊՆԿ բարեփոխումների իրականացման հետագա ուղին (օրինակ՝ Փոխվարչապետի գրության կամ Ֆինանսների նախարարի գրության միջոցով), այդ թվում՝

ա) ոչ հեռու անցյալում ՊՆԿ իրականացման հարցում ծագած խնդիրների ընդունումը,

բ) թերեւս անհրաժեշտ անցումային միջոցները<sup>6</sup>,

գ) որպես հավելված՝ ՊՆԿ (թարմացված) Ճանապարհային քարտեզը, որը ծառայելու է որպես ՊՆԿ բարեփոխումների կոնսոլիդացման համակարգման կողմնորոշիչ գործողությունների ծրագիր:

<sup>5</sup> Մշակվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ Եվրոպայի խորհրդի, ՄԱԿ-ի՝ Բնակչության հիմնադրամի և ԵՄ-ի փորձագիտական խմբի աջակցությամբ:

<sup>6</sup> Ապահովելով, որ մինչև որեւէ օրենսդրական փոփոխություն կատարելը և այն ուժի մեջ մտնելը ՊՆԿ-ն իրականացվում է բարեփոխումների առանցքային սկզբունքների խիստ պահպանմամբ և առանց նախկին խախտումներից որեւէ մեկի կատարման, մինչև Ֆինանսների նախարարությունը պատրաստ լինի աջակցելու համապատասխանության վերահսկողությանն ուղղված ջանքերը:

**Առաջարկվող փոփոխություններ ենթածրագիր 2-ում.  
Քաղաքականության միջոցառումներ  
(2022 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի հունիսի կեսը)**

2.4

1) ՊՄԳ-ի վերաբերյալ բոլոր նոր ուղեցույցները, որոնք անհրաժեշտ են ՊՄԳ-ի ընթացակարգերի մասին որոշումն իրականացնելու համար, հաստատվել են ԷՆ-ի հրամաններով:

2) Հարկաբյուջետային կայունություն, թափանցիկություն ապահովելու եւ արտաբյուջետային լուծումների նկատմամբ հնարավոր կանխակալ վերաբերմունքի հնարավորությունները նվազեցնելու համար ՖՆ-ն մշակել եւ (միջգերատեսչական մակարդակով) շրջանառության մեջ է դրել ռազմավարական հայեցակարգ՝ նորմավորելու համար (հաշվետվությունների ներկայացման եւ հաշվապահական հաշվառման առումով) ՊՄԳ-ի հետ կապված հարկաբյուջետային պարտավորությունների նկատմամբ մոտեցումը (հնարավոր դարձնելու համար հարկաբյուջետային կանոնների հետ հետագա կապը)՝ մեթոդական տարբեր առաջարկներ դիտարկելու միջոցով:

**2.5** ՖՆ-ն, հիմնվելով Աղետների ռիսկի ֆինանսավորման համար բարենպաստ միջավայրի/համատեքստի արագ գնահատման վրա (քաղաքականության, կանոնակարգման եւ ֆինանսավորման հարցերում առկա բացերի՝ բարձր մակարդակով հայտնաբերմամբ), ներկայացրել է (աղետներից) Ֆինանսական պաշտպանության պլանի վերաբերյալ առաջարկության ամփոփ հայեցակարգ եւ նախաձեռնել է խորհրդակցություններ ճյուղային նախարարությունների եւ այլ շահագրգիռ կողմերի հետ:

2.6. ՊՁ-ների ֆինանսական թափանցիկության բարելավման եւ կենտրոնացված հարկաբյուջետային մշտադիտարկման եւ օպերատիվ ցուցանիշների վերահսկողության հզորացման աշխատանքները սկսելու համար՝

- i) Կառավարությունը ՖՆ-ի միջոցով նախաձեռնել է ՊՁ-ների կողմից աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հրապարակման համար համապատասխանության մշտադիտարկման գործառույթների լրամշակումը (օրինակ՝ հաստատվել են առանձին նոր կորպորատիվ վեբ-պորտալի/գրանցամատյանի տեխնիկական պահանջները)<sup>1</sup>,
- ii) Ֆինանսների նախարարությունը միջգերատեսչական ուսումնասիրության համար շրջանառության մեջ է դրել ռազմավարական հայեցակարգի առաջարկ՝ ՊՁ-ների նոր սեփականության քաղաքականության համար՝ ա) Պետական գույքի կառավարման կոմիտեի եւ ՖՆ-ի երկակի դերերի (<ՌԿ, շահութաբաժինների հավաքագրում) միջև գործող ինստիտուցիոնալ համակարգը լավարկելու համար, բ) ֆինանսական տեղեկություններին ՖՆ-ի հասանելիությունը դյուրացնելու համար եւ գ) կատարողականի գնահատումը կատարողականի թիրախային ցուցանիշների հետ

Առաջարկվող փոփոխություններ ենթածրագիր 2-ում.

Քաղաքականության միջոցառումներ

(2022 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի հունիսի կեսը)

համապատասխանեցնելու համար:

- iii) Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից փորձական իրականացված պետական ձեռնարկությունների ամբողջականության եւ կոռուպցիոն ռիսկերի վերլուծության փորձարկումից հետո Արդարադատության նախարարությունը (եւ Հակակոռուպցիոն կոմիտեն) միջգերատեսչական ուսումնասիրության (եւ հանրային խորհրդակցությունների) համար մշակել եւ շրջանառության մեջ է դրել («Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» եւ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում) օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկների փաթեթ՝ ընդլայնելու համար Հակակոռուպցիոն կոմիտեի մանդատը եւ ՊԶ-ներում եւ պետական եւ համայնքային ոչ առետրային կազմակերպություններում (ՊՈԱԿ)<sup>7</sup> կոռուպցիոն ռիսկերի գնահատումը ներառելու եւ իրավասու մարմիններին հակակոռուպցիոն միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ տրամադրելու համար:

2.7. Հարկաբյուջետային անարդյունավետությունը նվազեցնելու եւ ներդրումների խթանման ուղղակի ձեւերով ազդեցությունն ընդլայնելու համար Կառավարությունը ՖՆ կայքում գտել է պետությանը պատկանող ձեռնարկությունների, բաժնեմասնակցային ֆոնդերի եւ այլ ֆինանսական ՊԶ-ների վերաբերյալ քաղաքականությունների համապարփակ ուսումնասիրություն եւ հատուկ Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի մասով հաստատել է Կառավարության նոր որոշում (համաձայն որի՝ Էկոնոմիկայի նախարարությունը հաստատել է Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի նոր կանոնադրությունը, իսկ Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդն այն ներկայացնում է Պետական ռեզիստր) եւ այլ քաղաքական որոշումներ՝ ապահովելու համար՝

- i. պարտադիր ռազմավարական մանդատ (եւ ոլորտի վրա շեշտադրում/ ներդրումային քաղաքականություններ), որով բացառվում է մասնավոր հատվածի դուրս մղումը, եւ ապահովվում է նրանց գոյության հիմնավորումը՝ արժեք/օգուտ հարաբերակցության տեսանկյունից (լրացվում է գործառնական ընթացակարգերով, որոնք լավարկում են

<sup>7</sup> Համաձայն օրենսդրական փոփոխությունների նախագծի՝ այս քայլով ապահովվելու է պետական մարմիններում, պետական եւ համայնքային ոչ առետրային կազմակերպություններում, պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում, Հայաստանի կողմից 50% եւ ավելի մասնաբաժին ունեցող առետրային կազմակերպություններում եւ մշակված հակակոռուպցիոն միջոցառումների, այդ թվում՝ բարեկեցության ծրագրերի իրականացումը մշտադիտարկող եւ իրավասու մարմիններին առաջարկություններ ներկայացնող համայնքներում կոռուպցիոն ռիսկերի գնահատման եւ կառավարման աշխատանքների համակարգումը: Այս գործողությունը նախատեսված է Հակակոռուպցիոն ռազմավարությամբ (Գործողություն 4.3):

Առաջարկվող փոփոխություններ ենթածրագիր 2-ում.

Քաղաքականության միջոցառումներ

(2022 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի հունիսի կեսը)

գործունեությունը բացառապես շուկայի թերությունների վերացման հիմքով),

- ii. պետության կողմից հատկացված միջոցների՝ Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի կողմից օգտագործման, գործառնությունների շրջանակի եւ կատարողական ցուցանիշների առումով թափանցիկություն (ներդնելով կատարողականի գնահատումներ),
- iii. կորպորատիվ կառավարման հիմնարար հայեցակետեր (այդ թվում՝ քաղաքականության եւ իրավական նորմերի վրա ներգործություն ունենալուց զերծ մնալու անհրաժեշտություն եւ այդ դեպքերի առնչությամբ պարտադիր հաշվետվությունների ներկայացում),
- iv. գործառնական քաղաքականություն/ ստանդարտ գործառնական ընթացակարգեր, որոնք լավարկում են գործունեությունը բացառապես շուկայի թերությունների վերացման հիմքով, եւ
- v. արտաքին ֆինանսական աուդիտին ներկայացվող հստակ պահանջներ,
- vi. Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդը փոխանցվել է սեփականության տնօրինման վերահսկողության եւ ԷՆ-ի կողմից քաղաքականության համակարգման, մինչդեռ Կառավարությունը դիտարկում էր Պետական գույքի կառավարման կոմիտեի միջոցով ակտիվների ամբողջական վաճառքի կամ լուծարման վերաբերյալ որոշումները (այսինքն՝ Կառավարությունն այժմ դիտարկում է Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի լուծարման կամ դրա ներդրումների շրջանակից դուրս գալու հնարավորությունը, եւ այդ նպատակով Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդը վերջերս փոխանցվել է Պետական գույքի կառավարման կոմիտեի<sup>8</sup> սեփականությանը):

2.8

1) ՊՄԳ-ի վերաբերյալ պայմանագրի վերանայումը (մինչև ՊՄԳ-ի մասին օրենքը՝ առկա ՊՄԳ-ների, այսինքն՝ «Ժառանգաբար փոխանցված ՊՄԳ-ների» դեպքում) կարգավորող թափանցիկ շրջանակ ստեղծելու եւ այլ երկարաժամկետ պայմանագրերում փոփոխություններ սահմանելու համար Ֆինանսների նախարարությունն անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները ներկայացրել է միջգերատեսչական ուսումնասիրության (օրինակ՝ Բյուջետային

<sup>8</sup> [Եթե պարզվի, որ լուծարման վերաբերյալ որոշումն անհրաժեշտ է, ապա Կառավարությունն ավելի կուժեղացնի հաշվետվողականությունն ու կառավարումը՝ Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի գործող որոշմանը համապատասխան]

Առաջարկվող փոփոխություններ ենթածրագիր 2-ում.

Քաղաքականության միջոցառումներ

(2022 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի հունիսի կեսը)

համակարգի մասին օրենք):

- 1) Որպես միջանկյալ ժամանակավոր միջոց՝ Փոխվարչապետը հրապարակել է հրահանգ, որով հաստատվում է «ժառանգաբար փոխանցված ՊՄԳ-ների» (յուրաքանչյուր հատվածի համար քաղաքականություն մշակող մարմնի հետ միասին) վերանայման վերաբերյալ ցանկացած քննարկման մեջ Ֆինանսների նախարարության առանցքային դերը եւ հարկաբյուջետային հետեւանքների պատշաճ վերլուծություն իրականացնելու պահանջը ցանկացած քննարկման ժամանակ, որը կարող է հանգեցնել վերանայման:
- 2) Խորհրդարանը հաստատել է այն օրենսդրական փոփոխությունները, որոնք Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատին իրավունք են տալիս իրականացնելու աուդիտորական գործողություններ՝ «ժառանգաբար փոխանցված» եւ նոր բոլոր ՊՄԳ-ների/ԷԳՊ-ների եւ ենթակառուցվածքի սպասարկման ցանկացած այլ պայմանագրերի մասով:

2.9.2021-2022 թվականներից 2023-2024 թվականների հարկաբյուջետային ռիսկերի հրապարակումներում (ներառյալ կլիմայական ռիսկերը) կատարվող թարմացումներին զուգահեռ ՖՆ-ի՝ ՀՌԿ ուղղությամբ պարտավորությունների եւ գործառույթների իրավական ամրագրումն ապահովելու եւ դրա համակարգային կարելությունն ամրապնդելու համար՝

- i. ՖՆ-ն հաստատել է ՀՌԿ կանոնադրության փոփոխությունները, որպեսզի այն ստանա պետական ձեռնարկությունների ֆինանսական մշտադիտարկման գործառույթային պարտականություններ.
- ii. Ֆինանսների նախարարությունն ակտիվացրել է «հատուկ» ՀՌԿ մեղմացման գործառույթը՝ այդ մասին պարբերաբար զեկուցելով Փոխվարչապետի գրասենյակին եւ առաջարկելով մեղմացնող գործողություններ՝ ՊՄԳ/ԷԳՊ-ներին, վարկային երաշխիքներին եւ պետական ձեռնարկություններին վերաբերող ռիսկային իրադարձությունների վերաբերյալ.
- iii. Ֆինանսների նախարարությունը միջգերատեսչական ուսումնասիրության համար շրջանառության մեջ է դրել օրենսդրական փոփոխությունների առաջարկների նախագծերը, որոնք, ի թիվս այլնի, Կառավարությանը տալիս են իրավասություն՝
  - ա) ստեղծելու Հատուկ հարկաբյուջետային ռիսկերի կառավարման խորհուրդ (սա Հատուկ հարկաբյուջետային ռիսկերի նվազեցման վերաբերյալ առաջարկությունների զեկուցման ենթագործառույթին ներկայացվող պահանջ է),

Առաջարկվող փոփոխություններ ենթածրագիր 2-ում.

Քաղաքականության միջոցառումներ

(2022 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի հունիսի կեսը)

բ) սահմանելու (Հատուկ հարկաբյուջետային ռիսկերի հարցերով խորհրդի միջոցով) հարկաբյուջետային ռիսկերի կառավարման համար անձնակազմի վկայագրման պահանջները, եւ

գ) ստեղծելու միջգերատեսչական մեխանիզմ՝ լիարժեք գործող ինտեգրված «հատուկ» ՀՌԿ շրջանակի տեղեկատվական հոսքերը հիմնավորելու համար, իսկ

iv. Ֆինանսների նախարարությունն արձակել է նախարարի հրաման՝ բյուջետային վարկերի եւ երաշխիքների հարցումները կարգավորելու ընթացակարգով:

2.10

i) Կառավարությունը (ՖՆ որոշման հաստատմամբ) մեկնարկել է Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի էլեկտրոնային գնումների մոդուլի մրցույթը.

ii) Կառավարությունն իրականացրել է Գնումների ոլորտում բարեփոխումների գործողությունների ծրագրի առանցքային քայլերը, այդ թվում՝

ա) (Կառավարության որոշման մեջ) փոփոխությունների հաստատում՝ գնումների հարցերով պատասխանատու մարմինների կողմից ոչ մրցակցային գնումների օգտագործման հարցում ուղղակի հաշվետվողականություն սահմանելու համար (դրանով եւ էապես նվազեցնելով ոչ մրցակցային գնումների կիրառումը),

բ) ազգային եւ ենթաազգային գնումների գործընթացների պայմանագրային մշտադիտարկմանը ՀԿ-ների հասանելիության հեշտացում,

